

Հայաստանի ազատագրված տարածքը
և
Արցախի հիմնախնդիրը

Գիրքը տպագրվում է
լուսանջեղեսարևակ ազգային բարերար
ՎԱՀԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ մեկենասությամբ



ՀԱՅՈՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
PAN-ARMENIAN COMMONWEALTH

**THE LIBERATED TERRITORY OF ARMENIA
AND
THE SETTLEMENT OF THE NAGORNO-KARABAKH
CONFLICT**

SELECTED STUDIES

Compiled and Edited
With an Introduction by
Armen Ayvazyan

**ОСВОБОЖДЕННАЯ ТЕРРИТОРИЯ АРМЕНИИ
И
УРЕГУЛИРОВАНИЕ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА**

СБОРНИК СТАТЕЙ И МАТЕРИАЛОВ

Составитель и редактор
Армен Айвазян

YEREVAN 2006 ЕРЕВАН

«ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ»

մատենաշար

I

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔԸ
ԵՎ
ԱՐՑԱԽԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԵՎ ՓԱՏԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ
ԸՆՏՐԱՆԻ

Կազմեց և խմբագրեց
Արմեն Այվազյանը

ԵՐԵՎԱՆ 2006

ՀՏԴ 323 (479.25) : 325
ԳՄԴ 66.3 (23)
Հ 247

Հ 247 Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը / ժողովածու, - Եր.- Լուսակն, 2006 թ., 372 էջ:

Գլխավոր խմբագիր՝
Ա. Այվազյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

Հ. Արզումանյան, Ս. Կարապետյան, Ս. Մինասյան

1992-1994 թթ. հայոց ազատագրած տարածքն արդի Հայաստանի աշխարհաքաղաքական կարևորության ու միջազգային հեղինակության ծանրակշիռ զրավակակնն է, հայկական զույգ պետությունների ռազմական, ջրային, մթերային, էներգետիկ, հոգեբանական, ապագայում նաև ժողովրդագրական անվտանգության նախապայմանը: Ազատագրված տարածքը հայոց հայրենիքի մասնիկն է՝ իր պատմությամբ, մշակույթով ու բնությամբ, հայի պատմականորեն ուղեհարված արժանապատվության ու վնասված ներաշխարհի շտկման և ապաքինման միջոցը, Հայաստան հասկացության ճիշտ ընկալման հանգամանքը, վերջապես՝ թուրքական և ադրբեջանական ցեղասպանությունների դիմաց հայոց արյամբ ցայտօր նվաճած արդար, թեկուզև նվազագույն փոխհատուցումը:

Ճիշտ այս դրույթներն են փաստարկույմ և հիմնավորույմ ներկա ժողովածուի թվով երեսուն հեղինակները՝ անվտանգության գծով փորձագետներ, քաղաքագետներ, պատմաբաններ, իրավաբաններ, հոգեբաններ ու մշակութաբաններ:

Հասցեագրված է ՀՀ պետական պաշտոնյաներին, քաղաքական գործիչներին, պատգամավորներին, հայ ուսանողությանը, ինչպես նաև հասարակության լայն շրջաններին:

Հ $\frac{0803010413}{0150 (01) 2006}$ 2006 թ. ԳՄԴ 66.3 (23)

ISBN 99941-48-19-2

© Հայոց համաշխարհային գործակցություն, 2006 թ.

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 9

Ա. ՀԱՅՈՑ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ: ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ:

ԱՐՄԵՆ ԱԹՎԱԶՑԱՆ

2. ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՌՈՉՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐ-
ՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԱՔՍԻՈՍՆԵՐԸ 27

Ա. Ա. ՆԱԼԶԱԶՑԱՆ

3. ՍՊԱՍՎՈՂ ԶԻՋՈՒՄՆԵՐ ԵՎ ՎՏԱՆԳ ԱԶԳԱՅԻՆ
ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 45

РАЧЬЯ АРЗУМАНЯН

4. ПРОБЛЕМЫ ОБЩЕСТВЕННОГО ДИАЛОГА И
ВЗАИМООТНОШЕНИЙ В НАГОРНО-КАРАБАХСКОМ
КОНФЛИКТЕ 54

КАРЭН АЙВАЗЯН (Москва)

5. АЗЕРБАЙДЖАНСКИЕ МАНИПУЛЯЦИИ АРМЯНСКИМ
ОБЩЕСТВЕННЫМ МНЕНИЕМ ОСТАЮТСЯ БЕЗ ВНИМАНИЯ 59

АНДРЕЙ АРЕШЕВ (Москва)

6. КТО ЕСТЬ КТО В МЕЖДУНАРОДНОЙ КРИЗИСНОЙ ГРУППЕ?
Насколько нейтральна и “неправительственна” эта группа? 63

АЛЕКСАНДР МАНАСЯН

7. КАРАБАХСКИЙ КОНФЛИКТ.
ТЕРРИТОРИАЛЬНЫЕ АСПЕКТЫ ПРОБЛЕМЫ В ЕГО
ИНФОРМАЦИОННОМ ОБРАЗЕ 70

Բ. ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ:

ԱՐՄԵՆ ԱԹՎԱԶՑԱՆ

8. ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԶԻՐԱԳՈՐԾՄԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 83

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ

- 9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ** 92

ՀԱԹԿ ԱՍԱՏՐԹԱՆ

- 10. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿԻ ԲՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ** 97

ЛЕО

- 11. О ПУТЯХ В АРМЕНИИ И ОБ ОБОРОНИТЕЛЬНЫХ СРЕДСТВАХ ЭТОЙ СТРАНЫ (исторический обзор)** 106

АЛВАРД ГАЗИЯН, КИМ КАГРАМАНЯН

- 12. ТРЕБУЮТСЯ НОВЫЕ ПОДХОДЫ**
Армения должна бороться за восстановление своей
территориальной целостности 119

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿԹԱՆ

- 13. ԳԵՏԱԾԵՆ ԲԱՆԱԼՈՒՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ ԾԵՆՔԸ** 125

Գ. ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ԱՐՄԵՆ ԱԹՎԱԶԹԱՆ

- 14. ԴԱՐԱԲԱԴՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ** 133

СЕРГЕЙ МИНАСЯН

- 15. НИЗИННЫЙ КАРАБАХ**
НУЖЕН ДЛЯ БЕЗОПАСНОСТИ НКР 160

ДАВИД БАБАЯН

- 16. ПРОБЛЕМА ВОДНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И АРЦАХА В КОНТЕКСТЕ УРЕГУЛИРОВАНИЯ НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА** 166

АНДРЕЙ АРЕШЕВ (Москва)

КАРЕН ВРГАНЕСЯН (Ереван)

- 17. МИРОТВОРЧЕСКИЕ ИГРЫ ВОКРУТ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА** 183

РАЧЬЯ АРЗУМАНЯН

18. КАРАБАХСКИЙ КОНФЛИКТ В “ГЛОБАЛЬНОМ ОМЛЕТЕ” 192

СЕРГЕЙ МИНАСЯН

**19. ПАЦИФИСТСКИЕ ИЛЛЮЗИИ В АРМЕНИИ И
“БАЛАНС УТРОЗ” В КАРАБАХСКОМ КОНФЛИКТЕ** 197

ИГОРЬ МУРАДЯН

**20. КАРАБАХ - НЕ ИНСТРУМЕНТАРИЙ
ДЛЯ РЕШЕНИЯ ПРОБЛЕМ ЗАПАДА** 208

АРГАМ АРАНЯН (Канада)

**21. ЭЙФОРИЯ ОТ МЫЛЬНОГО ПУЗЫРЯ:
В ЧЕМ РАЗНИЦА МЕЖДУ УРЕГУЛИРОВАНИЕМ
И РЕШЕНИЕМ АРЦАХСКОГО КОНФЛИКТА?** 218

АРСЕН ЯЛАНУЗЯН

22. ФАКТОР АРМИИ 229

РАЧЬЯ АРЗУМАНЯН

**23. СТРАТЕГИЧЕСКИЕ ПАРАМЕТРЫ УРЕГУЛИРОВАНИЯ
НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА** 234

ЗОРИЙ БАЛАЯН

**24. КАРАБАХ: Любый непродуманный шаг
приведет к новому кровопролитию** 241

Դ. ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔ. ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՍՐԹԱՆ**

**25. ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՐՑԸ
ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ** 257

Ս. Մ. МИНАСЯН, Մ. Վ. АГАДЖАՆՅԱՆ

**26. ГУМАНИТАРНОЕ ИЗМЕРЕНИЕ
КАРАБАХСКОГО КОНФЛИКТА** 262

ԱՐԻՏ ԿԱԶԻՆՅԱՆ

27. ОККУПАЦИЯ: КИЛОМЕТР ЗА КИЛОМЕТРОМ 275

АРИС КАЗИНЯН
28. В ПОИСКАХ ИДЕОЛОГИИ “БЕЗОПАСНОСТИ” 284

КИМ КАГРАМАНЯН
29. НКР ДАВНО УЖЕ НЕ НКАО 292

Ե. ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔ. ՎԵՐԱՀԱՅԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԳԵՎՈՐԳ ՅԱԶԸՃՅԱՆ
30. ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ
ՏԱՐԱԾՔՆԵՐ: ՀԱՅԵՐ, ՎԵՐԱԴԱՐՁԵՔ ՀԱՅՐԵՆԻՔ: 299

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԱՆՅԱՆ
31. ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՀՈՂԸ ՅՈՒՐԱՅՄԱՆ ԿԱՐԻՔ Է ԶԳՈՒՄ 320

Ա. ԴԱՐԱՂԹԱՆ, Մ. ԳԱՐԻԵԼԹԱՆ
32. ԼՂՀ ԵՎ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ
ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ 326

КИМ КАГРАМАНЯН
33. У БОЛЬШИНСТВА - МНОЖЕСТВО СКОТА,
БОГАТЫЕ САДЫ И ОГОРОДЫ 336

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
34. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ
ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ԾՐՋԱՆՆԵՐՈՒՄ 340

ՅՈՒՑԱԿ ազատագրված տարածքում հաշվառված
հայկական հուշարձանների ընտրանու 346

ՀԱՄԼԵՑ ՊԵՏՐՈՍԹԱՆ, ԺՈՐԵՍ ԽԱԶԱՏՐԹԱՆ,
ԱՇՈՏ ՓԻԼԻՊՈՍԹԱՆ, ՎԱՐԴԳԵՍ ՍԱՖԱՐԹԱՆ
35. ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԵՎ ԾՐՋԱԿԱՅՔԻ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 361

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 366

ՔԱՐՏԵԶ «ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ԱՐՑԱԽ» (ներդիր)

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1992-1994 թթ. Հայկական զինուժն ազատագրեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շուրջն ընկած բնիկ Հայկական տարածքի մի մասը՝ նախկին Ադրբեջանի ԽՍՀ-ի յոթ շրջանները, որոնք ավելի քան մեկ տասնամյակ է, մասամբ կամ ամբողջությամբ, գտնվում են Հայոց վերահսկողության տակ:

Այս տարածքի ազատագրումը մեզանում ընդունված է դիտել իբրև պաճի ռազմական անհրաժեշտություն՝ ադրբեջանական կրակակետերի ճնշման միակ հնարավոր միջոց: Միանգամայն ճիշտ լինելով հանդերձ և արտացոլելով Արցախյան պատերազմի դաշտային իրավիճակը՝ այսպիսի տեսակետը թերի է մի քանի առումով: Ժամանակագրորեն այն արտահայտում է 1990-ական թթ. սկզբի Հայաստանի ղեկավարության քաղաքական մտածողությունը, որը մերժում էր ճանաչել Արցախի հիմնախնդրի կարևոր մյուս բաղադրիչները, այդ թվում՝ աչք փակում տեսանելի հեռանկարում հայ-թուրք-ադրբեջանական ռազմավարական շահերի անհամատեղելիության վրա, պատմության դերակատարումը քաղաքականության մեջ համարում անախրոնիզմ՝ անարժեք մի մնացուկ, արևմտյան զարգացած պետություններին միամտորեն ընդունում որպես անաչառ միջնորդ և անվտանգության ամենակարող երաշխավոր, միջազգային քաղաքական համակարգի զարգացումն էլ ընկալում էր դեպի «համընդհանուր բարօրություն և ազատություն» տանող միազիծ ու վերընթաց մի շարժում:

Այս տեսակետը մեծապես խարխուլ էր ու խոցելի, քանի որ ազատագրված տարածքի հիմնախնդիրը դիտում էր Հայկական Հարցից կտրված ու մեկուսացված: Իսկ Հայկական Հարցի էությունը, ինչպես նշել ենք զետեղված նյութերից մեկում, «հայ ժողովրդի իր հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում անկախ և ազատ ապրելու քաղաքական ու տարածքային պայմանների ստեղծման մեջ է: Հայկական Հարցի լուծումը կարող է լինել միայն մեկը՝ հայոց պետականության վերականգնում, եթե ոչ ամ-

բողջ Հայաստանում (350,000 քո կմ), ապա առնվազն նրա այնպիսի ընդարձակ մի հողատարածքում, որտեղ հնարավոր է հայոց քաղաքակրթության երկարատև անվտանգ գոյությունն ու զարգացումը: ...Վերջին մեկուկես տասնամյակի անկախ գոյության փորձը փաստում է, որ Հայաստանը կարողացել է գոյատևել՝ 42,000 քո կիլոմետրանոց բնական որոշակի սահմաններ ունեցող տարածքի վրա վերահսկողություն հաստատելու շնորհիվ միայն, ներառելով Հայաստանի Հանրապետությունն ու Արցախը՝ ազատագրված տարածքներով հանդերձ: Սա՛ է Հայաստանի անվտանգությունն ապահովող այն նվազագույն հողակտորը, որից պահաս տարածքում հայոց պետականության գոյությունն այլևս կարող է անհնարին լինել»:

Այսպիսով, վաղուց է արդեն, ինչ ազատագրված տարածքի հիմնախնդիրը պետք է դիտել խորքային հայացքով՝ Հայկական հարցի քաղաքական պատմության, համաշխարհային ու տարածաշրջանային համակարգերում վերջին տասնամյակում գրանցված և առաջիկայում գրանցվելիք տեղաշարժերի համալիր վերլուծության մեջ ու կանխատեսմամբ:

Հայ քաղաքական մտքի ընդհանուր թուլությունը, Հայկական հարցի բովանդակության թերի մշակվածությունը և օտար ազդեցություններն էին պատճառը, որ սկզբում վերոհիշյալ յոթ շրջաններն անվանվեցին «բուֆերային գոտի» և նույնիսկ «գրավված տարածքներ»: Հետագայում այս վերջին անընդունելի անվանումն աստիճանաբար դուրս մղվեց (ցավոք, դեռևս ոչ ամբողջովին) «ազատագրված տարածքներ» ստույգ, բայց և փոքր-ինչ առաձգական տերմինով: Այնինչ, խոսքը վերաբերում է հողերին, որոնք գտնվում են հայոց հայրենիք Հայաստան աշխարհում, և էական չէ, դրանք Հայաստանի Հանրապետության^ն, թե՞ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռազմաքաղաքական վերահսկողության տակ են, քանզի Հայաստան է և՛ ՀՀ-ն, և՛ ԼՂՀ-ն, և՛ ազատագրված տարածքը: Ուրեմն, ճիշտ մոտեցման դեպքում «ազատագրված տարածքները» դառնում են «Հայաստանի՝ ազատագրված տարածք»՝ իր ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և մշակութային յուրահատկությունները հայրենիքի ամբողջական մի հողաբաժին, որը մասնատել-օտարելը կամ նույնիսկ մասնատելի-օտարելի համարելը Հայաստանի անվտանգության համար հղի է

ծանրագույն հետևանքներով:

Ազատագրված տարածքը արդի Հայաստանի աշխարհաքաղաքական կարևորություն ու միջազգային հեղինակություն ծանրակշիռ գրավականն է, հայկական զույգ պետությունների ռազմական, ջրային, մթերային, էներգետիկ, հոգեբանական, ապագայում նաև՝ ժողովրդագրական անվտանգության նախապայմանը: Ազատագրված տարածքը հայոց հայրենիքի մասնիկն է՝ իր պատմությունամբ, մշակույթով և բնությունամբ, հայի պատմականորեն ունահարված արժանապատվության ու վնասված ներաշխարհի շտկման և ապաքինման միջոցը, Հայաստան հասկացության ճիշտ ընկալման հանգամանքը, վերջապես՝ թուրքական և ադրբեջանական ցեղասպանությունների դիմաց հայոց արյամբ ցայտօր նվաճած արդար, թեկուզև նվազագույն փոխհատուցումը:

Ճիշտ այս դրույթներն են հիմնավորում և փաստարկում ներկա ժողովածուի հեղինակները՝ անվտանգության գծով փորձագետներ, քաղաքագետներ, պատմաբաններ, իրավաբաններ, հոգեբաններ ու մշակութաբաններ:

* * *

Ժողովածուի շտապ ստեղծումը մասամբ պայմանավորված է 2005 թ. վերջին 2006 թ. սկզբին սաստկացած լուրերով, ըստ որոնց Հայաստանը և Ադրբեջանը պատրաստվում են ստորագրել մեկ-երկու էջանոց մի նախնական փաստաթուղթ՝ արցախյան հակամարտության կարգավորման հիմնական սկզբունքների մասին: Մամուլում հայտնված տեղեկատվության «արտահոսքերից», հայ, ադրբեջանցի և օտարերկրյա բարձրաստիճան դիվանագետների հայտարարություններից և փորձագիտական մեկնաբանություններից պարզ ուրվագծվում են նաև բանակցություններում քննարկվող հետևյալ սկզբունքները. կարգավորման առաջին փուլում հայկական զորքերը դուրս են բերվում ազատագրված տարածքից, բացի Քարվաճառի (Քելբաջար) և Քաշաթաղի (Լաչին) շրջաններից, տարածաշրջան են մտցվում միջազգային խաղաղապահ զորքեր, այդ տարածքում վերաբնակեցվում են ադրբեջանցիներ: Կարգավորման երկրորդ փուլում՝ Քարվաճառի և Քաշաթաղի շրջանները աստիճանաբար դրվում են միջազգային խաղաղա-

պահանքերի վերահսկողություն տակ, այդ տարածքը, ինչպես նաև Շուշին նույնպես վերաբնակեցվում են ադրբեջանցիներով, 10-15 տարի անց Արցախում և հնարավոր է Ադրբեջանի որոշ տարածքներում անցկացվում է հանրաքվե, որն էլ որոշում է Արցախի վերջնական կարգավիճակը¹:

Հակամարտությունը ծանոթ յուրաքանչյուր վերլուծաբան կարող է վկայել, որ սա, փաստորեն, տակավին 1997 թ. հայկական կողմի մերժած հին «փուլային տարբերակն» է, որը լրացվել է ընդամենը մեկ տարրով՝ հանրաքվե անցկացնելու խոստովումով: Ժողովածուում գետեղված նյութերի մի մասը (բաժին Գ-ում) նվիրված է «կարգավորման» այս անհեթեթորեն վտանգավոր տարբերակի մանրամասն փորձագիտական քննադատությունը, ուստի ներածություն մեջ այդ խնդիրները մանրամասն արծարծելու հարկ չկա: Փոխարենը, զննենք իրավիճակն ընդհանուր հայացքով:

Հայկական հասարակություն մեջ ընթացիկ բանակցությունների վերաբերյալ շրջանառվում է հիմնականում երկու տեսակետ, որոնք պայմանականորեն կարելի է անվանել «կապիտուլյացիայի» (կամ հոռետեսական) և «դիվանագիտական խաղի» (կամ «լավատեսական») սցենարներ:

Ըստ առաջին՝ հոռետեսական սցենարի, Հայաստանի ղեկավարությունը, ներքին և արտաքին քաղաքականություն մեջ բախվելով անլուծելի խնդիրների, խոցելի լինելով արտաքին ճնշումների առջև, այդուհանդերձ, ձգտելու է պահպանել իշխանությունը նաև հետագայում: Արևմուտքի ճնշումներին չենթարկվելու, մասնավորապես «գունավոր հեղափոխություններից» խուսափելու նպատակով, վարչակարգը պատրաստվում է հանձնել Հայաստանի ազատագրված տարածքի մի մասը:

Ըստ երկրորդ՝ «լավատեսական» սցենարի, Հայաստանի ղեկավարությունը վարում է նուրբ «դիվանագիտական խաղ», ընդամենն իմիտացնելով մեծ գիշումների գնալու իր պատրաստակամությունը, հուսալով այդպես ձեռք բերել արևմուտքի բարյացակամությունը, վերարտադրել ինքն իրեն հաջորդ ընտրություններում, սակայն այնուհետև տարբեր առիթներով չկատարել խոստացված գիշումները, այսինքն՝ զորքերը պահել այսօրվա դիրքերում: Այս սցենարի մեկ այլ տարատեսակի համաձայն, հայկական

կողմի հմուտ իմիտացիան կբերի նրան, որ համաձայնագիրը ստորագրելուց կհրաժարվի Ադրբեջանը:

Եթե մի կողմ դնենք առաջին սցենարի քննարկումը և ընդունենք, որ ներկայումս գործի է դրված երկրորդ՝ «լավատեսական» սցենարը (Թեև դրանում վստահ լինելու բավարար հիմքերը պակասում են), միևնույն է, այն նույնպես մեծապես վնասում է հայկական կողմի շահերին, որովհետև.

1. Հայաստանի առաջին պետական դեմքերի անունից «զիջումներ» կատարելու մշտատև քարոզումը վարակում է հայ հասարակությունը պարտվողական տրամադրություններով, հայրենիքի ու հայկական բանակի միջից դուրս մղում հաղթանակի ոգին, այն էլ՝ ադրբեջանական հավանական ագրեսիայի նախաշեմին: Միաժամանակ, Հայաստանի միջին մակարդակի պաշտոնեություն մեծ մասը, ինչպես նաև պետական կարիերայի ձգտող երիտասարդությունը, ամբողջովին հավատում են բյուրոկրատական բուրգի վերևում կանգնածների ասածին, նվիրվում նույն քարոզի տարածմանը, արդյունքում՝ ուժեղացնելով նման տրամադրությունները:
2. Երևանի՝ զիջումների գնալու երկարատև իմիտացիան (եթե դա իմիտացիա է) մի կողմից, և Բաքվի անզիջում դիրքորոշումը մյուս կողմից, ակամա համոզում և վարժեցնում են նաև ադրբեջանական հասարակական կարծիքը, ինչպես նաև միջազգային հանրությունն այն տեսակետում, որ հաջողության միակ ընդունելի տարբերակը հայկական զորքերի դուրս բերումն է ազատագրված տարածքից, այսինքն՝ կապիտուլյացիան:
3. Նման իմիտացիան սխալ ազդանշաններ է ուղարկում հակամարտության մեջ իբրև միջնորդ կամ երրորդ կողմ ներգրավված միջազգային խոշոր դերակատարներին՝ հայկական կողմի իրական դիրքորոշումների և պահանջների մասին: Անհնար է մշտապես «բլեֆ» անել տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական խաղի խոշոր մասնակիցներին, ինչպիսիք են ԱՄՆ-ն, Ռուսաստանը և Եվրոպական Միությունը: Այդպիսի «դիվանագիտական խաղը» բավա-

- կանին պարզունակ է և ենթակա բացահայտման՝ այն վարողի համար խիստ անցանկալի հետևանքներով:
4. Այդպիսի խաղը թուլացնում է հայկական կողմի բանակցա-յին դիրքերը, իջեցնելով դրանք ամենացածր մակարդակի, և, ընդհակառակը, բարձրացնելով բանակցություններում հակառակորդի պահանջների մակարդակը: Նմանատիպ իրավիճակ էր ստեղծվել նաև 1996-1997 թթ., որի մասին դեռևս այն ժամանակ գրված մեր հետևյալ տողերը ճիշտ ու ճիշտ վերաբերում են նաև ներկա կացությունը. «Ինչպես ցույց են տալիս բանակցությունների տեսությունն ու պրակտիկային նվիրված վերջին ուսումնասիրությունները, երբ բանակցող կողմերից մեկը (մեր դեպքում՝ Հայաստանը) բռնում է փափուկ, զիջողական կամ, ինչպես են անվանում «բարեկամական» դիրքորոշում (friendly bargaining), իսկ մյուսը (Ադրբեջանը)՝ խիստ կոշտ դիրքորոշում (hard bargaining), ապա բանակցությունների խաղը միշտ ընթանում է վերջինիս խոշոր առավելություններ և նախաձեռնություններ: Արդյունքում, կարող են ձեռք բերվել պայմանավորվածություններ, սակայն դրանք անխուսափելիորեն կլինեն հօգուտ կոշտ բանակցողի²: Ամենաէականն էլ այն է, որ այդպիսի պայմանավորվածությունները խնդիրը չեն լուծում և հետևանքը հաճախ լինում է հակամարտության վերաբռնկումը»³: Ծիշտ այսպիսի անբարեհաջող հարաբերակցություն ունեն Հայաստան-Ադրբեջան ընթացիկ բանակցությունները:

Բանն այն է, որ Արցախյան հակամարտության կարգավորումը կախված է ոչ այնքան ընդհանուր սկզբունքների ճշտումից, որքան մանրուքներ թվացող խնդիրներից: Նման հակամարտություններում կարևոր է ամեն ինչ՝ յուրաքանչյուր դետալ: Օրինակ՝ այն փաստը, թե բլրի այս թե այն կողմում է դրվելու հայկական կամ ադրբեջանական խրամատը, կարող է հակամարտության ճակատագրի մեջ խաղալ նույն դերը, ինչ, ասենք, իրավական ամենակարևոր հռչակվող փաստը՝ Արցախի ապագա իրավական կարգավիճակը⁴: Ավելին, մեր համոզմամբ, Արցախյան հակամարտության մեջ իրական ուժային գործոնները շատ ավելի մեծ

կարևորություն ունեն, քան զուտ իրավական խնդիրները: Որևէ իրավական փաստաթուղթ չի կարող հայկական կողմին տրամադրել այնպիսի անվտանգության երաշխիքներ, որոնք հավասարաթեք լինեն հողին ու տարածքին: Եթե նույնիսկ, լավագույն դեպքում, Արցախը ճանաչվի անկախ պետություն (թեև Բաքուն պարզ ու հստակ բազմիցս հայտարարել է, որ դրան երբեք համաձայնություն չի տա), այդպիսի ճանաչումը կլինի «թղթե» փաստաթուղթ: Մինչդեռ ազատագրված տարածքը թշնամուն գիջելուց հետո՝ Արցախը (ինչպես նաև Սյունիքը) հայտնվելու է ռազմականապես անպաշտպանունակ դրություն մեջ և Ադրբեջանի սանձազերծած կարճաժամկետ պատերազմի արդյունքում կարող է ոչնչացվել: Տարածքի հանձնումը ոչ թե բացառելու է պատերազմը, այլ նախապայմաններ տրամադրելու Ադրբեջանին՝ այն առավել նպաստավոր դիրքերից վերսկսելու համար:

Նման հավանականությունը մերժողների փաստարկը միակն է՝ իբր Արցախի և Հայաստանի անվտանգության մակարդակի իջեցումը, որ անխուսափելիորեն առաջանալու է ազատագրված տարածքը գիջելու արդյունքում, կփոխհատուցվի միջազգային երաշխիքներով՝ մասնավորապես տարածաշրջան մտցվելիք խաղաղապահ զինուժով:

Ներկա ժողովածուի հեղինակներից մի քանիսը (բաժին Գ.), վերլուծելով Արցախյան հակամարտության գոտում խաղաղապահներ տեղակայելու ծրագրային հանգամանքները, մասնավորապես՝ նրանց մանդատը, կառուցվածքը, հրամանատարության հնարավոր մոդելը, Ֆինանսական ապահովումը, վերջին տարիներին խաղաղապահության միջազգային փորձը, միաբերան եզրակացնում են, որ բազմազգ խաղաղապահ զինուժը բացարձակապես անվստահելի է լինելու և, ավելին, ինքն է մեծ վտանգ ներկայացնելու տարածաշրջանի խաղաղության համար:

Լրացուցիչ կարգով նշենք միջազգային խաղաղապահության մասին ևս մի քանի կարևոր փաստ, որոնք ժողովածուի մյուս նյութերում հիշատակված չեն: Այսօրվա պայմաններում խաղաղապահ զորք առաքելը բավականին ծախսատար խնդիր է: Ամերիկյան Միջազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (Institute of International Strategic Studies) 2003 թ. կատարած հաշվարկներով՝ Բոսնիայում յուրաքանչյուր խաղաղա-

պահանք արժեքն ունի էր շուրջ 250,000 ԱՄՆ դոլար⁵, այսինքն՝ նույնիսկ փոքր՝ 3000 թվաքանակ ունեցող արդյունավետ խաղաղապահ զորագունդը տարեկան արժեքն ունի էր շուրջ 750 միլիոն ԱՄՆ դոլար: Կարելի է պնդել, որ Արցախյան գոտում տեղակայվելիք զինուժին այդչափ գումար հայթայթելը կապված է գրեթե անհաղթահարելի բարդությունների հետ: Քանի՞ տարի և ո՞ր պետություններն են պատրաստ լինելու այդպիսի գումարներ տրամադրել:

Միջազգային խաղաղապահների հետ կապված սկանդալային պատմություններն ինքնին ցույց են տալիս, թե ինչպիսի դերակատարում կարող են ունենալ այդ զորքերը Արցախյան հակամարտության գոտում (այս մասին տե՛ս նաև ժողովածուիս էջ 142-156, 190, 203-204, 252-253, 288-289):

Ամենաթարմ մի նորություն համաձայն, 2005 թ. դեկտեմբերի 23-ին Ֆրանսիայում զինվորական տրիբունալը հետաքննություն է սկսել Ֆրանսիացի խաղաղապահների՝ 1994 թ. Ռուանդայում թուլթյունների դեմ իրականացված ցեղասպանության «մեղսակցություն» մասին: Մինչ այդ՝ 2005 թ. սկզբին, Ֆրանսիական քաղաքացիական հետաքննչական մի մարմին, բաղկացած լինելով փաստաբաններից, պատմաբաններից և մարդու իրավունքների խմբերի ղեկավարներից, հրապարակել էր մի զեկուցում, որում մեղադրում էր Ֆրանսիական զորքերին ոչ թե զոհերին, այլ հարձակվողներին օգնելու մեջ: Կենտրոնական մեղադրանքներից մեկի համաձայն Ֆրանսիացի խաղաղապահները թույլ էին տալիս ռուանդական բանակի և բրոնզային կազմավորումների անդամներին մտնել թուլթյունների պաշտպանության համար ստեղծված ճամբարները և այնտեղ կոտորել նրանց⁶:

2005 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ը կարգադրեց դուրս հանել Լիբանանում տեղակայված իր բազմազգ զինուժին (Interim Force in Lebanon-Unifil) ուղրաինական խաղաղապահ զորամիավորումը, որը ներգրավվել էր ՄԱԿ-ին պատկանող նավթի անօրինական վերավաճառքի մեջ⁷:

2005 թ. հունվարին ՄԱԿ-ի Ներքին հետաքննիչ ծառայություն (OIOS) հրատարակեց մի զեկուցում, որում մեղադրում էր Կոնգոյի ժողովրդավարական Հանրապետությունում տեղակայված

ՄԱԿ-ի խաղաղապահներին տարածված սեքսուալ բռնությունների մեջ, որոնք շարունակվում էին՝ ի հեճուկս բազմաթիվ բացահայտումների և հետաքննությունների: Խաղաղապահները մեղադրվում էին խմբակային բռնաբարությունների, 12 և 13 տարեկան երեխաներին ձվերով, կաթով և մի քանի դոլարով կաշառելու և անտառներում, դատարկ հողի վրա և մանգոյի ծառերի տակ նրանց պղծելու մեջ: Այդ հանցագործությունների մեջ ներգրավված էին Ֆրանսիացի, հարավ-աֆրիկացի, ուրուգվայցի, մարոկկացի, թունիսցի և նեպալցի «խաղաղապահները»: Ընդ որում, նույն զեկուլցի հեղինակներից մեկը նշել էր, որ որոշ զինվորականներ, խաղաղապահ առաքելություններից արտաքսվելուց հետո էլ, ընդմիջտ «սև ցուցակի» մեջ հայտնվելու փոխարեն, ստացել են ՄԱԿ-ի կառույցներում այլ աշխատանք⁸: Նմանօրինակ վարքագծի հավաստի հաղորդումներ են եղել նաև Արևելյան Թիմորում, Էրիթրեայի և Եթովպիայի սահմանին ծառայող խաղաղապահների մասին⁹:

Հիշեցնենք, որ Նիդերլանդների կառավարությունը նույնիսկ հրաժարական տվեց, երբ բացահայտվեց Բոսնիայում իր խաղաղապահ զորքի խայտառակ անգործությունը. 200 խաղաղապահներ մեկ փամփուշտ անգամ չէին արձակել Սրբերենիցայում 7,500 մահմեդական բոսնիացիների կոտորածը կանխելու համար¹⁰:

Պետք է հիշել նաև, որ խաղաղապահները հաճախ ոչինչ չեն կարողանում անել, երբ հակամարտող կողմերից որևէ մեկը, այս կամ այն ձևով, արգելում է նրանց գործունեությունը: Այդպիսի խիստ կաշկանդված վիճակում է քանիցս հայտնվել, օրինակ, Էրիթրեայի և Եթովպիայի սահմանի երկայնքով տեղակայված միջազգային խաղաղապահ զորքը (UNMEE)¹¹:

Սակայն Հայաստանի Հանրապետության և Արցախի անվտանգության միջազգային երաշխիքների (այդ թվում՝ խաղաղապահների) վստահելիություն խնդրի մասին կարելի է պատկերացում կազմել նաև, գննելով այն այլ կերպ ևս՝ մինչև այսօր Հայկական հարցի վերաբերյալ միջազգային համայնքի որդեգրած դիրքորոշումների տեսանկյունից: Իսկ դրանք ամենևին խոստումնալից չեն:

1. Հայոց ցեղասպանությունից ճանաչման, դատապարտման և պատժման հարցում միջազգային համայնքը մինչև օրս հս-

- տակ դիրքորոշում չունի: Առ այսօր ընդամենը 17 պետություն է ճանաչել ցեղասպանությունը, սակայն այդ ճանաչումներն «անատամ» փաստաթղթեր են՝ բոլորն էլ շրջանցում են պատասխանատվության և փոխհատուցման հարցերը, մեծ մասում չի նշված հայերի՝ իրենց հայրենիքում բնաջնջվելու փաստը, չի հիշատակված ոճրագործը, երբեմն փաստերը ներկայացված են սխալ ու գլխիվայր: Իսկ պետությունների մեծ մասը, այդ թվում Արցախին անվտանգություն երաշխիքներ խոստացող ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան, հրաժարվում են անգամ ճանաչել մարդկության պատմության մեջ այդ մեծագույն ոճրագործությունը:
2. Սումգայիթի և Բաքվի ջարդերի ճանաչման, դատապարտման և պատժման հարցերում միջազգային համայնքը նույնպես դրսևորեց հետևություններ չանելու յուրահատկություն և հիշողության արագ կորուստ:
 3. Թուրքիայում և Ադրբեջանում հայկական մշակույթի դեմ իրականացվող բնաջնջման քաղաքականության՝ «մշակութային ցեղասպանության» դատապարտման և պատժման հարցում միջազգային համայնքը «խուլ ու համր» ձևացավ (վերջին վառ օրինակներից է՝ Հին Ջուղայում խաչքարերի ջարդը և հայկական հուշարձանների նկատմամբ նմանատիպ այլ գործողությունները Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող ողջ տարածքում)¹²:
 4. Միջազգային համայնքը հարկ չհամարեց պատշաճ գնահատական տալ Բուդապեշտում ադրբեջանական (հնարավոր է, նաև թուրքական) հատուկ ծառայությունների կազմակերպած հայ սպայի վայրագ սպանությանը¹³ և Ադրբեջանում այն ողջունելուն:
 5. Միջազգային համայնքը որևէ լուրջ ճնշում չգործադրեց Հայոց ցեղասպանությունն իրագործած Թուրքիայի՝ Հայաստանի դեմ իրականացվող ցամաքային շրջափակումը դատապարտելու և պատժելու ուղղությամբ:
 6. Միջազգային համայնքը անտարբերություն է դրսևորում նաև Ջավախքի հայության ազգային և մարդկային իրավունքները ոտնահարող վրացական իշխանություններին դատապարտելու հարցում:

7. Միջազգային համայնքը երբևէ ցանկություն չի ունեցել ժխտելու և դատապարտելու Հայոց պատմության և մշակույթի դեմ թուրք և ադրբեջանցի կեղծարարների ձեռնարկած ազդեցիկությունը:

Այս ետնախորքում միանգամայն պարզ է դառնում, որ միջազգային երաշխիքները Հայկական հարցի Արցախյան հատվածում ևս ի սկզբանե սնանկ են ու մեռելածին: Այս իրողությունը մեծ ցանկության դեպքում միայն կարելի է չնկատել:

Առավել անհեթեթ է Ադրբեջանի հետ զիջումների մասին խոսել պատմական հենց այս պահին, երբ Հայաստանի, Արցախի և հայրենիքի համար Բաքվի պետական քաղաքականությունը կառուցված է ֆաշիստական և ռասիստական «լավագույն» ավանդույթների ծայրահեղ դրսևորումներով՝ հայ ժողովրդի, հայկական մշակույթի և յուրաքանչյուր հայի նկատմամբ պետականորեն հրահրվող թշնամանքի հիման վրա, երբ Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաները բացեիբաց հայտարարում են Հայաստանն «աշխարհի քարտեզի վրայից ջնջելու» ծրագրերի մասին, երբ հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը պետական պատվերով արժանանում են համընդհանուր կեղծման և աղավաղման, իսկ պատմական Հայաստանի այն տարածքում, որը գտնվում է Ադրբեջանի տիրապետության տակ, պետականորեն ծրագրվում և իրականացվում է հայկական մշակութային շերտի ոչնչացումը:

Այսպիսի իրավիճակում հայկական կողմի՝ բանակցություններ վարելու ռազմավարությունն արմատական վերանայման կարիք ունի: Առհասարակ, բանակցություններ վարում են այն ժամանակ, երբ չկա պատերազմ և կողմերը գերծ են մնում բացահայտ հարձակողական գործողություններից: Մինչդեռ Ադրբեջանի քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության, Արցախի և առհասարակ հայ ժողովրդի նկատմամբ ունի ոչ միայն հարձակողական բնույթ, այլև բացահայտ ցեղասպանական նպատակադրումներ, որոնց ցցուն արտահայտությունն էին, մասնավորապես, Բուդապեշտում երիտասարդ հայ սպայի՝ ազգային հողի վրա իրականացված սպանությունը և Հին Ջուղայում հայոց խաչքարերի եղեռնը: Թշնամու ստեղծած նման իրավիճակները պետք է առավելագույնս օգտագործվեն՝ ուղղելու համար դեռևս 1992 թ.՝ բանակցային գործընթացի սկզբում հայկական դիվանա-

գլխուղթյան որդեգրած սխալ դիրքորոշումները, որոնք հավերժական համարել չի կարելի:

Մասնավորապես, թշնամական վերոհիշյալ գործողություններից հետո Երևանի միակ ճիշտ քայլը կլինե՞ր Բաքվի հետ բանակցային գործընթացն անորոշ ժամանակով ընդհատելը և ի լուր աշխարհի համապատասխան բացատրություններով հանդես գալը, ինչը միանգամայն կընկալեին և՛ միջազգային հանրությունը, և՛ բոլոր միջնորդներն ու երրորդ կողմերը: Այդ քայլով Երևանը նաև արդյունավետորեն կճեղքեր Ադրբեյջանի ցեղասպանական քաղաքականության շուրջը պահպանվող տեղեկատվական շրջափակումը: Բայց Երևանն այդ քայլին չգնաց և եղեռնագործի հետ «գիջումների» շուրջը բանակցությունները շարունակվում են, կարծես, ոչինչ էլ չի պատահել:

Վերադառնալով հակամարտության կարգավորման սկզբունքների մասին այն փաստաթղթին, որն այժմ դրված է բանակցությունների սեղանին, պետք է ասել, որ անգամ ստորագրվելու դեպքում, այն (պայմանականորեն անվանենք «փոքր համաձայնագիր»), միևնույն է, չի կարող իրագործվել մինչև կնքվի բոլոր մանրուքները համաձայնեցնող «մեծ համաձայնագիրը»: Իսկ վերջինս, ըստ երևույթին, դեռ երկար ժամանակ չի կարող կնքվել ու վավերացվել: Դրան խանգարելու են «մանրուքներում» համաձայնության գալու դժվարությունները, Հայաստանի և Ադրբեյջանի ներքին քաղաքական զարգացումները, մասնավորապես՝ ընդդիմություն-իշխանություն հարաբերությունների մակարդակում, որոշ մեծ և տարածաշրջանային տերությունների միջամտությունները, հնարավոր տարատեսակ պրովոկացիաները, Արցախի դեկավարության ու բնակչության, ինչպես նաև Հայկական բանակի, վետերան ազատամարտիկների և հայ հասարակության հայրենասիրական հատվածի դիմադրությունը: Այսպիսով, «մեծ համաձայնագրի» հարցը մնալու է առկախ, սակայն «փոքր համաձայնագիրը», եթե այն ստորագրվի, դամոկլյան սրի պես կախված է լինելու Հայաստանի անվտանգության գլխին՝ միջազգային ասպարեզում վավերացնելով Ադրբեյջանի պահանջները և տեղիք տալով անցանկալի արտաքին նորանոր ճնշումների: Հետևաբար, «փոքր համաձայնագրի» ստորագրումն ինքնըստինքյան սպառնում է Հայաստանի ազգային անվտանգությանը:

Վերջին հաշվով, Արցախյան հակամարտությունը լուծվելու է հօգուտ Հայաստանի կամ Ադրբեյջանի ոչ թե բանակցությունների սեղանին, այլ այդ երկու ախոյանների՝ պետական շինարարության մեջ գրանցելիք հաջողությունների հարաբերակցությունից: Ահա այդ խնդրի կենսագործմանը պետք է նվիրվի ողջ հայությունը, Հայաստանն ու Սփյուռքն իրենց բոլոր կառույցներով:

* * *

Սույն ժողովածուի ստեղծումն առաջին փորձն է ի մի բերելու Հայաստանի ազատագրված տարածքի խնդրին նվիրված փորձագիտական միտքը: Այն նպատակ ունի նաև խմբավորելու և դասակարգելու այդ մտքի հիմնատարրերը, նշմարելու հետազոտման արժանի գլխավոր ուղղությունները, ճշտելու մեթոդաբանությունը, միավորելու համախոհ մասնագետներին, հաստատագրելու նրանց գաղափարները որպես կուռ տեսություն և Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի առաջատար բաղադրամաս, ի վերջո՝ քանակապես ու որակապես զարկ տալու այդ բնագավառում կատարվող ուսումնասիրություններին:

Զետեղված վերլուծական ու փաստագրական նյութերում Հայաստանի ազատագրված տարածքին վերաբերող հիմնահարցերն ուսումնասիրվում են իրենց ամբողջություն մեջ, այդ թվում՝

- այդ հիմնախնդիրը դիտարկվում է Հայկական հարցի ընդհանուր համատեքստում (սույն ժողովածուի բաժին Բ.).
- զնահատվում է ազատագրված տարածքի ռազմավարական նշանակությունը արդի Հայաստանի (ներառյալ ՀՀ ու ԼՂՀ) անվտանգության համար (բաժին Գ.).
- որոշվում է ազատագրված տարածքի տեղն ու դերը տարածաշրջանային անվտանգության համակարգում (բաժին Գ.).
- տրվում են ազատագրված տարածքի հայկական պատկանելության իրավական հիմնավորումները (բաժին Դ.).
- ցուցադրվում են հայրենիքի այդ հատվածի նկատմամբ հայության որդեգրած դիրքորոշումները (բաժին Ա. և Ե.).
- տրվում է հայոց հայրենիքի սահմանումը՝ տարածքային և ժամանակագրական ընդգրկումներում (բաժին Ա. և Ե.).
- լուսաբանվում է հայոց ռազմավարական գիտակցության

ընդհանուր վիճակը, բացահայտվում են հայուլթյան դեմ մղվող տեղեկատվական պատերազմի կարևոր տարրերը (բաժին Ա.).

- ուրվագծվում են ազատագրված տարածքի վերահայացման ժողովրդագրական, տնտեսական և մշակութային խնդիրները (բաժին Ե.):

Նյութերի զգալի մասը հատուկ գրվել է սույն հատընտիրի համար և հրատարակվում է առաջին անգամ (^o 1, 3-7, 16-18, 21, 23-25, 34-35):

«Հայրենատիրութուն» մատենաշարի հաջորդ հատորներում անդրադառնալու ենք Հայաստանի և Հայ ժողովրդի կենսական շահերը շոշափող այլ խնդիրների, այդ թվում՝ Արցախյան հակամարտության մյուս բաղադրիչներին, Զավախքի հիմնահարցին, Հայոց ցեղասպանության դատապարտման ու փոխհատուցման միջազգային գործընթացներին, Թուրքիայում, Ադրբեջանում և Վրաստանում Հայոց մշակութային ժառանգության ճակատագրին, ուշադրության և պաշտպանության կարիք ունեցող ազգային արժեքներին և նրանց զարգացման խնդիրներին:

28.01.2006

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

Քաղաքական գիտությունների դոկտոր,
«Հայոց համաշխարհային գործակցութուն»
հասարակական կազմակերպության
գործադիր տնօրեն

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Այս տարբերակի գոյության փաստը հաստատում է նաև ԳՅ վարչապետը, խոստովանելով, սակայն, թե «փաստացի որևէ ծրագրից ես տեսյակ չեմ, և կառավարությանը գրավոր ներկայացված չէ» («Հայ մնալու հիմնական գրավականը հզոր պետություն ունենալն է», *Հայաստանի Հանրապետություն*, 14 հունվարի 2006թ.):

² Տե՛ս **Roger Fisher et al.**, *Coping with International Conflict: A Sys-*

tematic Approach to Influence in International Negotiation (Upper Saddle River, NJ: Prentice Hall, 1997), pp. 136-138:

³ **Արմեն Այվազյան**. *Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը*: Երևան, Հայաստան, Հայինֆո, 1998, էջ 81-82:

⁴ Ինչպես դեռևս 1993 թ. ճշգրիտ բնութագրում էր հայ ռազմական թղթակիցներից մեկը՝ «Լեռնային երկրամասում, որի տարբեր հատվածներից յուրաքանչյուրն ընդգրկելով բնակավայրերի մի ողջ շղթա՝ բնական ամբողջություն է կազմում, անգամ մեկ գյուղի կամ բարձունքի կորուստը կարող է քանդվող կծիկի համաբանությամբ առաջ բերել անկումների մի ողջ շղթա»։ — **Վ. Ղևրիկյան**, «Գետաշեն բանալուց մինչև Հայաստան շենքը» (*Զինվոր*, 1993թ., 1-8 ապրիլի, թիվ 1):

⁵ “Key Developments Concerning Iraq,” *The Associated Press*, February 07, 2003.

⁶ **Verena Von Derschau**, “French Tribunal Opens Rwanda Genocide Probe,” *Associated Press*, December 23, 2005 10:37 PM ET; **Maggie Farley**, “Explicit Photos Fan U.N. Sex Scandal: The French staffer they implicate says that the Congo mission harbors a pedophile network,” *Los Angeles Times*, February 12, 2005.

⁷ “Scandal hits Ukrainian UN troops: The UN has told Ukraine to withdraw its peacekeepers in Lebanon, saying some have engaged in “financial misconduct”, *BBC NEWS* 2005/09/03 04:18:39 GMT.

⁸ **Evelyn Leopold**, “Sexual Abuse by UN Troops in Congo Hasn’t Stopped,” *Reuters*, January 7, 2005 4:56 PM ET.

⁹ **Roberto Bonzio**, “Italy Probes U.N. Peacekeeper in Eritrea Sex Case,” *Reuters*, August 24, 2001 4:08 PM ET; “U.N. Policeman Charged with Rape in East Timor,” *Reuters*, August 24, 2001 6:53 PM ET.

¹⁰ **Marcel Van De Hoef**, “Dutch Gov’t Out After Bosnia Report,” *Associated Press*, April 16, 2002 11:55 PM ET.

¹¹ **Nita Bhalla**, “Ethiopia shuts border to peacekeepers,” 27 April, 2002, 14:26 GMT 15:26 UK; **Ed Harris**, “Eritrea orders Western UN troops out: diplomats,” *Reuters*, Dec 7, 2005.

¹² Վանդալիզմի նման մի դեպք է հաստատում Բաքվում Նորվեգիայի դեսպանը՝ տե՛ս **Simon Ostrovsky**, “Christian Minority in Azerbaijan Gets Rid of Armenian Eye Sore,” AFP, 17, February 2005.

¹³ **Տե՛ս Армен Айвазян**, “Убийство в Будапеште – спланированная операция азербайджанских спецслужб”, *Новое время*, 30 марта 2004 г.

Ա.

**Հայոց ռազմավարական
գիտակցության վիճակը:
Տեղեկատվական պատերազմ:**

2.

Ռազմավարական խոռոչները հայոց քաղաքական գիտակցության մեջ կամ Հայաստանի աշխարհաքաղաքական գոյության արսիոմները*

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

Սույն հոդվածում քննարկվելու է Հայոցի վրա քաղաքական գիտակցության հիմնային բաղադրիչը՝ նրա ռազմավարական գիտակցությունը, որը ենթադրում է մի կողմից՝ միջին ու երկարաժամկետ կտրվածքով Հայաստանի ազգային անվտանգությունն սպառնացող հիմնական վտանգների հստակ դիտարկում, մյուս կողմից՝ դրանց միասնաբար դիմադրվելու մտավոր ու բարոյահոգեբանական պատրաստվածություն: Հավանական կամ իրականում պետականաստեղծ էթնիկ-ազգային հանրույթի ռազմավարական գիտակցության մեջ կարելի է ընդգրկել «ռազմավարական միտք», «ռազմավարական մտածողություն», «ռազմավարական հիշողություն», «ռազմավարական պատասխանատվություն» հասկացությունները:

Հայոցի վրա քաղաքական գիտակցության մյուս կարևոր բաղադրիչներն են նրա իրավական գիտակցությունը (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների իմացությունն ու դրանք գործնականում կիրառելու կարողություն) և տնտեսական գիտակցությունը (Հայաստանի, տարածաշրջանի և առհասարակ աշխարհի տնտեսությունների մասին գիտելիքներ ու դրանք արդյունավետորեն կիրառելու կարողություն): Այս բաղադրիչները, սակայն, ածանցվում են ռազմավարական գիտակցությունից, վերնաշենքային են, և այս հոդվածում չեն քննարկվում:

* Այս հոդվածն առաջին անգամ լույս է տեսել ռուսերենով՝ “Стратегические провалы в политическом сознании армянства или аксиомы геополитического бытия Армении”, *Голос Армении*, 10 ноября 2005г., այնուհետև անգլերենով՝ “Strategic Gaps in Armenian Political Consciousness or Axioms of the Geopolitical Existence of Armenia”, *Groong.com*, December 16, 2005, <http://groong.usc.edu/news/msg132245.html>: Չայերեն տարբերակը հրապարակվել է մի շարք թերթերում, այդ թվում՝ 2005թ. դեկտեմբերի 31-ին Lnu Անգլիստի «Ասպարեզ»-ում և 2006թ. հունվարի 1-ին Բեյրութի «Ազրակ» և «Արարատ» օրա-

Հավանական կամ իրականում պետականաստեղծ որևէ էթնիկ-ազգային հանրույթի ռազմավարական գիտակցություն զարգացածության աստիճանը կախված է մի շարք պատճառներից ու հանգամանքներից, առաջին հերթին՝

- ազգային անվտանգության համակարգի կայացվածությունից ու արդյունավետությունից,
- ազգային անվտանգության հարցերում պրոֆեսիոնալ մտքի անկախությունից ու ինստիտուցիոնալացումից,
- քաղաքական վերնախավի՝ ազգային անվտանգության հարցերում պատրաստվածությունից,
- քաղաքական վերնախավի՝ ազգի առջև ունեցած պատասխանատվության զգացումից,
- ազգի՝ էթնիկական, կրոնական, լեզվական ու սոցիալական առումներով համախմբվածության աստիճանից,
- թշնամի երկրների և/կամ շահագրգիռ տերությունների՝ տվյալ հանրույթի վրա ներազդելու նպատակով կիրառվող տեղեկատվական-գաղափարաբանական և հոգեբանական բնույթի հատուկ գործողությունների երկարատևությունից, ինտենսիվությունից ու նենգությունից, և, մյուս կողմից, այդ փորձերի ժամանակին ճանաչումից ու դրանք չեզոքացնող համապատասխան հակաքայլերի կիրառումից:

Վերոթվարկյալ վեց չափանիշներով էլ հայության ազգային ռազմավարական գիտակցությունը ներկայանում է որպես, մեղմ ասած, թերզարգացած: Այսպես, ազգային անվտանգության հարցերով պրոֆեսիոնալ մտքի հայկական դպրոցը դեռ իր առաջին քայլերն է անում՝ ֆինանսապես ու գաղափարապես զգալի կախման մեջ գտնվելով արտաքին քաղաքականության և անվտանգության մտքի՝ արևմտյան և, նվազ չափով՝ ռուսական կենտրոններից: Այդ նույն հարցերի մասին հայկական քաղաքական վերնախավի պատրաստվածությունը ծայրաստիճան թույլ է, իսկ ազգի ապագայի առջև նրա ունեցած պատասխանատվության զգացումը՝ վրդովեցուցիչ: Հայ ազգը տարաբաժանված է եկեղեցական-կրոնական ու լեզվական հայտանիշներով: Հետսոցիալիստական Հայաստանում ծնունդ է առել և անթույլատրելի մակարդակի հասել հասարակության բեռացումը ըստ եկամտի չափի՝ ի չիք անելով Արցախյան շարժման վաղորդային ձևը բերված

ազգային համախմբվածությունն ու համերաշխությունը:

Այս ամենին գումարվում են ինչպես թշնամական Ադրբեյջանի և Թուրքիայի, այնպես էլ տարածաշրջանում ռազմավարական շահեր ունեցող որոշ տերությունների մշտական մեծ հետաքրքրությունը և, ըստ այդմ էլ, երկարատև ու նենգամիտ տեղեկատվական-գաղափարաբանական ու հոգեբանական հատուկ գործողությունները, որոնք նպատակ ունեն ներազդելու հայության ռազմավարական գիտակցության վրա: Հայկական պետության և Սփյուռքի կառույցների կողմից այդ ազդեցությունների անարդյունավետ ճանաչումն ու թույլ հակադարձումը հանգեցնում են նրան, որ հայության ռազմավարական գիտակցությունը մանիպուլյացիայի ենթարկելու փորձերը շատ հաճախ պսակվում են հաջողությամբ: Այս առիթով բավարար է հիշատակել դասական գաղափարաբանական դիվերսիայի ընդամենը մեկ օրինակ. հայության քաղաքական գիտակցության մեջ հաջողվել է մտցնել «ղարաբազցիներ»-«հայաստանցիներ» բացասական տարբերակումը՝ սրանից բխող հավանական վտանգավոր հետևանքներով հանդերձ:

Ընդհանուր առմամբ, առկա վտանգների համեմատ՝ Հայաստանի ազգային անվտանգության համակարգն անկատար է և անարդյունավետ: Այսպես, անկախացումից 14 տարի անց տակավին չի մշակվել Ազգային անվտանգության հայեցակարգ, ՀՀ նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհուրդը գոյություն ունի միայն անվանապես (այն չունի անձնակազմ և չի գործում), ամբողջովին լքված են ու անպաշտպան թողնված ազգային անվտանգության հույժ կարևոր մի քանի ճակատներ, այդ թվում՝ ռազմավարական վերլուծությունը, տեղեկատվական քաղաքականությունը (կամ, հին տերմինաբանության համաձայն, գաղափարախոսություն ու քարոզչության բնագավառը), կրոնական-աղանդավորական խոշորածավալ ներխուժումը, կոռուպցիայի դեմ պայքարը, քաղաքական («կիրառական») հայագիտության զարգացումն ու հիմնարար հայագիտության ապագան:

Պատմական իրադարձությունների, սուբյեկտիվ և օբյեկտիվ ներգործությունների հետևանքով հայկական ռազմավարական գիտակցության մեջ բացվել են գործառուլթային բնույթի խորը խոռոչներ: Ռազմավարական իրողությունները, որոնք հայության

բացարձակ մեծամասնությունը պետք է ընկալեր որպես Հայաստանի աշխարհաքաղաքական գոյությունից քարոզման, անտեսվում են ինչպես Հայ ժողովրդի զգալի մասի, այնպես էլ, որ կրկնակի ցավալի է, իշխանամետ և ընդդիմադիր քաղաքական վերնախավի զգալի մասի կողմից: Հենց Հայ քաղաքական վերնախավի ռազմավարական գիտակցություն թերզարգացածությունն է պատճառը, որ թույլ է տալիս այն դերականորեն տարբերակել Հայ զանգվածների ռազմավարական գիտակցությունից:

Թեև Հայ Հասարակություն մի մասը՝ առանձին քաղաքական կուսակցություններ, Հասարակական ակտիվ խմբեր, ճանաչված գործիչներ, ճիշտ են ընկալում ներքոշարադրյալ ռազմավարական անվիճարկելի ճշմարտություններից մի քանիսը, այդուհանդերձ, նրանց Համահայկական ճանաչման ու դրա շուրջն ազգային միացյալ քաղաքականության կառուցման խնդիրն այդպիսով էի լուծվում: Չէ՞ որ աքսիոմի ուժը նրանում է, որ այն բոլորն են ընդունում, ընդ որում՝ առանց վերապահումների: Տարածայնությունն ու երերումները Հայություն մեջ սկսվում են այնտեղ և այն ժամանակ, երբ բանավեճերը շրկանում են հիմնարար, պարզ ճշմարտությունների շուրջ: Առաջ ընկնելով՝ ասվածը հաստատենք ընդամենը մեկ համեմատություն կատարելով:

Անհնար է պատկերացնել, օրինակ, ամերիկյան Հասարակության որևէ զգալի Հատված, չխոսելով արդեն քաղաքական կուսակցությունների և իշխանական վերնախավի մասին, որն «ալ-Քաիդա»-ն էի ընկալում որպես ԱՄՆ-ի անվտանգության դեմ լուրջ սպառնալիք: Այս տարրական ճշմարտության շուրջ բանավեճեր, բնականաբար, չեն ծավալվում և ամերիկացիներն իրենց ուժերը դատարկ տեղը չեն վատնում: Իսկ ահա Հայ Հասարակության մեջ կան մեծ թվով մարդիկ, մի շարք քաղաքական կուսակցություններ և տպագիր օրգաններ, խոշոր բիզնեսի ոչ քիչ ներկայացուցիչներ ու նույնիսկ պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք ոչ մի կերպ չեն կարողանում տեսնել Հայաստանի անվտանգությանն սպառնացող առավել ակնհայտ ու մահացու վտանգները, որ բխում են մեր երկու հարևան պետություններից՝ դաշնակցած Ադրբեյջանից և Թուրքիայից: Մեզ մոտ տարիներով անհիմաստ վեճեր են ընթանում ներկայումս Հայ-թուրքական բարեկամության Հնարավորություն կամ անհնարինություն մասին,

խակ մինչ այդ ոմանք «խոստումնալից բարեկամություն» են հաստատում...

Ստորև համառոտաբար շարադրվում են այն հիմնական ռազմավարական իրողությունները, որոնք մնում են անտեսված գանգվածների և հայություն քաղաքական վերնախավի մի մասի կողմից:

1. Աշխարհաքաղաքական կացության օրհասականությունը և Ադրբեջանին տարածքային զիջումներով խաղաղեցնելու անհնարինությունը

Անտեսվում է (լավագույն դեպքում՝ թերազնահատվում) «լինել, թե՞ չլինելու» աշխարհաքաղաքական դրություն ամբողջ օրհասականությունը, որի մեջ գտնվում է Հայաստանը հետխորհրդային ժամանակաշրջանում: Այլ կերպ ասած, անտեսվում է Հայաստանի ոչնչացման հավանականությունը, որը կարող է վրահասնել Ադրբեջանի կողմից (Թուրքիայի ուղղակի կամ անուղղակի մասնակցությամբ) բծախնդրորեն ծրագրվող ու հետևողականորեն նախապատրաստվող ներխուժման հնարավոր հաջողության արդյունքում: Միաժամանակ անտեսվում է այն, որ տարածքային զիջումների միջոցով Ադրբեջանի և նրա թիկունքում կանգնած Թուրքիայի խաղաղեցումն անհնարին է:

Հայաստանը ոչնչացնելու նպատակը ադրբեջանցի ռազմավարագետները չեն թաքցնում անգամ, հայտարարելով նույնիսկ մոտավոր ժամկետներ (25-30 տարի), երբ, ըստ նրանց հաշվարկների, «աշխարհի քարտեզի վրա Հայաստան չի լինելու»: Այս մասին, մասնավորաբար, քանիցս արտահայտվել է Ադրբեջանի պաշտպանության նախարարության մամուլի քարտուղար, գնդապետ Ռ. Մելիքովը: Նման հայտարարություններ արել են պաշտպանության նախարար Ս. Աբելևը և պաշտոնատար այլ անձինք: Հիշենք, թե դիվանագիտական ինչպիսի հզոր հարձակում գործեց Թեյ-Ավիլը Թեհրանի վրա, Իրանի նախագահի՝ Իսրայելի հանդեպ նման հայտարարություններից հետո: Դժբախտաբար, հայկական դիվանագիտությունը գրեթե չի հակազդում Բաքվից պարբերաբար հնչող նմանատիպ սպառնալիքներին:

Հայաստանը ոչնչացնելու ծրագիրը հույժ կարևորություն կազդող չէ, այն ներկայացնում է մարտավարական պարզագույն գործողություն՝ շխմատային «մատ երեք քայլից» կոմբինացիայի նման մի բան: **Քայլ 1-ին.** ադրբեջանական նախահարձակում և Արցախի ու ազատագրված տարածքների բռնազավթում: **Քայլ 2-րդ.** դրան վաղ թե ուշ անխուսափելիորեն հետևելիք ներխուժումը Սյունիք՝ թյուրք երկու դաշնակիցներին տարանջատող արդեն միակ մնացած այդ միջնաբերդը (Հայաստանի կենտրոնական շրջանների հետ թույլ հաղորդակցությունները, արցախյան «պարսպի» և պաշտպանական խորություն բացակայությունը, հրետանային կրակի ժամանակակից համակարգերի գործածումը, ինչպես նաև Արցախի անկման պատճառած հոգեբանական հարվածը կիջեցնեն Սյունիքի պաշտպանունակությունը գրեթե զրոյական մակարդակի) և Հայաստանի մնացյալ մասի առումը թուրք-ադրբեջանական օդակի մեջ՝ նրա վերածումը գետտոյի՝ յուրօրինակ անդրկովկասյան Սվազիլենդի: **Քայլ 3-րդ.** Հայաստանի լիկվիդացիան Թուրքիայի և Ադրբեջանի կողմից եթե ոչ ռազմական, ապա տնտեսական, քաղաքական ու հոգեբանական ճնշման միջոցով: Զրկվելով կայուն զարգացման որևէ հեռանկարից ու կորցնելով աշխարհով մեկ սփռված միլիոնավոր հայերի համար հավանական ապաստանի իր դերը՝ երկրաչափական պրոգրեսիայով աճած զանգվածային արտագաղթի հետևանքով Հայաստանը կթուլանա այն աստիճան, որ կլլանվի և կբաժանվի Թուրքիայի, Ադրբեջանի ու Վրաստանի միջև:

Հայաստանի ոչնչացման թուրք-ադրբեջանական այս ծրագրի անմիջական իրականացումը դրված է Ադրբեջանի վրա: Իսկ Թուրքիան, ելնելով միջազգային արդի իրողություններից, մնալու է մի տեսակ ստվերում՝ ադրբեջանական նախահարձակման համար ապահովելով «թիկունքային աջակցություն»՝ օժանդակություն քարոզչության, դիվանագիտական լոբբինգի, ֆինանսական ու տեղեկատվական-հետախուզական բնագավառներում, ինչպես նաև զինվորական խորհրդականներով ու «կամավորներով»:

1990-ականների սկզբին հայությունը՝ հսկայական կորուստների գնով, հաջողվեց չեզոքացնել այդ ծրագիրը՝ Հայաստանին ժամանակ տալով իր պետականությունն ամրապնդելու, այն է՝

արմատապես ինքնակազմակերպվելու համար: Դժբախտաբար, ընձեռված հնարավորությունները, խոշոր հաշվով, բաց թողնվեցին, հատկապես, ազգային անվտանգություն գործուն համակարգի ստեղծման ու պետական կառավարման մակարդակի բարձրացման հարցերում:

Աշխարհաքաղաքական իրադրություն հստակ գիտակցումը կարող է մոբիլիզացնել հայրենիքի տնօրինած մարդկային, գաղափարախոսական ու ֆինանսական ոչ սակավ ռեսուրսները, ինչպես նաև ժողովրդի անսպառ կամքը՝ վերոհիշյալ մահացու հավանականությունը բացառելու համար: Իսկ դրա միջոցը մեկն է՝ կառուցել Հայաստանում և արտասահմանում հարգանք վայելող և ամուր պետություն, այնպիսի պետություն, որն ի վիճակի լինի անկախ քաղաքականություն վարել իր ազգային անվտանգության համար կենսականորեն կարևոր հարցերում: Փոխարենը, ամեն օր բավում ենք պետական կառավարման ցածր մակարդակին, պետական պաշտոնեություն համընդհանուր կոռումպացվածությունը, իրավական, մասնավորաբար դատական համակարգի չկայացածությունը, ինքն իրեն օրենքից դուրս համարող ու պահող օլիգարխների և բարձրաստիճան պաշտոնատարների կաստայի առաջացմանը, կլանայնությունը (այդ թվում՝ դրա գավառական տարատեսակին), ազգային մշակույթի և արժեքների ժխտմանը, վերջին հաշվով՝ ազգային և, արդյունքում, սեփական անվտանգության անտեսմանը:

2. Ռազմավարական տեսակետից բարենպաստ պատմական պահի մասին

Ներկայումս Հայաստանում և նրա շուրջն առկա հարաբերական կայուն իրավիճակը հավիտենական չէ: Այն, մեր ցանկություններին հանդիմանալիս, կարող է փոխվել դեպի վատը՝ ներքին, տարածաշրջանային ու համաշխարհային մի շարք հնարավոր պատճառներով:

Երկրի ներսում հայկական տնտեսության այսօր դիտարկվող զարգացումը քաղաքական համակարգի միաժամանակյա խորը լճացման պայմաններում՝ հղի է քաղաքական ու սոցիալական ցնցումներով, ինչպես նաև շարունակական արտագաղթով, որ ներառում է նաև երկրից տաղանդավոր ու ազնիվ երիտասարդ մաս-

նագետների, ովքեր իրենց ներուժը չեն կարողանում իրացնել ո՛չ կռուումպացված պետական կառույցներում, ո՛չ էլ Հայաստանի տնտեսության առանձին ոլորտները մենաշնորհելու հաշվին շահույթ անող օլիգարխիական բիզնես-կառույցներում: Իսկ որակյալ կադրերի պակասը, որն արդեն զգացնել է տալիս հայկական պետության կենսագործունեության համարյա բոլոր ոլորտներում, անխուսափելիորեն կտանի ճահճացման ե՛լ տնտեսությունը, ե՛լ գիտությունը, ե՛լ կրթությունը:

Տարածաշրջանային կտրվածքով կայունությունը կարող է հիմնովին քանդվել ադրբեջանական հիշյալ նախահարձակման հնարավորությամբ: Այս կապակցությամբ ավելացնենք միայն, որ ալիեյան կլանի համար մոտ ապագայում պատերազմը կարող է իշխանությունը պահպանելու միակ միջոցը դառնալ, քանի որ ադրբեջանցի զանգվածների դժգոհությունը հակված է միայն ուժեղանալու: Դա պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Առաջին՝ որքան էլ Ադրբեջանը Կասպից ծովից նավթ արտահանի, այն չի բավարարի ժողովրդական զանգվածների տնտեսական վիճակն արմատապես բարելավելու համար, քանի որ նավթային հաջողակ հազվագյուտ տերությունների (Քուվեյթ, Սաուդյան Արաբիա, Կատար, Բահրեյն, ԱՄԷ) հետ համեմատած, ադրբեջանական նավթի պաշարների քանակի հարաբերությունը Ադրբեջանի բնակչության քանակին՝ մեծ չէ: Երկրորդ՝ պետական կառավարման համակարգն այնքան է փչացած, որ բացառում է նավթային եկամուտների փոքրիշատե արդար բաշխումը: Երրորդ՝ սաստկացող անհավասարություն, հարստություն և աղքատության ցայտուն հակադրություն ետնախորքում՝ նավթի առկայությունն ու նրա վաճառքի եկամուտներն ըմբոշխնելու անհնարինությունը ծայրահեղ հիասթափություն են ծնելու՝ խթանելով հեղափոխական տրամադրություններն ադրբեջանական հասարակության մեջ: Մինչդեռ «հաղթական պատերազմը» կարող է երկար ժամանակով ամրապնդել Ի. Ալիևի իշխանությունը:

Տարածաշրջանը կարող է պայթել նաև այլ պատճառներով, որոնցից առավել լուրջ են թվում հետևյալները. իրանա-ամերիկյան հարաբերությունների սրման հավանականությունը՝ ընդհուպ մինչև պատերազմի սանձագերծում, Զավախքում իրադրության հավանական սրումը՝ ընդհուպ մինչև զինված հակամար-

տուլթյան բռնկում (այս մասին մանրամասն՝ ստորև), Թուրքիայում քրդական ռազմական դիմադրություն հավանական ուժեղացումը:

Պլուրալ կտրվածքով՝ աշխարհում քաղաքական ու տնտեսական անկայունությունը ոչ միայն չի նվազում, այլև, ընդհակառակը, աճում է, ընդ որում՝ արագորեն: Համաշխարհային քաղաքական ամբողջ համակարգի համար բացասական անկանխատեսելի հետևանքներով հղի առավել հավանական, նույնիսկ սպասելի միջազգային ցնցումների շարքում են ե՛լ համաշխարհային ֆինանսական համակարգի հավանական փլուզումն ու դրան ուղեկցող համաշխարհային տնտեսությունից ճգնաժամը, ե՛լ իսլամ ծայրահեղականների զանգվածային գոհեր պատճառած ահաբեկչական գործողություններն արևմտյան երկրներում, ե՛լ չինական «ռեկոնկիստան»՝ Չինաստանի ներխուժումը Թայվան ու Չինաստանի դեմ այդ պատերազմում ինքնաբերաբար ԱՄՆ-ի ներքաշվելը, ե՛լ ծայրահեղ վահհաբիստական հեղափոխությունը Սաուդյան Արաբիայում, ե՛լ ամերիկյան գործի հարկադրական դուրսհանումը Իրաքից, ե՛լ Հյուսիսային Կորեայի կողմից կամ նրա դեմ միջուկային զենքի կիրառումը:

Համաշխարհային քաղաքական համակարգի վրա անկայունացնող մեծ ազդեցություն կարող են գործել նաև խոչորածավալ տարերային աղետները, որոնք ընդունակ են պայթեցնելու գլոբալ, տարածաշրջանային կամ էլ տեղական տնտեսություն ու քաղաքականություն մեջ առկա լարվածությունները:

Ասվածից հետևում է, որ անդրկովկասյան տարածաշրջանում, ու, մասնավորապես, Հայաստանում ներկայումս առկա ներքին և արտաքին քաղաքական կայունությունն, ամենայն հավանականությամբ, ունի ժամանակավոր բնույթ: Այս հանգամանքի անտեսումը հայտնությունը թույլ չի տալիս առավելագույնս օգտագործել Հայաստանի համար ռազմավարական տեսակետից հարաբերականորեն բարենպաստ պատմական ներկա ժամանակահատվածը: Հենց այսօր է հարկավոր պատրաստվել հետագայի անխուսափելի բոլոր բարդացումներին ու հավանական աղետներին, հենց այսօր է հարկավոր ճեղքում արձանագրել հայտնության ինքնակազմակերպման մեջ, առաջին հերթին՝ Հայաստանում պետականաշինարարություն տեղապտույտ տվող գործում: Հարկավոր է անվա-

րան ընդունել Հայաստանի պետական կարևոր կառույցների անբավարար կայացվածությունը (ի դեպ, ս. թ. հոկտեմբերի 27-ին՝ ԱՄՆ իր պաշտոնական այցի ժամանակ կայացած մի հանդիպման ընթացքում, բառացիորեն այդպիսի հայտարարություն արեց ՀՀ պաշտպանությունից նախարար Ս. Սարգսյանը), թուլությունը, կոռումպացվածությունը և ոչ-պրոֆեսիոնալիզմը, որոնք էլ քաղաքացիների մոտ թերահավատություն են առաջացնում հայկական պետականության գաղափարի հանդեպ անգամ:

Որքանով մենք պատրաստ լինենք անխուսափելիորեն գալիք «X» օրվան (այսինքն՝ վերոհիշյալ հավանականություններից մեկի կամ միաժամանակ մի քանիսի տեղի ունենալու հետևանքով տարածաշրջանային կամ համաշխարհային քաղաքական ամբողջ համակարգի ժամանակավոր փլուզմանը), այնքանով էլ կհասնենք որպես ազգ և ազգային պետություն, այնքանով էլ նվազ կորուստներ կունենանք: Եթե մենք ավելի պատրաստ լինեինք 1988 թվականին, ավելին կհասնեինք ու նվազ էլ կկորցնեինք: Սա վերաբերում է առհասարակ բոլոր ազգերին ու պետություններին: Սակայն, Հայաստանի պարագայում, ամեն մի «X» օրը վերածվում է կենաց և մահու խնդրի:

Անհատական մակարդակում՝ հայությունը դարանակալած այս բոլոր ռազմավարական վտանգների անտեսումն, անկասկած, ունի հոգեբանական ինքնապաշտպանության գործառույթ: Ռազմավարական ամենեզիան կամ հիշողության կորուստը հային թույլ է տալիս մտածել ու բանել հանուն իր ընտանիքի բարօրության՝ չտրվելով «ավելորդ» մտածմունքների ազգի ու հայրենիքի դժվար անցյալի, ներկայի և ապագայի մասին: Իսկ հայկական պետական և քաղաքական կառույցներին նույն հիշողության կորուստը հնարավորություն է տալիս շարունակելու խառնափնիթոր և անպատասխանատու սովորական ռեժիմով զործունեությունը՝ փոխարենը ինքնակազմակերպման պահանջված մակարդակին բուրրովին այլ գործելակերպով հասնելուն, մի բան, որ թելադրվում է սպառնալիքների ռազմավարական դիտարկմամբ ու դրանց նվազեցման ու չեզոքացման ճանապարհների ողջամիտ փնտրտուքով:

Ցեղասպանության համահայկական ցավը, որ նշվում է ամեն տարվա ապրիլի 24-ին, դեռ պետք է վերածի «ռազմավարական հի-

тры на то, что соседние государства высказывают спорные возражения относительно нескольких наших окраинных районов, однако у Республики Армения есть своя точка зрения и позиция по этому вопросу” (ЦГИА РА, фонд 199, список 1, дело 25, л. 70). Иначе говоря, несмотря на то, что соседние государства выдвигали спорные возражения, Республика Армения приняла закон о своих территориях и сумела защитить “свою точку зрения и свою позицию” относительно “нескольких наших окраинных районов”. Это де-факто признавали и сами азербайджанские власти, и командование Красной армии. Примечательно, что документ, свидетельствующий об этом, был опубликован в самом Азербайджане, да еще после начала арцахского движения - в 1989г. 11 июня 1920г. председатель ревкома Азербайджана М. Гусейнов отправил записку командиру 20-й стрелковой дивизии 11-й Красной Армии М. Великанову, в которой четко представлена граница между двумя республиками: “вся горная зона Елисаветпольской области” и Шамхорский район находятся в руках армян, сообщает М. Гусейнов. Он с ложной тревогой сообщает, что армяне перешли в наступление и “во многих местах перешли границу” (Интернациональная помощь 11-й Красной Армии в борьбе за победу советской власти в Азербайджане (Документы и материалы. 1920-1921гг. Баку, 1989, с. 66). Руководитель Азербайджана призывает М. Великанова отобрать эти районы у армян. Он даже подсказывает ему такой коварный путь: надо сформировать военный отряд из армянских коммунистов и вместе с русскими красноармейцами отправить его в Чардахлу для того, чтобы отобрать село у дашнакских властей. Тот же азербайджанский источник обстоятельно описывает, где проходит граница между двумя республиками, отмечается, что “южные части Гандзакского и Казахского уездов занимают армянские войска” (с. 101). То же положение с границами после 4 августа 1920г. подтверждают и другие документы (см. Боевой путь 11-й Красной армии в период установления и упрочения советской власти в Армении. Сборник документов, Ереван, 1978, с. 43). Население армянских районов Гандзака против Красной Армии с оружием не выступило, так как армянский народ на протяжении веков связывал с Россией надежды на свое освобождение и создание независимого государства. Вот почему в Карабахе, в том числе

и в армянских районах Гандзака, население передало власть на местах армянам-большевикам. После этого вопрос армянских территорий перешел в ведение властей России, руководствовавшихся собственными внешними и внутренними политическими интересами. При этом некоторые территории Республики Армения были принесены в жертву политическим интригам Советской России и крупных держав, в частности Турции. Не считаясь с мнением армян, Нахичеван, Карабах и армянские районы Гандзака были присоединены к Азербайджану. Причем армянские районы Гандзака стали жертвой двойной интриги - однако об их судьбе полностью позабыли и армянские власти, не говоря уже об иностранцах. Примечательно, что и годы спустя после этого присоединения и объявления в урезанных границах автономии Карабаха (1923г.) власти Азербайджана опасались, что автономию могут потребовать и армянские районы Гандзака (об этом см. Баграт Улубаян. История Арцаха. Ереван, 1994, с. 251 (на арм. яз.). Они прибегали к самым гнусным шагам, лишь бы ликвидировать возможность этого, как это было в период ослабления СССР, тем более после его распада, когда, прибегнув к жестокому насилию, они очистили от армян армянские районы Гандзака. В ходе нынешних армяно-азербайджанских переговоров стороны, а также посредники должны опираться на исторические факты и современные реалии. В первую очередь власти Армении, как и все армянские политические силы, должны выступить с требованием восстановления территориальной целостности Республики Армения. Сегодняшние республики Армения и Азербайджан являются правопреемниками республик 1918-1920гг. Следовательно, они должны исходить из правовых и фактических реалий тех лет. 11-я Красная Армия Советской России, вступив в Южный Кавказ, изменила эти реалии. После распада Советского Союза, как известно, Азербайджан категорически отказался выполнить требование армян Карабаха о самоопределении, развязал войну, в результате которой армяне в основной части Арцаха сумели защитить свое право на самоопределение, однако Шаумяновский район (бывший Гюлистан), армянские районы Гандзака были варварски очищены от армян. Следовательно, Армения должна бороться за восстановление своей территориальной целостности 1918-1920гг. Армения для восстанов-

ления своей территориальной целостности должна обрести насильственно присоединенные Советской Россией к Азербайджану и очищенные в 1987-1992гг. названные армянские районы. Обретение это должно произойти мирным путем, путем поиска политического урегулирования проблемы. Тенденции протекающих в мире политических процессов и фактическое отношение государств региона и крупных держав к армяно-азербайджанским переговорам подсказывают, что предложенные нами подходы являются наиболее реальными для окончательного урегулирования конфликта.

13.

Գեոաշեն բանալուց մինչև Հայաստան շենքը*

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

1992թ. ադրբեջանական բանակի հունիսյան մեծածավալ հարձակումից հետո ընկավ Շահումյանը: Շրջանի փախստական դարձած մոտ տասը հազարից անցնող ժողովուրդը ապաստանեց Մարտակերտում՝ խուճապի ընդհանուր ալիք առաջացնելով նաև այստեղ, որովհետև շարժման սկզբից ի վեր Շահումյանն էր համարվում լավագույն և կազմակերպված ինքնապաշտպանություն ունեցող շրջանը: Հուսալքություն ծավալված ալիքը սոսկ հոգեբանական չէր, այլ կապվում էր Շահումյանի ունեցած ռազմաստրատեգիական կարևորություն հետ, քանի որ այն լեռնաշխարհագրական մի միասնություն էր կազմում Մարտակերտի հետ:

Շատ է գրվել այս երկու շրջանների անկման մասին: Եղել են իրական քննադատություններ, սակայն, դժբախտաբար, առավել գերիշխել են քաղաքական նպատակներով կատարված էժանազին շահարկումները: Ցանկություն չունենալով խառնվել ո՛չ այդ քննարկումներին և ո՛չ էլ իրավունք վերապահելով՝ խորանալ մի-

Չազգային աշխարհաքաղաքական բարդ խաղերի մեջ կամ էլ անդրադառնալ մեր հանրապետությունում, ԼՂՀ-ում և Ադրբեյջանում ընթացող այն ներքաղաքական պայքարին, որոնք իրենց կնիքն են դնում սահմանների գծագրման վրա, պարզապես փորձենք ցույց տալ, թե ինչպես լեռնային երկրամասում, որի տարբեր հատվածներից յուրաքանչյուրն ընդգրկելով բնակավայրերի մի ողջ շղթա՝ բնական ամբողջություն է կազմում, անգամ մեկ գյուղի կամ բարձունքի կորուստը կարող է քանդվող կծիկի համաբանությունը առաջ բերել անկումների մի ողջ շղթա:

Վարչաքաղաքական տարբեր բաժանումների ենթարկված,

* ՁԻՆՎՈՐ, 1993թ., 1-8 ապրիլի, թիվ 1:

բայց ռազմագիտական առումով լեռնաշխարհաքաղաքական մեկ միասնություն կազմող մեր հայրենիքի այս փոխկապակցված ամբողջությունը լավագույնս թերևս բնորոշել են գետաչենցիները՝ ասելով. «Գետաչենը բանալին է, կողպեքը՝ Շահումյանը, դարպասը՝ Արցախը, շենքը՝ Հայաստանը»: Գետաչենին բոլորից մոտն էին Շահումյանի Բուզլուխ, Մանաշիզ և Էրքեջ գյուղերը, որոնցից երկու անգամ շատ բնակչություն ուներ այս գյուղը, որը 1990թ. հունվարյան հարձակման ժամանակ ոչ միայն թիկունք եղավ Ազատ և Կամո գյուղերին, այլև ստիպեց դադարեցնել հարձակումը Մանաշիզի վրա:

Գետաչենի ողբերգությունից մի քանի ամիս անց, դարձյալ խորհրդային բանակի աջակցությամբ, ՕՄՕՆ-ը հայաթափեց Հենց Բուզլուխ, Մանաշիզ և Էրքեջ գյուղերը, որոնք կարճ ժամանակ անց վերստին ազատագրվեցին:

Շահումյանն էլ իր հերթին համանման մի պատվար էր Մարտակերտի համար, որոնք իրար կապվում էին Գյուլիստանով և Կարաչինարով: Առաջինով անտառային ճանապարհը ուղիղ տանում էր Հաթերք. ի դեպ, Հենց այստեղով էլ հիմնականում Մարտակերտ հասավ տեղահանված ժողովուրդը, իսկ երկրորդով հասնում էր Մարտակերտի մյուս եզրային գյուղը՝ Թալիշը, և երկու շրջաններն իրարից անջրպետող ջրբաժանն էր Ինջա գետը: Շահումյանի անկամբ միանգամից մերկացավ Մարտակերտի հյուսիսը՝ անպաշտպան դարձնելով Հաթերք-Թալիշ երկայն աղեղով ձգվող բնակավայրերը, որովհետև մինչ այդ Մուվի հովանու ներքո գտնվող և դարեր շարունակ անառիկ մնացած Գյուլիստանի

գրավմամբ լեռներին իշխող բարձրագիւր անտառներով բացվեց ճանապարհը դեպի Հաթերք, որը մինչ այդ չընթացած լինելով միայն հայկական բնակավայրերով՝ սոսկ ոչ նշանառու հրետակոծութեան էր ենթարկվում Քելբաջարից: Նույնը վերաբերում է և Թալիշին: Լինելով Շահումյանն ու Մարտակերտը իրար կապող հանգուցակետային գյուղը՝ այն դարձել էր պարբերական հարձակումների թիրախ, սակայն երբ հակառակորդին հաջողվում էր առաջ գալով մոտենալ գյուղին, իսկույն իր թիկունքում զգում էր վերից՝ Կարաչինարից օգնութեան շտապած շահումյանցիների հուժկու հարվածը և մեծ կորուստներով նահանջում: Կարաչինարի անկմամբ օգնութեան ճանապարհը վերածվեց հարձակման ճանապարհի, և գրեթե չընթացած թերակողով հայտնված Թալիշի համար արդեն շատ դժվար կլինեի դիմակայել թե՛ Թարթառի շրջան վերանվանված Միր Բաշիրից և թե՛ Հյուսիսից՝ Ինջա գետի կողմից եկող հակառակորդին, և գյուղը գրավվեց: Միգուցե կային մեզ անհայտ այլ գործոններ ևս, որոնք, գումարվելով տիրող ընդհանուր խուճապին և հուսալքութեանը, պատճառ դարձան անկումների նոր շղթային, սակայն ռազմագիտական առումով այն կանխորոշվեց Գյուլիստանի և Կարաչինարի անկմամբ: Թալիշի գրավմամբ բնական կապվածութեան շղթայով ընկան Չայլուն ու Լենինավանը և ընդհանրապես Մարտակերտի դաշտային հատվածը, և ճակատի նոր գիծը մի կարճ ժամանակով սկսեց անցնել Մարտակերտի շրջկենտրոնի մոտով: Երկու ուղղութեամբ՝ դեպի շրջկենտրոն և Հաթերք առաջ շարժված հակառակորդը զինական գերակշռութեան և մինչև այժմ էլ չբացահայտված մի քանի այլ պատճառներով կարողացավ գրավել երկուսն էլ, որից հետո, անկախ մարտնչելու վճռականութունից, բնականորեն պետք է ընկնեին ևս մի քանի բնակավայրեր, և ձևավորվեի ռազմաճակատի նոր գիծը, ու գրավվեցին նաև շրջկենտրոնից վեր ձգվող մայրուղու կողքին գտնվող Ներքին Հոռաթաղ և Կոսապատ գյուղերը և մայրուղուց Հյուսիս եղած բոլոր բնակավայրերը՝ երկու կողմերի համար էլ բնական սահմանազատիչ դարձնելով ճանապարհը և Թարթառ գետը:

Այս նոր գծի շուրջն էլ շուտով նոր մարտեր բորբոքվեցին, որոնց ընթացքում օգոստոսին Արցախի ազգային բանակի ուժերին հաջողվեց ազատագրել Հաթերքը և միաժամանակ մոտենալ Մար-

տակերտ շրջկենտրոնից ընդամենը կես կիլոմետր հեռավորության վրա գտնվող Ներքին Հոռաթաղին: Սակայն շուտով այս ամենը վերստին հանձնվեց հակառակորդին: Ավելին, Ադրբեջանը նոր հարձակման շնորհիվ կարողացավ անցնել Թարթառը և գրավել Վաղուհասը, իսկ մյուս ուղղությամբ էլ տիրանալով Մեհմանա գյուղին իշխող բարձունքներին՝ փաստորեն կանխորոշեց և Դրմբոնի ու Չլդրանի ճակատագիրը, որից հետո էլ քանդումների շղթայով ինքնաբերաբար տիրացավ Վաղուհասի և Դրմբոնի միջև գտնվող Վերին Հոռաթաղին, Հարությունագոմերին, Պողոսագոմերին և Կոճողուտին: Այս առաջխաղացումից հետո բավականին տևական ժամանակով (մինչև Չլդրանի ազատագրումը) հաստատվեց ռազմաճակատի նոր գիծ, որը տարանջատվեց Վաղուհասը և Գանձասարը երիզող բարձունքներով և շարունակվեց Առաջաձոր-Կիչան-Սրխավենդ-Ղազանչի գծով: Այս գծի առժամանակ անփոփոխ մնալը բացատրվում է մի շարք պատճառներով: Նախ՝ Ադրբեջանը լուծեց միանգամից մի քանի խնդիր: Տիրելով բարձրագիր Հաթերքին՝ փաստորեն, հեռահար հրետանու նշանառությամբ վերահսկողություն սահմանեց ողջ շրջանի վրա, իսկ գրավելով Վաղուհասն ու Դրմբոնը՝ լիովին տիրեց մայրուղուն, որը Մարտակերտի գրավյալ բնակավայրերը ծանր տեխնիկայի տեղաշարժով իրար կապելուց առավել կարևորվում էր որպես Քելբաջար տանող ուղի: Լեռների կողերի հատմամբ ստեղծված այս մայրուղին Արցախի հանդեպ հոգատարության դրսևորում չէր, այլ Ադրբեջանի ղեկավարության՝ ժամանակին կատարած քաղաքական մեծ հեռատեսություն արդյունք: Մինչ ճանապարհը վերահսկելը, Քելբաջարը երեք կողմերից մեկուսացված էր. մի կողմից սահմանակից մեր հանրապետությունը, մյուս կողմից՝ Մարտակերտին և երրորդը՝ Լաչինի միջանցքի հյուսիսային հատվածին, որը դժվարանցանելի ճանապարհով էր կապվում Ադրբեջանին: Մեր հանրապետության սահմանները զնդակոծելու, Լաչինի միջանցքի վրա ճնշումը ուժեղացնելու, ինչպես նաև Մարտակերտում ընթացող գործողությունների վրա ազդելու նպատակով, ճմեռային պայմաններում հարկավոր էր փոխադրումների անխափանությունը ապահովելու համար լիովին տիրել մայրուղուն և ոչ թե այն թողնել սոսկ չեզոք սահմանազատիչ գիծ երկու կողմերի համար: Մայրուղու գրավմամբ Ադրբեջանը միաժամանակ տի-

րացավ և Սարսանգի ջրամբարին ու Թարթառ գետի ողջ հոսանքին՝ ուղղաձև, էներգետիկ և գյուղատնտեսական առումով իր համար այնքան կենսական կարևորություն ունեցող այս ջրային ավազանին:

Միաժամանակ ակնհայտ էր, որ չնայած իր տեղական կայունությունը, Գանձասարից մինչև Ղազանչի ձգվող ուղղաձև կառուցվածքի գիծն էլ չէր կարող սահմանազատիչ դառնալ երկու կողմերի համար, որովհետև չկար բնական այն բաժանվածությունը, որը լեռնային երկրներում լեռնաշղթաներով ու գետերի հուններով պայմանավորում է սահմանները, և նվազագույնը կա՛մ իրենք էին մինչև Խաչենագետ հասնելու, կա՛մ էլ ազատագրվելու էր մինչև Թարթառ ընկած տարածքը: Եղած գիծը ձևավորվել էր մի շարք քաղաքական գործոնների, մինչ այդ ծավալված մարտերի առաջ բերած ուժասպառություն և վերահաս անբարենպաստ եղանակի պատճառով, ու պարզ էր, որ եղանակների տաքանալու դեպքում հակառակորդի ծանր տեխնիկական առաջ էր շարժվելու: Այս ընթացքում, չհաշված դիրքային փոխհրաձգությունը և հրետակոծությունը, Ադրբեյջանի կողմից հարձակման թիրախ էր ընտրվել Կիչանը, իսկ Արցախի ուժերն էլ շարունակ փորձում էին ազատագրել Չլդրանը, և մարտական գործողությունների ամենասուր ծավալումը հենց այս հատվածում պատահական չէր: Եթե պաշտպանական բնագծերը ճեղքվեին այս հատվածում, ապա հակառակորդը կարող էր առաջ շարժվել միանգամից երեք ուղղությամբ, որոնցից յուրաքանչյուրի համար էլ նոր պաշտպանական գիծ կազմելը գրեթե անհնարին կլիներ:

Կիչանը, փաստորեն, այն կետն էր, որից այն կողմ այլևս նահանջելու տեղ չկար, և այս գյուղի հանձնումը հավասարազոր էր Արցախի հանձնմանը: Բարեբախտաբար, Արցախի զինվորների անօրինակ նվիրման շնորհիվ տեղի ունեցավ հակառակը՝ պատասխան հակահարձակումը, և ազատագրվեց Չլդրանը: Ամրապնդվելով շրջակա բարձունքներին՝ այժմ էլ Արցախի ազգային բանակի մարտիկները, երեք ուղղությամբ առաջ շարժվելով, սկսում են հավաքել «քանդված» կծիկը: Դիրքավորվելով Մեհմանայի առջև ու փակելով այնտեղից աղեղնաձև հնարավոր հարձակումը Չլդրանի վրա՝ նրանք մոտեցան Դրմբոնին: Անհրաժեշտ էր նախ փակել ճանապարհը, որը կատարվեց Վաղուհասի ազատագրմամբ:

Ձլգրանից հետո, փաստորեն, ամենածանրը և վճռորոշը նրա ազատագրումն էր, որից հետո արդեն հնարավոր եղավ վերցնել և Դրմբոնը, ու հակառակորդը ինքնաբերաբար թողեց մայրուղու փակված այս ողջ հատվածի երկայնքով ընկած Վերին Հոռաթաղ, Հարուլթյունագոմեր, Պողոսագոմեր և Կոճողուտ գյուղերը: Այսինքն՝ ինչպես ժամանակին Վաղուհասի և Դրմբոնի հանձնամամբ վճռվեց նաև այս գյուղերի անկումը, այնպես էլ հիմա դրանց երկուսի ետ վերցմամբ էլ՝ թվարկվածների ազատագրումը:

Արցախում ընթացող մարտական գործողությունները ևս մեկ անգամ վկայում են, որ յուրաքանչյուր գյուղ սոսկ որոշակի տարածք ընդգրկող մեկ միավոր չէ: Այն մեր մնացյալ հայրենիքին կապվում է ոչ միայն այնտեղ ապրող ժողովրդով, եղած հուշարձաններով, այլև միահյուսված է բնական գոգավորությունը և ջրային ցանցով, ու ամեն բնակավայրի պաշտպանությունը, առաջին հերթին, լինելով տեղացիների գործը, միաժամանակ մնացյալ ժողովրդի պարտքն է, որովհետև կորստյան դեպքում միայն ինքը չէ, որ ընկնում է, այլև իր հետ տանում է նաև շրջակա բնակավայրերը՝ առավել մեծացնելով հայոց պատմություն կորուստների ժամանակագրության շղթան:

Գ.

**Ազատագրված տարածքի
ռազմավարական արժեքը
և
Արցախի հիմնախնդիրը:**

14.

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդիրները և Հայաստանի աշխարհառազմավարական դրությունը*

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

Ղարաբաղյան հակամարտության որևէ վերլուծություն պետք է սկսվի հետևյալ հարցին ճիշտ պատասխան տալով. ի վերջո, հանուն ինչի՞ է մղվում այս հակամարտությունը: Այսինքն՝ պետք է մեկընդմիջտ ճշտել, թե ո՞րն է Ղարաբաղյան հակամարտության բուն արմատը՝ սոսկ Արցախի հայության ապագա՞ն թե՞ Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ անվտանգությունն ու զարգացման հեռանկարները:

Երկրորդ. հասկանալի է, որ Ղարաբաղյան հակամարտության սառեցումն այսօրվա վիճակով՝ ադրբեջանա-թուրքական շրջափակման և ռազմական խոչոր ծախսերի շարունակության պայմաններում, ծանրագույն բեռ է Հայաստանի դեռևս լիովին չկայացած պետականության համար: Սակայն արդյո՞ք հակամարտության կարգավորման՝ Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության (այսուհետև՝ ԵԱՀԿ) Մինսկի խմբի մշակած ծրագիրը խոստանում է Հայաստանին առավել բարենպաստ արտաքին շրջադրություն, թե՞ այդ ծրագրի կիրառումը կարող է է՛լ ավելի բարդացնել հայկական պետության ներկա ճգնաժամային կացությունը:

Նշված հարցադրումները պարզաբանելու համար անհրաժեշտ է ճիշտ պատկերացնել Ղարաբաղյան հակամարտության խորքային՝ բուն պատճառները և զարգացման ներքին տրամաբանությունը: Միայն դրանից հետո հնարավոր կլինի գտնել այդ պատճառների վերացման կամ չեզոքացման հնարավորություններն ու եղանակները:

* Արմեն Այվազյան, Գիմնատարրեր Գայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի, Մասն Ա: Երևան, «Սամարկ», 2-րդ լրացված և մշակված հրատ. Երևան, «Լուսակն», 2004, էջ 64-94 (տպագրվում է կրճատումներով):

Ղարաբաղյան Հակամարտության զարգացման երկու ետնախորքը

Ղարաբաղյան Հակամարտությունը զարգանում է երկու ետնախորքի մեջ՝ ռազմավարական ու դիվանագիտական-իրավական:

Ռազմավարական ետնախորքը բազիսայինն է, այն ընդգրկում է Հակամարտության դրդապատճառների և խթանիչների աշխարհաքաղաքական (geopolitical), աշխարհատնտեսական (geo-economic) և բուն ռազմական ամբողջ Համադրությունը:

Դիվանագիտական-իրավական ետնախորքը վերնակառուցային է, այն ներառում է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում վարվող բանակցությունները, որոնք արտաքնապես ընթանում են միջազգային իրավունքի նորմերի Համաձայն:

Հակամարտության Հաջող կարգավորումը կախված է նրանից, թե վերնակառուցային մակարդակում որքանով են ճիշտ հասկանում, ապա և փորձում Համապատասխան պատասխաններ գտնել բազիսային մակարդակի վրա ընթացող զարգացումներին: Այլ կերպ ասած՝ դիվանագետների մշակած առաջարկությունները կարող են Հաջողություն ունենալ միայն այն դեպքում, եթե նրանք գիտակցեն և ձգտեն վերացնել Հակամարտության բուն պատճառները: Հայտնի օրենքի Համաձայն՝ վերնակառուցային և բազիսային զարգացումների միջև մեծ չափերի Համող անհամապատասխանությունը վտանգավոր է: Ղարաբաղյան դեպքում՝ այդպիսի անհամապատասխանությունը ուշ թե շուտ, անգամ խաղաղ Համաձայնագրերի կնքումից Հետո, անպատճառ ծնելու է նոր Հակամարտություն:

Ստորև քննելու ենք Ղարաբաղյան Հակամարտության բազիսային ռազմավարական շերտը:

Պատմական ետնախորքը

Պատմական առումով՝ 1988-ից մինչև օրս շարունակվող Ղարաբաղյան Հակամարտությունն անջատ դրվագ չէ, այլ օրգանական շարունակությունն է 1890-ականներից մինչև 1923 թվականը ձգված Հայ-թուրքական (օսմանյան) Հակամարտության: Դժբախտաբար, 1905-1906 թվականներից ի վեր Հայ-թուրքական Հակամարտության բազիսային մաս է եղել Այսրկովկասում ընթացող Հայ-թաթարական Հակամարտությունը: Հակահայկական ուղղվածու-

Թյուն ունեցող թուրք-թաթարական ռազմաքաղաքական դաշինքը բացահայտորեն դրսևորվել է 1905-1906 թթ., 1918-1921 թթ. և արդի՝ 1991-ից ցայսօր շարունակվող պատմական ժամանակահատվածներում: Առանց խորանալու պատմության մեջ, հիշեցնենք, որ դարակզբի հայ-թուրք/թաթարական հակամարտության հիմքում ընկած էր Օսմանյան կայսրության՝ հայ ազգի բնաջնջման և Հայաստանին տիրանալու քաղաքականությունը: Արդյունքում՝ լիովին հայաթափվեց պատմական Հայաստանի արևմտյան մասը և մասամբ Արևելյան Հայաստանը:

Հակամարտության արդի ռազմավարությունները

Հայ-թուրք/ադրբեջանական հակամարտության արդի փուլը բնորոշվում է Թուրքիայի, Ադրբեջանի, Հայաստանի հետապնդած հետևյալ ռազմավարություններով (*strategies*):

Թուրքիայի արտաքին քաղաքականության առաջնահերթ ռազմավարական խնդիրներից է՝ ամրացնել իր դիրքերը նորերս առաջացած ու դեռևս վերջնական ձևավորում չստացած Կովկասյան-Միջինասիական աշխարհառազմավարական տարածաշրջանում: Անկարայի՝ այս նպատակին հասնելու գլխավոր միջոցներից է թյուրքախոս 5 նորանկախ պետությունների՝ Ադրբեջանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի, Թուրքմենստանի հետ տնտեսական-քաղաքական հարաբերությունների խորացումը, հնարավորության դեպքում՝ ընդհուպ մինչև միջպետական քաղաքական-ռազմական միություն ստեղծումը (Ադրբեջանի հետ արդեն իսկ իրագործվում են ռազմական համագործակցության բազմաթիվ պայմանագրեր ու ծրագրեր):

Ադրբեջանական Հանրապետության ռազմավարական խնդիրներն են՝ ա) ամրապնդել իր անկախությունը Ռուսաստանից՝ կառուցելով և շահագործելով Ռուսաստանը շրջանցող նավթամուղեր ու գազամուղեր, բ) ապահովել սակավաթիվ բնակչություն (մոտ 150,000 մարդ) ունեցող և գլխավորապես Հայաստանով ու Իրանով շրջապատված Նախիջևանի ռազմական ու տնտեսական անվտանգությունը:

Ե՛վ Թուրքիայի, և՛ Ադրբեջանի նշված երկարաժամկետ նպատակները Հրամայականորեն պահանջում են Ռուսաստանի ազդեցության ոլորտի հետագա նեղացում և, զուգահեռաբար՝ հայկական

սեպի վերացում: Եվ սա ո՛չ թե հատուկ հայատյացություն կամ պանթուրքիստական գաղափարախոսություն պատճառով, այլ պարզապես շատ հատակ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերի թելադրանքով: Հայատյացությունն ու պանթուրքիզմը ընդամենը այդ նպատակներին ծառայող օգտակար միջոցներ են:

Հայաստանի Հանրապետության ռազմավարական խնդիրն է՝ դիմագրավել թուրք-ադրբեջանական ճնշմանը, ապահովել իր երկարաժամկետ անվտանգությունը, կայանալ որպես կենսունակ անկախ պետություն: Մինչդեռ ո՛չ Ադրբեջանը, ո՛չ էլ առավել ևս Թուրքիան իբրև պետություն և ազգ վերապրելու խնդիր չունեն, այդ խնդիրն իր ողջ ծանրությունը շարունակում է կախված մնալ Հայաստանի և հայ ազգի վրա:

Այսպիսով՝ արդեն մեկ հարյուրամյակ ձգվող այս հակամարտության առանցքում ընկած է, մի կողմից՝ «հայկական սեպը» վերացնելու Թուրքիայի և Ադրբեջանի նպատակը, մյուս կողմից՝ դրան հակադրվող Հայաստանի գոյապայքարը: Ուստի, խոսքը ո՛չ թե սոսկ Ղարաբաղի, այլ նույն չափով Հայաստանի Հանրապետության անվտանգության մասին է: Ղարաբաղյան հակամարտությունը վերաբերում է Հայաստանի (ներառյալ Արցախի) գոյությունը՝ լինե՞լ, թե՞ չլինելուն:

Ղարաբաղյան հակամարտության երկու առանցքը

1921 թ. դրությամբ հակամարտությունը սառեցվեց հայկական կողմի համար ծանր պայմաններով. Այբրկովկասում գծվեցին այնպիսի սահմաններ, որոնք 1918-1920 թթ. սցենարի հնարավոր ապագա կրկնության դեպքում Հայաստանը դարձնելու էին անկենսունակ պետություն: Հայտնվելով թուրք-ադրբեջանական մուրճի և սալի միջև, Հայաստանն արագորեն կորցնելու էր լրիվ անպաշտպան մնացած Սյունիքը (Զանգեզուրը) ու, դրա հետ միասին՝ նաև իր անկախությունն ու բնականոն զարգացման հնարավորությունները:

ՀԽՍՀ հիմքի վրա վերածնվելիք հայոց անկախ պետականության ապագա կայացումը կապված էր Ղարաբաղի և Նախիջևանի հետ վերամիավորվելու հնարավորության հետ: Նախիջևանի լիակատար հայաթափությունից հետո Ղարաբաղն այլևս միակ դիրքն էր Սյունիքն ու Սյունիքի հետ միասին Իրանի հետ Հայաստանի կենսատու սահմանը պահպանելու և պաշտպանելու համար: ԽՍՀՄ փլուզմա-

նը զուգընթաց՝ կյանքի կոչվեց 1920-1923 թթ. ուրվագծված սցենարը և Հայաստանի նորանկախ պետականությունը Հայտնվեց լինել-չլինելու վտանգի առջև: Ընդ որում, այս անգամ Թուրքիան կարող էր մնալ խաղաբեմի հետևում, մինչդեռ, Սյունիքի զավթումով, Հայաստանի պետականությունը մահացու հարված հասցնելու դերը կատարելու էր Ադրբեջանը:

Բանն այն է, որ 1921-1924 թթ. գծված սահմանները զրկում են Հայաստանի հարավային հատվածը՝ Սյունիքը՝ ռազմավարական որևէ խորությունից: Այդ սահմանների վերահաստատման դեպքում Սյունիքը կարող է ենթարկվել ինչպես հանկարծակի հարձակման, այնպես էլ «սահմանային» անվերջ սադրանքների: Ինչպես ցույց է տալիս փորձը, «սահմանային» սադրանքներ կազմակերպելն ու այնուհետև հակառակորդին դրանց մեջ մեղադրելը որևէ դժվարություն չի ներկայացնում, այն էլ լեռնային բարդ ռելիեֆ ունեցող շրջաններում (այս առումով հատկապես խոցելի է Սյունիքի սիրտը՝ Կապանը): 1000 միջազգային դիտորդն էլ ի վիճակի չի լինի ճշտելու, թե ո՞վ է առաջինը կրակել կամ, ասենք՝ ո՞վ է պայթեցրել Մեղրիի տարածքով անցնող ադրբեջանական գնացքը: Սադրանքներ կազմակերպելուց հետո Ադրբեջանը՝ վկայակոչելով հայկական կրակակետերը լռեցնելու և Նախիջևանի անվտանգությունը ապահովելու ռազմական անհրաժեշտությունը և ունենալով Թուրքիայի գաղտնի կամ բացահայտ աջակցությունը, կանցնի ավելի վճռական գործողությունների՝ ձեռնարկելով ընդհուպ ամբողջ Սյունիքը կամ նրա հարավային մասը զավթելու փորձ: Հնարավոր միջազգային հակազդեցությունից խուսափելու համար, Բաքուն կարող է նաև դիմել Սյունիքի տարածքի ժամանակավոր բռնագրավմանը, այնպես ինչպես Թուրքական զորքերը պարբերաբար «ժամանակավորապես» գրավում են Հյուսիսային Իրաքը կամ ինչպես նույնը անում է Իսրայելը՝ հարավային Լիբանանում: Բնականաբար, այդ ժամանակավոր բռնագրավման ժամանակ Սյունիքի տնտեսական ամբողջ ենթակառուցվածքը ենթարկվելու է ոչնչացման և թալանի՝ զրկելով փախուստի դիմած ազգաբնակչությանը իրենց տները վերադառնալու թե՛ հնարավորությունից, և թե՛ ցանկությունից:

Ավելին՝ գուցե այդ ներխուժման անհրաժեշտությունն էլ չառաջանա: Սյունիքը ոչ միայն թիկունքագերծ է և անպաշտպանունակ երկու կողմից ձեռնարկված խոշոր հարձակման դեպքում, այլև գրեթե ամբողջովին հասանելի է արդի հրետանային համակարգերի ուժբազարությունը: Մարզի կենսագործունեությունը կաթվածահար ա-

ներու և բնակչութեան արտահոսք առաջացնելու համար բավարար կլինեն «սահմանային» հորջորջվելիք բախումները: Ղարաբաղում հայկական իշխանութեան և բանակի չգոյութեան պարագայում Սյունիքը դատապարտված է:

Այսպիսով, Ղարաբաղյան ազատամարտը ոչ միայն արցախահայութեան ազատագրութեան համար մղված պատերազմ էր, այլ դրանից էլ առավել՝ միակ հնարավորութիւնն էր Սյունիքը պաշտպանելու և Հայաստանը թուրք-ադրբեջանական գերիշխանութիւնից (իմա՝ կործանումից) փրկելու համար: Միմիայն շնորհիվ Ղարաբաղյան ազատամարտի ընթացքում տոնած փայլուն հաղթանակների հաջողվեց ամրապնդել և կայունացնել Հայաստանի ռազմական անվտանգութիւնը: Արցախի հայաթափութեան կամ Արցախում հայկական հզոր զինված ուժի չեզոքացման դեպքում՝ Հայաստանն անխուսափելիորեն հայտնվելու է թուրքական թելադրանքի տակ և չի վերապրելու ո՛չ հոգեպես, ո՛չ էլ տնտեսապես, նույնիսկ անկախ նրանից, թե Սյունիքը ձեռնարկներ կմնա՞ Հայաստանի մաս, թե՞ մասամբ կամ ամբողջովին կենթարկվի բռնազրավման: Ի չիք է լինելու Հայաստանի՝ իբրև կենսունակ անկախ պետութեան կայացումը:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի ողնաշարը ջարդելու խնդիրը թուրքերին և ադրբեջանցիներին թվում էր հեշտ իրագործելի, «զինվորական պարահանդեսի» պես մի բան, քանի որ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմաններն անբնական էին և խոցելի, գրեթե ամենուր գծված լինելով այնպես, որ աշխարհագրական-դիրքային առավելութիւնը տրվեր Ադրբեջանին: Մասնավորաբար՝

ա. Խորհրդային տարիներին ամբողջութեամբ հայաթափութեան ենթարկվելով՝ Նախիջևանը վերածվել էր Հայաստանի մարմինը ծվատող քաղցկեղային գոյացութեան ու նաև հրաշալի ռազմահենարաշտի՝ պատերազմը մինչև Հայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտ ու քաղաքամայր Երևան հասցնելու համար:

բ. Արցախում ադրբեջանական ուժերի վերահսկողութեան տակ էին իշխող բարձունքներից շատերն ու ռազմական տեսակետից հույժ կարևոր անառիկ Շուշին:

գ. Արցախն ամբողջութեամբ չըջապատված էր ու մեկուսացված և գրեթե ամբողջովին ենթակա հրետակոծութեան:

Այս անգամ Հայաստանին մահացու հարված հասցնելու խնդիրը կատարելու էր Ադրբեջանը, իսկ թուրքիան մնալու էր վարա-

գույրի հետևում՝ խոսսափելով Ռուսաստանի հետ բախումից և անցանկալի միջազգային բարդություններից ու քննադատությունից: Սակայն, շնորհիվ Արցախում և Հայաստանում ժամանակին կազմակերպված պատշաճ ինքնապաշտպանություն, այս ծրագրերը դատապարտվեցին լիակատար ձախողման:

Հայ-թուրք/ադրբեջանական հակամարտության արդի փուլը՝ Ղարաբաղյան հակամարտությունը ընթանում է միմյանց անանջատ կերպով շողկապված երկու առանցքի շուրջը՝ պայքար հանուն արցախահայության ազատության և Սյունիքի պաշտպանունակություն: Հայաստանը չի կարող դառնալ կենսունակ պետություն առանց Արցախում հայկական իշխանության ու գրինված ուժերի մշտական և անկաշկանդ գոյություն:

Ներկա ռազմավարական իրադրությունը

Արցախյան փայլուն հաղթանակներն ու տարածքային հայտնի առաջխաղացումները եկան ամրապնդելու Հայաստանի (ներառյալ Արցախի) ռազմական անվտանգությունը: Այս առումով հատկապես կարևոր են հետևյալ հանգամանքները.

ա) Հայաստանի և Արցախի միջև տարածքային անմիջական և անխափան հաղորդակցություն գոյությունը.

բ) Ադրբեջանի և Նախիջևանի միջև այդպիսի հաղորդակցության կատարյալ բացակայությունը.

գ) Հայկական կողմի վերահսկողության տակ գտնվող տարածքների՝ հարաբերական բարձունքում գտնվելը, որ հեշտացնում է և՛ պաշտպանական, և՛ հարձակողական գործողությունների հնարավորությունը.

դ) Հայկական բանակի՝ հարաբերականորեն ավելի լավ կազմակերպվածությունն ու բարոյահոգեբանական վիճակը:

Այսպիսով, այսօրվա դրությամբ, Հայաստանն Ադրբեջանի նկատմամբ ունի ռազմավարական զգալի առավելություն, որը պետք է ամեն գնով պահպանել:

Սրանով հանդերձ, ներկայումս Հայաստանի ռազմավարական ընդհանուր դրությունը մնում է ծանր: Շարունակվում է թուրք-ադրբեջանական շրջափակումը: Ադրբեջանը վերագրիտում ու վարժեցնում է իր բանակը՝ նոր պատերազմ սկսելու և հաղթանակելու հույսով: Թուրքիան աջակցում է Ադրբեջանին բոլոր բնագավառներ

րում՝ դիվանագիտական, քարոզչական, տնտեսական, հետախուզական և ռազմական :

Կանխատեսելի կարճաժամկետ հեռանկարում իրադրությունն, ամենայն հավանականություններով, զարգանալու է հետևյալ իրողությունների շուրջ:

Ադրբեջանի և Թուրքիայի վրա չկա և չի սպասվում նշանակալի արտաքին (միջազգային) այնպիսի ճնշում, որը կպարտադրեր նրանց հրաժարվել կամ գոնե մեղմացնել Հայաստանի և Արցախի հանդեպ որդեգրած անզիջում դիրքորոշումը: Այդ երկու դաշնակից պետությունները հետևողականորեն շարունակելու են Հայաստանը քայքայել փորձող իրենց այսօրվա թշնամական քաղաքականությունը՝ չըջափակումները, քարոզչական պատերազմը, ռազմական լայնածավալ պատրաստությունները: Իսկ Թուրքիայի և Ադրբեջանի՝ ռազմավարական դաշնակիցներ լինելու փաստն արդեն որևէ մեկի մոտ կասկած չի առաջացնում: Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի խոսքերով իսկ՝ «Թուրքիայի հետ մեր ռազմական հարաբերությունները արդեն վերածվել են ռազմավարական համագործակցություն»¹:

Այսպիսի պայմաններում հայկական կողմը, ինչպիսի արտաքին ճնշում էլ գործադրվի, չի դիմելու միակողմանի տարածքային զիջումների, որովհետև այդպիսի զիջումները, բարելավելով Ադրբեջանի (համապատասխանաբար՝ Թուրքիայի) Հայաստանի ռազմավարական ընդհանուր վիճակը, միայն կմեծացնեն պատերազմի հավանականությունը:

Հայաստանը ֆիզիկապես չի կարող գոյատևել 29,000 մ² վրա՝ առանց Արցախյան պատենչի:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ռազմավարական սկզբունքները

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ տարվող բանակցություններում հայկական կողմի համար անփոփոխ պետք է լինեն հետևյալ դիրքորոշումները.

1. Ազատագրված տարածքները, պատմականորեն հայկական հող լինելով հանդերձ, նաև անվտանգության երաշխիք են: Բնականաբար, տարածքային զիջումները՝ հօգուտ Ադրբեջա-

նի, կտրուկ իջեցնելու են հայկական կողմի ռազմավարական անվտանգություն մակարդակը:

2. Հետևաբար, եթե երբևէ հայկական կողմը զիջում կատարի հօգուտ Ադրբեյջանի, ապա այդ զիջումը պետք է փոխհատուցվի, նախ և առաջ, անվտանգություն բնագավառում, այնուհետև՝ նաև իրավական, բարոյական ու տնտեսական առումներով: Հայկական կողմը Ադրբեյջանից պետք է ստանա ռազմավարական համարժեք և վերահսկելի զիջումներ, անվտանգություն ամրակուռ երաշխիքներ:
3. Ղարաբաղյան հարցի լուծման նկատմամբ Հայաստանի որդեգրելիք գլխավոր սկզբունքը պետք է լինի հետևյալ ձևակերպումը՝ հակամարտության վերջնական կարգավորումը չպետք է հանգեցնի Հայաստանի և Արցախի ռազմավարական անվտանգություն մակարդակի իջեցմանը:

Այսուհանդերձ, միջազգային և տարածաշրջանային ներկա պայմաններում հայկական կողմի տարածքային որևէ զիջում արդարացված չի լինի: Չի կարելի մոռանալ, որ Ղարաբաղյան հակամարտությունը «երկհարկանի» է. «առաջին հարկում» այն ընթանում է հակամարտության անմիջական մասնակիցների (Հայաստանի, Արցախի, Ադրբեյջանի, ինչպես նաև Թուրքիայի) միջև, իսկ «երկրորդ հարկում»՝ տարածաշրջանում մեծ կշիռ ունեցող տերությունների (հատկապես՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Իրանի և դարձյալ Թուրքիայի) միջև: «Առաջին հարկում» ընթացող հակամարտության մարումը չափազանց դժվար է լինելու, եթե «երկրորդ հարկում» հակամարտողները չհասնեն բոլորին ընդունելի մի ինչ-որ համաձայնություն (modus vivendi): Սակայն արդի զարգացումների, հատկապես Չեչնիայում, Աֆղանստանում և Իրաքում ընթացող իրադարձությունների վերլուծությունը հանգեցնում է սթափեցնող եզրակացության, այն է՝ մեծ տերությունների բախումն Այսրկովկասում և Միջին Ասիայում երկարելու է՝ բարդացնելով տարածաշրջանի փխրուն կայունությունը: Ցավոք, սառը պատերազմի ավարտից հետո մեզ համար աշխարհը չի դարձել առավել անվտանգ վայր: Ընդհակառակը, Այսրկովկասն ու Միջին Ասիան այսօր այն տարածաշրջաններն են, որտեղ ընթանում է մի նոր՝ «միջին» սառը պատերազմ² ու, հետևաբար, ծիծաղելի կլինի, եթե վստահենք սեփական անվտանգություն ապահո-

վումը միմյանց միջև կատաղի պայքար մղող ուժերի համատեղ խոստացած երաշխիքներին³: Այս տարածաշրջանում և միջազգային այսպիսի իրադրություն մեջ Հայաստանին խոստացվող անվտանգության երաշխիքները (համենայն դեպս այն տեսքով, որով մինչև վերջերս դրանք առաջարկվել են և բավականաչափ հայտնի են) կարող են թյուրիմացության մեջ գցել միամիտ գործիչներին միայն:

ԵԱՀԿ Մինսկի խմբի ծրագրի կառուցվածքային թերուժյունները

1992 թ. գարնանից ի վեր Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության (մինչև 1994 թ. դեկտեմբեր՝ Խորհրդակցության) շրջանակներում ընթանում են Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը նվիրված բանակցություններ: Ցայսօր դրանք կենտրոնացել են միայն «սառցաբեկորի» անմիջականորեն երևացող վերին՝ փոքր մասի վրա, այն է՝ արդյո՞ք արցախահայությունն Ադրբեյջանից անջատ ապրելու իրավունք ունի թե՞ ոչ: Հայաստանի երկարաժամկետ ռազմավարական անվտանգության խնդիրներն առհասարակ չեն արծարծվել: Այսպիսի մոտեցումն արտացոլում է Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ այսպես կոչված «միջազգային հանրության» կամ, որ նույնն է՝ մեծ տերությունների պատկերացումները, չներկայացնելով ո՛չ հայկական կողմի, ո՛չ ադրբեյջանական-թուրքական կողմին): Մինչդեռ ԵԱՀԿ շրջանակներում գործող միջազգային միջնորդները (հատկապես՝ ԱՄՆ-ն և Եվրոպական Միությունը) դիտում են Ղարաբաղյան հակամարտությունը միջազգային արդի զարգացումների և իրենց անմիջական շահերի տեսանկյունից, Հայաստանը, Ղարաբաղը, Ադրբեյջանը և Թուրքիան ընկալում են նույն հակամարտությունը վերոհիշյալ պատմա-ռազմավարական ետնախորքի մեջ: Ինչպես ցույց է տալիս ստորև շարադրված աղյուսակը, ռազմավարական ընկալումների տարբերությունները միջազգային միջնորդների և հակամարտության

անմիջական մասնակիցների միջև նշանակալից են:

ԱՂՅՈՒՍԱԿ Ա.

Ղարաբաղյան Հակամարտության անմիջական մասնակիցների (ՂՀԱՄ) և ԵԱՀԿ Մինսկի խմբի (ՄԽ) ռազմավարական մտածողության հիմունքային տարբերությունները⁴

1. Պատմա-ժամանակագրական մոտեցում

ՂՀԱՄ — Հակամարտությունն ունի հարյուրամյա պատմություն և շարունակվելու է ՄԽ մշակած կարգավորման ծրագրի գործադրումից հետո.

ՄԽ — Հակամարտությունն սկսվել է 1988 թ. և ՄԽ մշակած կարգավորման ծրագրի գործադրումից հետո անմիջապես ավարտվելու է.

2. Տարածքային մոտեցում

ՂՀԱՄ — Հակամարտությունը վերաբերում է ներկա Հայաստանի և Ադրբեջանի զբաղեցրած ամբողջ տարածությունը, ինչպես նաև Թուրքիայի արևելյան շրջաններին.

ՄԽ — Հակամարտությունը վերաբերում է միայն Ղարաբաղին և նրա շուրջն ընկած տարածքներին.

3. Անվտանգության երաշխիքներ

Հայաստան և Ղարաբաղ — պարտադիր են Ղարաբաղի, ինչպես նաև Հայաստանի, հատկապես՝ Սյունիքի համար.

Ադրբեջան և Թուրքիա — պարտադիր են Նախիջևանի համար.

ՄԽ — պարտադիր են Ղարաբաղի համար.

4. Ղարաբաղյան խաղաղապահ զինուժի ներկայություն տևողության ցանկալիությունը

Հայաստան և Ղարաբաղ — այդ ներկայությունը կա՛մ առհասարակ անցանկալի է (անվստահելիության պատճառով), կա՛մ հնարավորին չափ երկար.

Թուրքիա, Ադրբեջան և ՄԽ — հնարավորին չափ կարճ:

Ռազմավարական ընկալումների այս մեծ տարբերություններն ինքնըստինքյան սահմանազատում են Հակամարտության չորս անմիջական մասնակիցներին մյուս շահագրգիռ կողմերից:

Թերևս, ամենասկզբում՝ 1992 թ. առաջին կեսին, բանակցությունների բեռնացումը սոսկ տվյալ պահի և տեղի վրա որոշ չափով արգարացված էր: Նախ՝ քննվելիք հարցերի քանակի կրճատումով մեծապես թեթևանում էր բանակցությունների օրակարգը: Երկ-

որոգ՝ ԵԱՀԽ միջնորդութան նախնական նպատակները բավական համեստ էին, այն է՝ նստեցնել հակամարտող կողմերին բանակցությունների սեղանի շուրջ, կնքել զինադադար և ընդունելի օրակարգ որոշել հետագա բանակցությունների համար: Այս տեխնիկական նպատակներին հասնելու համար անիմաստ էր հակամարտության արմատների մեջ խորանալը: Սակայն երկարաժամկետ առումով նույն այդ նեղ հարցակարգը դարձավ ամենամեծ խոչընդոտը հակամարտության կարգավորման ճանապարհին:

1992 թ. մարտի 24-ին Հելսինկիում կայացած ԵԱՀԽ Խորհրդի արտակարգ նիստն⁵ ընդունեց ինը կետանոց մի փաստաթուղթ, որով էլ սահմանվեցին բանակցությունների կանոնները: Նախատեսվում էր անցկացնել բանակցությունների երկու փուլ. առաջինը պետք է զբաղվեր զինադադարի կնքման, «գրավյալ» տարածքներից զորքերի դուրս բերման և հաղորդակցության ուղիների ապաշրջափակման հարցերով, երկրորդը կայանալու էր Մինսկում՝ որպես խորհրդաժողով, իր օրակարգում ունենալով ԼՂ-ի կարգավիճակի հարցը (այս խորհրդաժողովը տակավին չի գումարվել): Հակամարտության լիբրավ կողմեր ճանաչվեցին, փաստորեն, միայն Հայաստանն ու Ադրբեյջանը, մինչդեռ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները, որոնք մարտի 24-ի փաստաթղթում անվանված են «ԼՂ ընտրված ներկայացուցիչներ» պետք է մասնակցեին Մինսկի կոնֆերանսին իբրև «չահագրգիռ կողմ»: Նույն փաստաթղթով Բաքուն և Անկարան հաջողեցին բանակցություններին մասնակից դարձնել նույնիսկ զարաբաղցի ադրբեյջանցիներին՝ «ԼՂ այլ ներկայացուցիչներ» անվան տակ⁶ (թեև սրանց մասնակցությունը բանակցություններին երբեք լուրջ չի ընդունվել):

Եվ այսպես, 1992 թ. առաջին կեսին Հայաստանի անփորձ դիվանագիտությունը որպես բանակցությունների հիմք ընդունեց ԵԱՀԿ Մինսկի խմբի հապշտապ ու կողմնակալ կերպով կազմված օրակարգը: Տասներկուամյա հեռավորությունից նայելով, կարելի է վստահ ասել, որ հատկապես մեծ սխալ էր մեր տված համաձայնությունը Մինսկի խմբի աշխատանքային կանոնադրության երկու կետերին. մի կողմից՝ Թուրքիային որպես միջնորդ ընդունելը, մյուս կողմից՝ ԼՂ-ն հակամարտության իրական կողմ չճանաչելը: Այդ ժամանակից ի վեր մեզ պարտադրվեց մի խաղ, որի կանոնները մենք չէինք սահմանել:

Այսպիսով, ԵԱՀԿ շրջանակներում վարվող բանակցություններն սկզբից մինչև այսօր ունեցել են երեք հիմունքային ֆունկցիոնալ

թերությունն.

1. անտեսվել է Ղարաբաղյան հակամարտության անմիջական մասնակիցների (ՂՀԱՄ) ռազմավարական մտածողությունը, որը, ի թիվս այլ տարրերի, ներառում է նաև պատմա-հոգեբանական խորը շերտեր.
2. Հակամարտության մասնակիցներից մեկը՝ Հայաստանը, անընդունակ է գտնվել իր ռազմավարական մտավայրությունները պարզ և բաց ներկայացնելու ու, թերևս, նաև ամբողջովին գիտակցելու դրանք.
3. Թուրքիան՝ Ղարաբաղյան հակամարտության անմիջական մասնակիցներից մյուսը, ոչ միայն չի ճանաչվել որպես այդպիսին, այլև ներգրավվել է միջնորդների խմբի մեջ:

1997 թ. հոկտեմբերին Ադրբեջանն ու Հայաստանը ընդունեցին ԵԱՀԿ միջնորդների առաջարկած հակամարտության կարգավորման ծրագրի հերթական տարբերակը, մինչդեռ Ղարաբաղը կտրականապես մերժեց այն: Այդ ծրագիրը նախատեսում էր երկու փուլ. առաջինի ընթացքում՝ հայկական զորքերի դուրսբերում «գրավյալ» վեց շրջաններից, ԵԱՀԿ խաղաղապահ զինուժի տեղաբաշխում հայկական և ադրբեջանական զորքերի միջև և հաղորդակցության ուղիների ապաշրջափակում. երկրորդ փուլում բանակցություններ են վարվելու Ղարաբաղի կարգավիճակի մասին և, միաժամանակ՝ Լաչինն ու Շուշին ադրբեջանական իշխանության տակ դնելու հարցերը⁷:

Եթե, այնուամենայնիվ, ԵԱՀԿ Ղարաբաղյան ծրագիրը կյանքի կոչվի, ապա Ղարաբաղի անվտանգությունը մեծապես կախված է լինելու ԵԱՀԿ Ղարաբաղյան խաղաղապահ զինուժի (այսուհետև՝ պայմանականորեն անվանում ենք ՂԽԶ) հստակ և հաջող գործունեությունից: ՂԽԶ-ի անհաջողությունը կամ տարածաշրջանից վաղաժամ հեռանալը նշանակելու են հայկական կողմի պարտություն և ադրբեջանական կողմի հաղթանակ՝ Հայաստանի անկախությանն ապառնող վերը նկարագրված հետևանքներով:

Ստորև նշում ենք ՂԽԶ-ի ծրագրային-կառուցվածքային բնույթի հիմնական թերությունները: Մեջբերվող տեղեկությունները մասամբ հայտնի են տողերիս հեղինակին 1993-1994 թթ. ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցություններին բերած անձնական մասնակցությունից, մասամբ էլ՝ հետագայում հրապարակված նյութերից, ինչպես նաև հայ ու օտարազգի դիվանագետների տրամադրած թարմ տեղեկություններից:

Ա. Տարածաշրջանում մնալու ժամկետի կարճատևությունը

Ինչպես վերը շեշտել ենք, 20-րդ դարի ողջ ընթացքում հայ-թուրք/ադրբեջանական հարաբերությունները ունեցել են զարգացման միևնույն աններդաշնակ միտումը, որն, անկախ մեր ցանկությունից, դեռ երկար է պահպանվելու: Այժմ որևէ հիմք չունենք ենթադրելու, թե մոտ ապագայում միջազգային հարաբերությունները թևակոխելու են մի անզուգական խաղաղության դարաշրջան, աշխարհի ժողովուրդներն ու պետություններն ապրելու են աստվածաշնչյան մարգարեություններով գուշակված կատարյալ փոխըմբռնման պայմաններում և Հայաստանին սպառնող թուրք-ադրբեջանական վտանգը ի չիք է լինելու: Հետևաբար, ՂԽԶ-ի ամենամեծ թերությունն այն է, որ այն նպատակ ունի մնալու Արցախի շուրջը մի շատ կարճ ժամանակահատված, մեր ունեցած տեղեկությունների համաձայն՝ ընդամենը երկու տարի: Անգամ եթե ընդունենք, որ ՂԽԶ-ն կմնա տարածաշրջանում տասը կամ նույնիսկ քսան տարի (որ գրեթե անհնար է և, ամենակարևորը՝ որևէ պայմանավորվածություններ երաշխավորված չէ) և հաջողությամբ կկատարի իր առջև դրված պարտականությունները, միևնույն է՝ ի վերջո այդ գինուժը հեռանալու է, թողնելով Հայաստանն ու ԼՂՀ-ն ռազմավարական տեսակետից անհամեմատ ավելի խոցելի վիճակում, քան մինչև ազատագրված տարածքներից հայկական ուժերի դուրս բերումը:

ՂԽԶ-ի գործունեություն կարճատևությունը ամրագրված է դեռևս 1992 թ. հուլիսի 9-ին և 10-ին Հեյսինկիում անցկացված ԵԱՀԽ գազաթափողովի ընդունած՝ «Փոփոխություն մարտահրավերները» գլխավոր փաստաթղթում: ԵԱՀԿ խաղաղապահության գլխավոր դրույթներն սահմանված են այդ փաստաթղթի Գ գլխում, որի 25-րդ կետը հստակ նշում է, որ «չպետք է կարծել, թե [ԵԱՀԽ] խաղաղապահական գործողությունները փոխարինելու են բանակցությունների միջոցով հասանելիք [հակամարտությունների] կարգավորումը, ուստի պետք է պարզ լինի, որ այդ գործողությունները կարճատև կետ են լինելու»⁸: ՂԽԶ-ի առաքելությունը մշակող ԵԱՀԿ Բարձր մակարդակի ծրագրավորող խմբի (ԲՄԾԽ)⁹ սպաները նույնպես հատուկ նկատում են, որ «ևս մեկ անգամ պետք է ընդգծել, որ [Ղարաբաղյան] գործողությունը կտևի միայն հաստատված ժամանակահատվածի մեջ և կդադարեցվի հնարավոր ամենավաղ

պահին» (“it should be emphasized once more that the operation will only last for a set period of time and will be terminated at the earliest possible date”):¹⁰

Հաջորդ արգելքը, որն ստիպելու է շուտով դուրս բերել ՂԽԶ-ն տարածաշրջանից՝ Ֆինանսական խնդիրն է: Մինչդեռ ԵԱՀԿ տարեկան բյուջեն շուրջ 30 միլիոն ամերիկյան դոլար է (ընդ որում՝ դա էլ դժվարությամբ է հավաքվում անդամ-պետություններից), ԲՄԾԽ-ի հաշվարկների համաձայն՝ Ղարաբաղյան խաղաղապահ գործողությունը կարող է տարեկան արժենալ տասնապատիկ ավելին, այսինքն՝ շուրջ 300 միլիոն դոլար¹¹: Շատ մեծ հարց է, թե արդյո՞ք այս ահռելի գումարը կհաջողվի հայթայթել թեկուզ մեկ կամ երկու տարի շարունակ, էլ չսասած տասը կամ քսան տարվա մասին: Ինչպես ցույց է տալիս նաև բոսնիական ԿԶ-ի փորձը, խաղաղապահ գործողությունների հետագա Ֆինանսավորումը միշտ բախվում է շատ լուրջ արգելքների:

Կա ևս մեկ հանգամանք, որ խափանելու է ՂԽԶ-ի տարածաշրջանում երկար մնալը: Ադդամի, Քելբաժարի, Ղուբաթլիի, Զանգեյլանի, Ֆիզուլիի և Ջերբայիլի շրջանների հանձնումով՝ ռազմաբեմի դիրքային և իրավիճակային առավելությունն ամբողջովին անցնելու է ադրբեջանական բանակի կողմը, որի պատրաստվածությունը, ի դեպ, զգալիորեն աճել է 1991-1994 թթ. համեմատությամբ: Ռազմաբեմում ունենալով այդ մեծ առավելությունը, Ադրբեջանը շարունակելու է պահանջել Լաչինը և Շուշին, ինչպես և, հորը հետևելով, չիտակ հայտարարում է նաև կրտսեր Ալիևը: Բնական է, որ հայկական կողմը չի բավարարելու Բաքվի այդ ցանկությունը: Ուստի Ադրբեջանը ձգտելու է հասնել իր այդ նպատակին կամ ՂԽԶ-ի օժանդակությամբ կամ, եթե դա չհաջողվի, ՂԽԶ-ն տարածաշրջանից արագ հեռացնելու և Ղարաբաղի (ու հնարավոր է՝ նաև Հայաստանի) դեմ ռազմական ագրեսիա իրականացնելու միջոցով: Ռազմական գործողությունները վերսկսելու պատճառաբանություններ Ադրբեջանը միշտ էլ կգտնի՝ թեկուզ հայկական զորքերի մտացածին «հարձակումը» խափանելու կամ ուղղակի Լաչինն ու Շուշին «ազատագրելու» դրոշի տակ:

Այսպիսով՝ ՂԽԶ-ն լքելու է տարածաշրջանը, հակամարտությունը որևէ արմատական լուծում չտալով ու թողնելով այն իր բուռն զարգացման շրջանում: Սա է երկարամյա միջազգային բանակցությունների որևէ շոշափելի արդյունքի չհասնելու գլխավոր պատճառը՝ երկարակեցություն բոլոր տվյալներով օժտված հայ-

թուրք/ադրբեջանական հակամարտությունը փորձում են լուծել մի շատ սահմանափակ ժամանակահատվածի մեջ: Դա նույնն է, ինչ ծանր թոքաբորբով հիվանդին որպես միակ բուժում ցավազրկիչ ներարկեն. շատ շուտով այդ դեղամիջոցի ազդեցությունը կանցնի, իսկ հիվանդությունն ավելի կխորանա:

Տարածաշրջանում ՂևՁ-ի մնալու անխուսափելի կարճատևությունը իմաստազրկում է ամբողջ գործողություն անհրաժեշտությունը (խաղաղության կայունություն շահերից դատելով), մինչդեռ ադրբեջանցիների համար ստեղծվում են հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու առավել բարենպաստ հնարավորություններ:

Բ. Ռազմական խաղաղապահության գործում ԵԱՀԿ անփորձառությունը

Իրականանալու դեպքում՝ ՂևՁ-ի կազմավորումը, տեղակայումը և գործունեությունը լինելու են ԵԱՀԿ առաջին նմանատիպ ձեռնարկը: Այդ կազմակերպությունը մինչև այժմ մասնագիտացել է, այսպես կոչված, կանխարգելիչ (պրեվենտիվ) դիվանագիտության մեջ: Զինված խաղաղապահությունն ավանդաբար եղել է ՄԱԿ-ի, իսկ վերջերս նաև ՆԱՏՕ-ի իրավասությունների և գործողությունների շրջանակներում: Հետևաբար, որպես առաջին փորձ, գործողությունն անկասկած ունենալու է լուրջ թերություններ:

Գ. ՂևՁ-ի փոքրաթիվությունն ու մանրատու որոշված կրավորականությունը

1995 թ. հուլիսի 14-ին ԵԱՀԿ ԲՄԾԽ-ն ԵԱՀԿ անդամ 54 պետություններին ներկայացրեց իր ծրագրած գործողության չորս տարբերակները.

Ա տարբերակով տարածաշրջան են գործուղվելու 240 զիտորդ և 3,560 հոգանոց խաղաղապահ զինուժ, բաղկացած երեք գումարտակից և երեք առանձին վաշտից (որոնցից մեկը պահվելու է ռեզերվում):

Բ տարբերակով՝ 200 զիտորդ և 4,200 հոգանոց խաղաղապահ զինուժ, բաղկացած հինգ գումարտակից.

Գ տարբերակով՝ 240 զիտորդ և 1,260 հոգանոց խաղաղապահ

զինուժ. և

Դ տարբերակով՝ ընդամենը 400 հոգանոց զինված դիտորդական խումբ և նրանց օժանդակող 375 հոգանոց անձնակազմ:

Այդ ժամանակ առավել հավանական էր Բ տարբերակի գործադրումը, այսինքն՝ ՂևՁ-ն լինելու էր մոտավորապես 4,200-անոց մի բազմազգ զինուժ¹²: Այդ զինվորների առնվազն 30-ից 50 տոկոսը տրամադրելու էր Ռուսաստանը, մնացածը՝ զանազան այլ երկրներ: ՂևՁ-ի անձնակազմի կազմավորմանը կամ տեխնիկայի ու ֆինանսների ապահովմանը ցանկություն էին հայտնել մասնակցել մոտ 18 պետություն¹³: Հավանական էր Բելառուսի, Չեխիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Կանադայի, Ուկրաինայի գործառնների ներգրավումը: Ամերիկացիները տրամադրելու էին ֆինանսական, նյութական ու թրիկոնքային օժանդակություն: Նկատենք, որ այդ 4,200 զինվորներին նախատեսված էր ցրել Արցախի շուրջ 400 կիլոմետրանոց բարդ լեռնային ռելիեֆ ունեցող սահմանների երկայնքով: ՂևՁ-ի տարանջատվածությունը և ցանցառ տեղաբաշխումն իսկ նշանակում է, որ այն լինելու էր խորհրդանշական, այլ ո՛չ իրական ռազմական ուժ: Թեև, տեսականորեն, անհրաժեշտություն դեպքում ՂևՁ-ն կարող է ստանալ լրամիավորումներ, սակայն կարող է նաև այնպես պատահել, որ այդ լրամիավորումները «մի փոքր» ուշանան՝ տեխնիկական կամ քաղաքական պատճառներով (ինչպես Սոմալիթում 1988 թ. և Բաքվում 1990 թ.): Ավելին՝ վերը հիշատակված Հելսինկիի 1992 թ. «Փոփոխություն մարտահրավերներ» փաստաթղթի Գ գլխի 22-րդ կետը պարզ հայտարարում է, որ ԵԱՀԿ խաղաղապահությունը չի ներառելու հարկադրիչ գործողություններ» (“CSCE peacekeeping operations will not entail enforcement action.”)¹⁴: Այսինքն՝ Ազրբեջանի հնարավոր հարձակման դեպքում ՂևՁ-ի պարտականությունների մեջ չի մտնելու զինված դիմադրություն ցույց տալը, այլ այդ խաղաղապահները, ամենայն հավանականությամբ, հրաման կստանան թաքնվել իրենց խրամատների մեջ, այնպես, ինչպես դա արեցին 1982 թ. ՄԱԿ-ի զորքերը Լիբանանում՝ Իսրայելի ներխուժման ժամանակ:

Դ. ԵԱՀԿ Ղարաբաղյան ուժերի հրամանատարությունն ոչ հստակ և ապակենտրոնացված կառուցյը

Սոմալիում միջազգային 30,000-անոց բազմազգ զինուժը կաթ-

վածահար էր եղել ՄԱԿ-ի կառույցների դանդաղաչարժուկության և անվճռականության պատճառով, թեև այդ կառույցներն ունեին խաղաղապահության և խաղաղարարության տասնամյակների փորձ: Այսպես՝ տարբեր պետությունների գործերը հաճախ գործում էին առանց պատշաճ համագործակցության: Երբ մի դեպքում ամերիկյան գործերի հրամանատար գեներալ Թ. Մոնթգոմերին խտրական գործերի հրամանատարից խնդրել էր տանկային աջակցություն ցույց տալ, վերջինս պարտավորված էր եղել նախ կապվելու Հռոմի հետ և այնտեղից թույլտվություն ստանալու¹⁵:

Սոմալիի սխալները մասամբ հաշվի առնվեցին Բոսնիայում, ապա և Կոսովոյում, որտեղ միջազգային խաղաղապահ ուժերը դրվեցին ոչ թե ՄԱԿ-ի, այլ աշխարհում ամենահզոր ռազմաքաղաքական կազմակերպության՝ ՆԱՏՕ-ի կենտրոնացված ընդհանուր հրամանատարության տակ¹⁶: Բոսնիական, ինչպես նաև դրան հետևած Կոսովոյի խաղաղարարները գործում են ՆԱՏՕ-ի միացյալ շտաբի հրամանի ներքո, անհրաժեշտության դեպքում վճռական գործողություններ իրականացնելու որոշումներն ընդունվում են ոչ թե քաղաքական, այլ զինվորական մակարդակի վրա, այսինքն՝ շատ արագ: Բացի այդ, ՆԱՏՕ-ի գլխավոր անդամ-պետությունների ռազմավարական նպատակները Բոսնիայում և Կոսովոյում հիմնականում համընկնում են: Այս ամենով հանդերձ, Կոսովոյում տեղաբաշխված 40-50-հազարանոց ընտիր զինուժը չկարողացավ (կամ չցանկացավ) կանխել տասնյակ հազարավոր սերբերի էթնիկական գտումը:

Լրիվ հակառակ բոսնիական և կոսովական խաղաղարար զինուժերի՝ ՂԽԶ-ի ընդհանուր հրամանատարը գործելու է ո՛չ թե ՆԱՏՕ-ի կամ Ռուսաստանի Գլխավոր շտաբի հրամանների ներքո (ռազմական տեսակետից՝ այդ երկու լուծումներից որևէ մեկը կլիներ ամենանպատակահարմարը), ո՛չ էլ նույնիսկ ՄԱԿ-ի բավական փորձառու զինվորական կառույցի շրջանակներում, այլ ենթարկվելու է ԵԱՀԿ բարձրագույն մարմինների որոշումներին: Շատ ազոտ է մնում այն չափազանց կարևոր հարցը, թե ինչպե՞ս են տարանջատվելու իրավասությունները ԵԱՀԿ Ղարաբաղյան զինուժի գլխավոր հրամանատարի, դաշտային հրամանատարների և ԵԱՀԿ մարմինների միջև: 1992 թ. Հելսինկիի գազաթափողովի առաջիմ չբեկանված որոշման համաձայն՝ ԵԱՀԿ խաղաղարար ուժի ընդհանուր օպերատիվ հրամանատարությունը իրականացնելու է ԵԱՀԿ նախագահի պաշտոնակատարը (Chairman-in-Office), այսինքն՝ յուրաքանչյուր 6 ամիսը մեկ փոփոխվող ԵԱՀԿ անդամ պետություններից մեկի արտ-

գործնախարարը: Նրան օժանդակելու է հատուկ ստեղծված մի խումբ, որը բաղկացած է լինելու այն պետությունների ներկայացուցիչներից, որոնք օժանդակել են ՂևՁ-ի կազմավորմանը գինավորական անձնակազմով կամ այլ կերպ: Տարածաշրջանում գտնվող առաքելություն ղեկավարը ենթարկվելու է ԵԱՀԿ նախագահի պաշտոնակատարին¹⁷:

Ավելի անհաջող և վտանգավոր սցենար դժվար է պատկերացնել: Կոնսենսուսի սկզբունքով աշխատելու պատճառով՝ ԵԱՀԿ-ն ամենաշատախոս ու, հետևաբար, ամենադանդաղաշարժ միջպետական կազմակերպությունն է (սա դիվանագիտական շրջանակներում համընդհանուր և անժխտելի կարծիք է): ԵԱՀԿ-ում որոշումներ ընդունելու կարգը չափազանց բարդացված է՝ անդամ-պետություններից յուրաքանչյուրի վետոյի իրավունք ունենալու պատճառով: Եթե այս փաստը բաղդատենք այն իրողության հետ, որ ԵԱՀԿ մարմիններում շատ հաճախ առաջանում են լուրջ տարաձայնություններ հատկապես Ռուսաստանի, Թուրքիայի և Միացյալ Նահանգների միջև, որոնք այսրկովկասյան թատերաբեմի գլխավոր երրորդ դերակատարներից են՝ ապա պարզ կլինի, թե ինչպիսի դանդաղաշարժ և կաշկանդված գինուժ է լինելու ՂևՁ-ն: Անգամ ԵԱՀԿ ԲՄԾԽ-ի սպաներն են գինավորական ուղղամտությունը նշում, որ ՂևՁ-ի հրամանատարություն կառուցվածքի հարցը մնում է չլուծված (ցավոք՝ նրանք ո՛չ մանրամասնում են իրենց մտահոգությունները և ո՛չ էլ լուծումներ առաջարկում)¹⁸:

Պետք է նաև նշել, որ բազմազգ գինավորական որևէ դաշնության անդամները հաճախ ունենում են սեփական ուրույն «թաքնված» ծրագրեր, որոնք միշտ չէ, որ համընկնում են դաշնության հայտարարված ընդհանուր նպատակների հետ: Չմոռանանք, որ քառասնամյա Սառը պատերազմի հակառակորդները նախկինում՝ 1941-1945 թվականներին, դաշնակիցներ էին: Եթե Սոմալիում տեղի ունեցած վերոհիշյալ միջադեպը հնարավոր էր ամերիկացիների և իտալացիների՝ ՆԱՏՕ-ի անդամ այդ երկու դաշնակիցների միջև, ապա նմանատիպ միջադեպեր շատ ավելի հավանական են ՂևՁ անդամ խայտաբղետ և հակամետ քաղաքական ծրագրեր ունեցող պետությունների միջև: Իրաքում ծավալվող դեպքերը, մասնավորապես, Իսպանիայի, Հոնդուրասի, Սալվադորի և Դոմինիկյան Հանրապետության խաղաղարարների վաղաժամ դուրսբերումը գալիս են հաստատելու այս հավանականությունը լրջությունը¹⁹:

Ե. Բազմազգ զինուժի «բնածին թերությունները»

Որևէ միջազգային բազմազգ զինուժ ունի զուտ զինվորական բնույթի «բնածին թերություններ», ինչպիսիք են՝ զորամիավորումների միջև եղած լեզվական պատնեշը, ռազմական կարողությունների և ունակությունների, մեթոդաբանության և ոճի տարբերությունները, որոնք հաճախ անցանկալի հետևանքների են հանգեցնում: Սոմալիում ամբերիկյան զորքերը դրսևորում էին ագրեսիվություն, իսկ եգիպտացիները՝ կրավորականություն, վերջիններս նաև հաջողությամբ կաշառվում էին տեղացիների կողմից: Անգամ կանադացիները, որոնք լավագույն «կապույտ բերետներ» են համարվում, իրենց դրսևորեցին ոչ փայլուն կերպով. նրանց Դեսանտային գնդի (Canadian Airborn Regiment) զինվորներն ավելի հետաքրքրված էին կռվելու, քան խաղաղապահ առաքելություն իրականացնելու մեջ, իսկ նրանցից ոմանք նույնիսկ խոշտանգումներ և սպանություններ կատարեցին²⁰: Սոմալացիների խոշտանգումներ ու բռնաբարություններ կատարել էին նաև բելգիացի և իտալացի սպաներն ու զինվորները (իտալացիները մեղադրվում են նաև գենքի վաճառքով զբաղվելու մեջ)²¹: Այնպես որ՝ խաղաղապահ զորքը «մեղր ու կարագ» չէ, այն ունի իր ցցուն բացասական կողմերը, և առանց ծայրահեղ անհրաժեշտության առհասարակ չարժե օտար զինվորներ հրավիրել հայրենի հողի վրա:

Միջնավանի մոտակայքում՝ 3 կմ հեռավորություն վրա գտնվում է Վան գյուղը, որի երեխաները ևս հաճախում են Միջնավանի դպրոցը: Երբ հասանք Միջնավանի դպրոցը, մեզ տհաճ անակնկալ էր սպասվում: Թեև մի փոքրիկ մեզ աղուհացով ընդունեց, այսուհանդերձ, անձնապես ես և շուրջ 10 հոգի բոյկոտեցին քաղաքի այս դպրոցը Գալինա Ստարովոյտովայի անունով կոչելու միջոցառումը: Ահա այստեղ պարզ դարձավ, թե ովքեր էին գիշերն ու առավոտյան հայտնված Աշոտ Մանուչարյանը և ուսսախոս կասկածելի կերպարները և ինչո՞ւ էին ուղեկցում ուխտավորներին: Փոխանակ ազատագրված Միջնավանի այս դպրոցը կոչելու Լեոնիդ Ազգալուզյանի (որի նահատակությունը տասնամյակը լրացել էր նախորդ օրը), Արցախ աշխարհի ծնունդ, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանցի (որի մահվան հիսնամյակն էր նախորդ օրը) կամ մեկ այլ նվիրյալի անունով, Ալեքսան Հակոբյանը, Աշոտ Մանուչարյանը և ընկերները կոչել են այն մի գործչի անունով, որի համար արցախյան պահանջատիրությունը առերևույթ միջոց էր Ռուսաստանի ժողովրդավարացման համար, մինչդեռ հայրենի համար Արցախը էր, է և մնալու է նպատակ: Չընկնելով Սանկտ Պետերբուրգի այս շրջանակների պատրաստած թակարգը, նախընտրեցինք զրուցել վերաբնակիչների հետ և հիանալ տեղի բնությունը:

Միջոցառման ավարտին բոլորն ուղևորվեցին դեպի ափամերձ մի տարածք, որտեղ հավուր պատշաճի սեղան էր բացված: Սեղանը, ինչպես միշտ, օրհնեց Տեր Աթանասը: Այստեղ Արցախ Բունիթյանը ցավով հայտնեց, որ Միջնավան թափանցել են մի քանի աղանդներ, որոնք «ավեր են գործում»: Մեզ համար սա հասկանալի էր, քանի որ Իրանի և Արաքսի մերձակա այս տարածքում հայաչուհն և ոգեղեն մի ամրակուռ հավաքականության գոյությունը ծայր աստիճան աննպաստ գործոն է շրջանում ամերիկյան հաշիվների համար...:

Այնուհետև Միջնավան-Հորադիզ համեմատաբար լավ ճանապարհով ընթանում ենք դեպի Արաքս: Ափամերձ տարածքն ունի գերազանց պայմաններ գյուղատնտեսության համար՝ ջրի առատություն, բերրի հող, մերձարևադարձային կլիմա...: Հայկական աշխատասիրությունից ու կազմակերպված աշխատանքից բացի ուրիշ ի՞նչ է հարկավոր այս լքված, բերրի տարածքները գյու-

դատնտեսական ոսկեհանքի վերածելու համար: Ո՞ւր է հայությունը, ինչո՞ւ է չի շարժվում, ինչո՞ւ է վերադառնում իր հայրենիքը և շենացնում այս ազատագրված տարածքները: Մի՞թե հավերժ դատապարտված ենք հեռվից սիրելու Հայաստանը և «հեղափոխականանալու» երկու-երեք բաժակ խմելուց հետո: Հողը կանչում է ձեզ, ո՞ւր եք: «Հիմի է՞լ» պիտի թշնամուն թողնենք հայրենի տարածքները:

Ճանապարհից թեքվում ենք ուղիղ դեպի աջ և ընթանում դեպի Արաքս: Մեր դիմացը պատմական Պարսկահայք նահանգի Պարսպատունիք գավառի լեռներն են (ներկայիս Ղարադաղ՝ Իրանի տարածքում): Հատում ենք Նախիջևան-Բաքու երկաթգիծը և հողածածկ ճանապարհով շարունակում ընթացքը դեպի Արաքսի վրա գտնվող Խուզափերինի երեք կամուրջները: Մեր աջ կողմում իրանցիները կառուցում են ամբարտակ Արաքսի վրա՝ Խուզափերինի կամրջից 1 կմ դեպի արևմուտք՝ առանց ազդբեջանցիների կարծիքը նույնիսկ հարցնելու: Ամբարտակի կեսն արդեն կառուցված է, Արաքսի հունը՝ շուրջ 50 մետր, փակված է կիսով չափ: Ասում են՝ եթե կառուցվի ամբարտակը, նրա հետին մասում առաջանալու է 20 կմ երկարությամբ մի լիճ, որն իր ջրերի տակ թաղելու է Նախիջևան-Բաքու երկաթգիծը և նրա հետ՝ ամերիկյան հաղորդակցային ու տարածաշրջանային այլ ծրագրերը: Ամբարտակի վրա կառուցվելիք էլեկտրակայանը կարող է բավարարել Հայ վերաբնակիչների էլեկտրականության, իսկ ամբարտակի ջրերը՝ նաև գյուղատնտեսության պահանջները: Նման պարագայում հիմնովին տապալվում են բոլոր ծրագրերը Մեղրու միջանցքի վերաբերյալ:

Մեկ խոսքով, Արաքսի վրա այս ամբարտակի կառուցմամբ, իրանցիներն աշխատում են տապալել ամերիկյան-թուրքական հակահայկական-հակաիրանական ծրագրերն այս տարածաշրջանում:

Խուզափերինի կամուրջները երեքն են՝ մեկը մյուսից 700-800 մ հեռավորությամբ: Առաջինը ներկայիս կիսավեր կամուրջն է՝ կառուցված 13-րդ դարում, մյուսը կառուցված է 18-րդ դարում և կանգուն է, իսկ երրորդը երկաթյա (գինվորական) կամուրջ է:

Առաջին կամրջին հասանք ժամը 16:25-ին: Բոլորն իջան փոխադրամիջոցներից և նետվեցին Արաքսի հորձանուտ՝ պղտոր ջրերի մեջ: Շատ-չատերի համար սա առաջին համբուլյրն էր մայր

գետի սուրբ ջրերի հետ: Հայր Աթանասն աղոթք էր մրմնջում: Անհնար է նկարագրել այն զգացումները, որ ունեինք Արաքսի ջրերը մտնելիս. երևի նման զգացումներ մեկ էլ կունենանք ազատագրված Եփրատի, Տիգրիսի ջրերում կամ Մասիսի սեզ կատարին: Ահա այստեղ էությանդ ամեն մի բջիջով զգում ես, որ դու ՀԱՅ ես և դատապարտված ես այդպիսին լինելու: Լսում ես Շահ Աբասի կողմից քշված հայրենակիցների դողը ու կականը, տեսնում ես Մայր Հայաստանի արտասուքը...:

Թռչունները բույն են շինել ավերակ կամրջի տակ և խինդով ու ճովողյունով սնունդ են բերում իրենց ձագերին: Այս տեսնելով, ակամա տարվում եմ մի մտքով, թե մայր հայրենիքի թռչունը ի՞նչ սնունդ պետք է տանի իր աշխարհասփյուռ զավակներին, որպեսզի նրանք վերադառնան իրենց բույնը՝ Հայաստան աշխարհ: Մտածում եմ՝ մի՞թե այս թռչունն իր բնագողով գործում է ավելի ճիշտ, քան մենք՝ մեր խելքով և անսպառ ներուժով:

Նայում եմ շուրջս: Մեծ ու փոքր, կին, երեխա թե տղամարդ, աշխարհական թե կրոնավոր՝ կլանված են Արաքսով: Մեկն աղոթում է, մյուսը ջուրը թափում է գլխից և ինքնամկրտվում, երրորդը լալիս է, չորրորդը աչքերով խորասուզվել է ջրերի մեջ... Վերերկրային, հիանալի՜ տեսարան է:

Մի խոսքով, այս պահից բոլորս մկրտվում ենք հայկականության կենարար ու մաքրող ջրով:

Արաքսի մեջ մնում ենք շուրջ կես ժամ: Ոչ ոք չի ուզում հեռանալ: Ինչո՞ւ հեռանալ, երբ հագիվ գտել ենք իրար: Բուն ՀՀ սահմանի վրա իրավունք չունենք Արաքսին մոտենալու, ուր մնաց՝ նրա ջրերին գրկախառնվելու: Չէ՞ որ Հայաստանի սահմանների պաշտպանությունը հանձնված է Ռուսաստանին, իսկ ռուսն ինչպե՞ս կարող է հասկանալ հայի ցավը, սերն ու հավատը, Արաքսի նշանակությունը հայի համար: Նրանք մայր Վոլգան է, Մոսկվա և Նևա գետերը, Ենիսեյը. Լենան, Անգարան...

Այստեղ՝ Արաքսի այս ափին, միայն հայոց բանակի աջալուրջ սպաներն ու զինակոչիկներն են, իսկ այն ափին՝ իրանցի ամբարտակաշինարարները: Վերջիններս, դիտելով մեզ մի քանի տասնյակ մետր հեռավորությունից, կարծես չէին զարմանում՝ տեսնելով մեզ պատած սրբազան խենթությունը...:

Վերջապես շարժվում ենք դեպի մյուս կամուրջները: Կանգ

ենք առնում վերջին՝ երրորդ կամրջի մոտ: Այստեղ հայոց բանակի մի ամուր դիրք հսկում է հայրենիքի սահմանները: Այս տարածքների հայոց զորամիավորումների հրամանատար փոխգնդապետը հայտնեց իր կարծիքը արցախյան հիմնահարցի կարգավորման մասին. «Այս սերունդը չի կարող լուծել Արցախի հարցը: Թող սպասեն մյուս սերունդներին: Այլևս կամ Ադրբեյջանի որևէ ղեկավար պիտի ասի իր ժողովրդին. «Ժողովո՛ւրդ, մենք պարտվել ենք, գնացեք վերցրեք մեր հողերը»: Իսկ մենք պետք է ասենք. «Ժողովո՛ւրդ, սա մեր հողն է, պարտավոր ենք նրան տեր կանգնելու և պաշտպանելու»: Փոխգնդապետը եզրակացրեց. «Այնքան ժամանակ, որ այստեղ հայերն են ապրում՝ սա մեր հայրենիքն է»:

Ուշադրութուն դարձնենք փոխգնդապետի «Այնքան ժամանակ, որ այստեղ հայերն են ապրում» արտահայտությունը: Տեսականորեն, հայոց հայրենիքը բացարձակ, հավիտենական արժեք է, այսինքն՝ հայոց հայրենիքը այդպիսին եղել է, կա ու պիտի մնա՝ անկախ այն բանից, որ նրա այս կամ այն մասում այսօր հայեր ապրո՞ւմ են, թե ոչ: Սակայն, փոխգնդապետի խոսքերում կա նաև բացարձակ ճշմարտութուն. հայրենիքը հայրենիք դառնում է այնտեղ ապրելով, այնտեղ արարելով, այնտեղ մեռնելով և այնտեղ թաղվելով, պլատոնական սիրով հայրենիքներ չեն լինում: Այս ճշմարտութունը, ցավոք, ընկալելի չէ հայության ստվար հատվածի համար:

Ժամը 19:25-ին Խոզդափերինի երրորդ կամրջի մերձակայքից շարժվում և ուղղութիւն ենք վերցնում դեպի դեպի արևելք՝ Հորադիզ, որը գինադադարի սահմանն է Արաքսի ափի մոտ: Շուրջ 20 կիլոմետր անապատի վերածված տարածութիւն է. հանդիպում ենք մի խփված տանկի կմախքի, ավերակ մի քանի գյուղերի և անմշակ անծայրածիր խաղողի այգիների, որոնք թողնվել են անտեր և վայրիացել: Այդ այգիներից մնացել են միայն որթերի բետոնե ցցերը, որոնք անտառի տպավորութիւն են ստեղծում: Ո՞վ պիտի վերստին տեր կանգնի այս անմշակ, բայց բերրի այգիներին: Հայրենիքը ազգի նախորդ, ներկա և ապագա սերունդների համայնական սեփականութիւնն է, իսկ սեփականութեանը տիրութիւն են անում: Իսկ մենք ոչ միայն թողել ենք անտեր մեր իսկ սեփականութիւնը այն արյա՛ն գնով վերանվաճելուց հետո, այլև խուճմբ-խուճմբ, օրական հարյուրներով դիմում ենք դեպի օտար ա-

փեր: Եթե այս վիճակը 180 աստիճանով չչրջվի, բացառված չէ, որ ընդամենը մի քանի տասնամյակ հետո հայկական երկու պետությունները վերանան, որից հետո հայ ազգի գոյատևումը ևս լուրջ հարցականի տակ կլինի:

Հասնում ենք ադրբեջանական Շուքուրբեյլի ավերակ գյուղը: Այստեղ՝ խորհրդային սահմանապահների նախկին ուղեկալում, հայոց բանակի մարտիկներն են: Ամենուրեք սև թթի ծառեր են: Այստեղ մնում ենք մոտ մեկ ժամ, կազդուրվում և զրուցում սպաների ու զինվորների հետ, մինչ ԱՏՊ անդամներն ուշի ուշով գնում էին տեղանքը: Նրանք ի վերջո որոշեցին իրենց ծրագրած 100 ընտանիքով գյուղը հաստատել այստեղ և այն անվանեցին Արևի գյուղ՝ նկատի ունենալով թե՛ տեղի արևշատ լինելը և թե՛ փոխաբերական իմաստով որպես հայոց արևի ծագման, այսինքն՝ հայրենիքի վերամիավորման ու արժանավայել ապագայի առհավատչյա: Այստեղ պիտի հաստատվի ռազմականացված Արևի գյուղը, առաջին գյուղը ադրբեջանական զորամիավորումների դիմաց՝ որպես առաջապահ հայկական ամրոց ու թիկունք, վերաբնակեցված գյուղերի հուսալի ապավեն:

Զինվորները գոհ էին այստեղի իրենց ծառայությունն ապամաներից. սնունդը լավ է, ներքին հարաբերությունները՝ բնական: Նույնիսկ չեն դժգոհում օձերի առատությունից՝ այն սովորական երևույթ համարելով:

Շուքուրբեյլիից մի քանի կիլոմետր արևելք Հորադիզն է՝ «սահմանը»: Մեզ խորհուրդ չեն տալիս հասնել այնտեղ, մանավանդ որ օրը մթնում էր, իսկ սահմանի մատույցներն ականապատված են:

Բռնում ենք վերադարձի ճամփան դեպի Բերձոր՝ այս անգամ ընտրելով ոչ թե Միջնավան-Կովսական-Սանասար, այլ Վարդանանց-Ջերբախի շրջանի ճամփան: Պետք է այցելենք նաև վերաբնակիչների Վարդանանց (նախկին Ահմեդբեյլի) գյուղը: Այնտեղ հասնում ենք 45 րոպե քարքարոտ ու քանդված ճանապարհով ընթանալուց հետո:

Ամբողջ գյուղը դիմավորում է մեզ: Այստեղ ուխտադնացներն արժանանում են ջերմագին ընդունելության: Մարդիկ պատրաստել են ճոխ սեղան, բայց չունեն բավականաչափ աթոռներ: Հոգ չէ՝ բոլորն ուրախ են: Գյուղը չունի էլեկտրականություն,

մինչդեռ դիմացը՝ Արաքսի մյուս ափին, փայլփլում են իրանական բնակավայրերի լույսերը: Իսկապես, մարդ պետք է հերոս լինի, որպեսզի տարիներով դիմանա այս զրկանքին ու հոգեբանական ճնշմանը: Սակայն էլեկտրականության բացակայությունը չի ընկճել վարդանանցիներին. նրանք լավատես են ու համոզված, որ հաջորդ տարի իրենք էլ պիտի վայելեն արդի քաղաքակրթության այդ բարիքը:

Վարդանանց գյուղը հիմնադրվել է 2000թ. փետրվարին: Ներկայումս 40 ընտանիք է ապրում այնտեղ՝ շուրջ 170 հոգի, որոնցից 60-ը դպրոցականներ են: Աճեցնում են ձմերուկ, լուլիկ, սմբուկ, բանջարեղեն, որոնք այստեղ եկած վաճառականները տեղում գնում են իրենցից: Նախատեսված էր այս աշնանը գյուղի դպրոցն անվանակոչել Ռաֆայել Իշխանյանի անունով:

Ջրուցում եմ Եղեգնաձորից այստեղ տեղափոխված, գյուղում ծնված առաջին երեխայի հոր՝ Վարուժան Կարապետյանի հետ: Մինչ այս, նա ունեցել է նաև չորս զավակ, որոնցից երեքը հաճախում են գյուղի դպրոցը: «Ուրեմն դպրոցի աշակերտների հինգ տոկոսը քո երեխեքն են», - կատակով հաստատում է ուխտավորներից մեկը: Վ. Կարապետյանը խոստանում է բարելավել այս ցուցանիշը կամ առնվազն, պահպանել՝ նույնիսկ եթե վերաբնակիչները շատանան: Խմում ենք այսօրյա իսկական հերոսի՝ վարդանանցցի Վարուժան Կարապետյանի կենացը: Տարածքներ զիջելու մեր հարցմանն արձագանքեց այնպիսի մի ահարկու նայվածքով, որով ամեն ինչ ասվում է: Վարդանանց հասանք աղջամուղջին և նրան հրաժեշտ տվեցինք լուսնի լույսի տակ՝ ժամը 22:20-ին: Ուխտավորների շարասյունը վերադարձավ Բերձոր Ձեբրախի շրջանի քանդված ճանապարհներով՝ առանց դադարի անցնելով շրջանի Տիգրանավան, Ուռենի, Գետափ, Սարատակ և Հաքարի վերաբնակեցված գյուղերի մոտով, որոնց տների էլեկտրական լույսերը փայլփլում էին:

Կիրակի, 22 հունիսի 2002: Ուխտագնացության վերջին օրն է: Նախաճաշից հետո ուղևորվում ենք Բերձորի երաժշտական դպրոց, որի տնօրենը Արմեն Բալասանյանն է: Դպրոցի փոքր սրահում տրվում է համերգի պատիվ ուխտավորների: Կատարում են դպրոցի ժողովրդական գործիքների համուլթի անդամները, որոնք նվագելու դասեր են տալիս շնորհալի երեխաներին իրենց գործիք-

ներով: Պարմանուհի Արեգնազ Արշակյանը հանդես է գալիս երգով: Խմբավարն Արմեն Բալասանյանն է: Այս ելույթը համոզեց մեզ, որ Բերձորի ժողգործիքների համույթը կարող է բարձր պահել հայուլթյան պատիվը նույնիսկ միջազգային բեմերում:

Համերգից հետո ուղևորվեցինք Ս. Համբարձում եկեղեցի: Պատարագն սկսվել էր: Հայր Աթանասը պատարագիչն էր: Դպրաց դասը բաղկացած էր 10 պարմանուհիներից, 3 կանանցից և մեկ երգեհոնահարուհուց: Եկեղեցում գտնվողները քիչ էին՝ 20-25 հոգի՝ մեծ մասամբ տարեցներ: Հայր Աթանասը, ըստ իր սովորույթյան, մի ոգեշունչ քարոզ կարդաց, որը ներծծված էր հայրենասիրույթյամբ, ազգասիրույթյամբ և այդ երևույթների ամրապնդման մեջ Հայ եկեղեցու դերի շեշտադրույթյամբ: Նա ասաց. «Երեկ մենք գրկախառնվեցինք մայր Արաքսի հետ: Նա ուրախ էր, որ իր ծոցում գրկում է իր զավակներին: Անկախույթյան և ազատույթյան շնորհի՛վ է, որ հնարավոր եղավ գրկախառնվել Արաքսի հետ»: Հայր սուրբը Ավետարանի «Տիրոջ և ծառայի առակի» հիման վրա կոչ արեց յուրաքանչյուրին՝ հօգուտ ազգին և հայրենիքին ծառայեցնել Աստծո կողմից տրված շնորհները: Նա հորդորեց տեր կանգնել «Մեր հողին»։ «Երեկ մենք շրջեցինք մեր արյունով գնված մեր հողում: Այդ հողը սպասում է իր տիրոջը, և դա համագգային խնդիր է, յուրաքանչյուր հայի խնդիրը»: Քարոզիչը կոչ արեց մեր մեջ արթուն պահել ազգի ոգին. «Վա՛յ նրան, որ մտածում է միայն սեփական շահի մասին»: Նա պատգամեց չհուսահատվել, այլ հավատալ գալիք պայծառ օրերին. «Մեր անկումներին հաջորդել է բարձրացումը, հարույթյունը»: Հայր Աթանասն իր քարոզն ավարտեց մեկ անգամ ևս հայուլթյանը սիրո և միաբանույթյան կոչելով: Ապա կատարվեց հոգեհանգստի կարգ: Խնդրվեց հոգու հանգստույթյուն նաև արցախյան ազատամարտի նահատակների և, մասնավորապես, Լեոնիդ Ազգալոյանի, ինչպես նաև երջանկահիշատակ Գարեգին Ա Հովսեփյանցի հոգիների համար՝ մահվան տասնամյակի եւ հիսնամյակի առթիվ:

Ապա ուխտավորների շարասյունն ուղղվեց Ծիծեռնավանք: Նախ իջանք դեպի Աղավնագետի կամուրջը, որտեղից գետի հունի ձախափնյա հողածածկ քարքարոտ ճանապարհով ուղևորվեցինք հյուսիս: Լեռնային ամեհի գանգվածները ճեղքող Աղավնագետի հովիտն ունի գերազանց պայմաններ անասնապահույթյան

Համար, սակայն, ցավոք, այստեղ ևս վերաբնակիչները շատ քիչ են: Նրանք արածեցնում են տավար կամ ցանում բանջարեղեն: Զախ մասում երևում են մի գյուղի ավերակներ՝ 50-60 տուն: Այս ուղղության վրա առաջին վերաբնակեցված գյուղը Մեղիքաշենն է (նախկին Սուլթանքենթ): Ժամանակին գյուղը եղել է Քաշաթաղի կառավարիչ Մելիք-Հայկազյանների իշխանանիստը:

Հասնում ենք Ծիծեռնավանք, որը գտնվում է Աղավնագետի հունի անմիջապես աջ մասում՝ մի բլրի վրա: Կողքին Համանուն գյուղն է՝ վերաբնակիչներով բնակեցված: Ոմանք կարմրախայտ ձուկ են որսում գետում:

Ծիծեռնավանքի՝ 4-րդ դարի հայկական հնագույն եկեղեցիներից մեկի վերանորոգումը իր վերջնական փուլում է: Մեր ուխտագնացության օրը կատարվում էին արտաքին երեսպատման և վերջնական հարգարման աշխատանքները, և սկսվել էր վանքի արտաքին պարսպի վերանորոգումը: Մի հուշաքար հայտնում էր, որ վերանորոգումը կատարվում է Բոստոնից Ջորջ և Քերոլայն Նաճարյանների մեկենասությամբ՝ ի հիշատակ իրենց ծնողների:

Ալեքսան Հակոբյանը մանրամասն տեղեկություններ է տալիս Ծիծեռնավանքի Ս. Գևորգ եկեղեցու մասին: Իսկապես որ մի եզակի ճարտարապետական կառույց է: Ըստ ավանդություն՝ Հովհաննես Մկրտչի ճկույթը թաղված է այստեղ: Եկեղեցու ներսում և դրսում կան 7-8-րդ դարերի պարզագույն խաչքարեր և խաչքարերի բեկորներ. նրանց մեջ եզակի է «Թռչունի խաչքարը»: Պատերի վրա կան արձանագրություններ, խաչերի, հնգաթև և վեցաթև աստղերի քանդակներ, որմնանկարներ, ինչպես նաև հայ և ադրբեջանցի վանդալների խզբզանքներ:

Ազոավաքարի առասպելը կապված է Ծիծեռնավանքի հետ: Ըստ Ալեքսան Հակոբյանի՝ եկեղեցուց 150 մետր արևելք՝ լեռան վրա գտնվող ժայռն էլ այդ Ազոավաքարն է:

Ծիծեռնավանք գյուղը թեև փոքր է՝ հազիվ 80-90 հոգի, բայց ունի դպրոց Վարազ Առաքելյանի անունով, ուր հաճախում են նաև Մեղիքաշենի և մյուս մոտակա վայրերի վերաբնակիչների երեխաները. նրանք այստեղ գալիս են ոտքով՝ կտրելով մի քանի կիլոմետր ճանապարհ:

Ժամը 17-ին մոտ շարժվեցինք ետ՝ դեպի Բերձոր: Ճանապարհին ջուր խմելու նպատակով կանգ առանք Մեղիքաշեն գյուղի

տներինց մեկի մոտ, որտեղ երևաց 40-45 տարեկան մի կին: Երբ հարցրեցինք կենցաղային պայմանների մասին, Երևանից 4 տարի առաջ վերաբնակված այս կինը դժգոհությամբ հայտնեց. «Հասեղ ապրելու տեղ չի»: Նա ցույց տվեց մոտակա մի տուն՝ ավելացնելով, որ նրա տերերը վերադարձել են Երևան: Կինը դժգոհում էր մասնավորապես Միծեռնավանքի դպրոցի ցածր մակարդակից. «Երեխեքս ի՞նչ են տեսնում Հասեղ, ի՞նչ են սովորում Հասեղ, ոչ ի՛նչ»: Հայկական ավանդական նախանձախնդրությունը կրթության և գիտելիքի նկատմամբ արտահայտվեց այս կնոջ վրդովմունքի մեջ...

Ժամը 20:00-ին ուխտավորները, չափազանց հոգնած, բայց և անչափ գոհ, նստում են միկրոատոբուսներն ու ավտոմեքենաները և բռնում վերադարձի ճամփան դեպի Երևան: Երևան հասնում ենք երկուշաբթի, 2002-ի հունիսի 24-ի վաղ առավոտյան:

Ամփոփելով հայտնենք հետևյալը.

Ես ունեմ մի մեծ երազ՝ առնվազն 50 հազար երիտասարդ սփյուռքահայերի հաստատումն ազատագրված հողերի վրա: Միայն այդ պարագայում կտապալվեն հակահայկական ծրագրերն ու պարտավողական խոսակցությունները փոխզիջումների մասին: Ինչո՞ւ ուրիշ ժողովուրդների հաջողվում է կատարել մեծ ծավալի հայրենադարձություն, իսկ մեզ մոտ միայն արտագաղթն է ստանում մեծ ծավալ:

Ես մի մեծ երազ ունեմ և դիմում եմ իմ այն բոլոր հայրենակիցներին, որոնց մեջ դեռևս առկա է իսկակա՛ն (ոչ բաժակահառային) հայրենասիրությունը, վերադարձե՛ք հայրենիք. եկեք տե՛ր կանգնենք մե՛ր հողին:

31.

Ազատագրուած հողը իրացման կարիք է զգում*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԱՆԵԱՆ

Արցախի ազատագրութեան համար բռնկուած պատերազմում 1994 թուականի Մայիսին մարտական գործողութիւնները դադարեցուեցին, եւ խաղաղութիւնը շարունակուած է մինչ օրս: Պատերազմի արդիւնքում հայկական կողմը ազատագրեց ոչ միայն նախկին Լ.Ղ.Մ.ի տարածքի մեծ մասը (բացառութեամբ Շահումեանի շրջանի եւ Մարտակերտի շրջանի մի քանի գիւղերի), այլեւ շրջակայ տարածքները, որտեղից մշտական սպառնալիք էր կախուած մայրաքաղաքի՝ Ստեփանակերտի վրայ: Մարտական գործողութիւնները տեղափոխուեցին դիւանագիտական ոլորտ, ուր մինչ օրս հայկական կողմը թէեւ խոշոր պարտութիւններ չի կրել, բայց եւ չի կարողացել ռազմական յաջողութիւններին եւ առաջացած ստատուս-քոլոյին համարժէք յաղթանակներ ունենալ: Հակամարտութեան կողմերի դերերը հիմնովին փոխուեցին. Ադրբեջանն սկսեց ներկայանալ որպէս յարձակման ենթարկուած կողմ եւ իր բոլոր դիւանագիտական ջանքերն ուղղեց Ղարաբաղը որպէս հակամարտող կողմ բանակցային գործընթացից դուրս մղելուն, ինչը նրան յաջողուեց: Հայկական դիւանագիտութիւնը աւելի կրաւորական կեցուածք ընդունեց, եւ վերջին 8-9 տարիներին Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքական խնդիրներով զբաղուող գերատեսչութիւնների ընդհանուր մօտեցումը կարելի է գնահատել իբրեւ առաջացած ստատուս-քոլոն որքան հնարաւոր է երկարաձգելու քաղաքականութիւն: Սա եւս պարտութիւն չէ, աւելին՝ յաղթանակ է, եթէ այս ընթացքում յաջողուէր իւրացնել եւ վերաբնակեցնել պատմական Հայաստանի այն տարածքները, որոնք Ադրբեջանը բռնագաւթել էր 1918 թ. յետոյ: Այս առումով, անելիքը, ի հարկէ, առաջին հեր-

* ԴԻՕՇԱԿ, Հոկտեմբեր 2002, թիվ 4:

թիւն մեր պետութեան ուսերին պիտի ծանրանար, բայց մեծ իմաստով պիտի դառնար համազգային խնդիր:

Վերաբնակեցման ոչ մեծ ծրագրերը կազմուած եւ իրականացուած էին միայն բուն Լեռնային Ղարաբաղի դատարկուած բնակավայրերում եւ Հայաստանի հետ Արցախը կապող Քաշաթաղի շրջանում: Յայտօր պաշտօնապէս Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կազմում գործում է Քաշաթաղի շրջանը, որն ընդգրկում է Լաչինի, Քելբաջարի, Զանգելանի շրջանները: Սա վարչական ամենամեծ միաւորն է երիտասարդ Հանրապետութեան կազմում, եւ տեղի բնակչութիւնը գործուն դերակատարութիւն ունեցաւ վերջին նախագահական ընտրութիւններում: Ազատագրուած միւս տարածքները դեռեւս վարչական միաւորներ չեն կազմում եւ հիմնականում միայն գինուորական ստորաբաժանումների հսկողութեան տակ են: Այսինքն՝ Հանրապետութեան իշխանութիւնների այս վարքագծից՝ իւրացման աշխարհագրութիւնից, հակառակորդը յստակ պատկերացում է ունենում, թէ ի՞նչ գիշումների է պատրաստ հայկական կողմը: Սա նշանակում է խաղալ բաց խաղաքարտերով: «Տարածքներ կարգավիճակի դիմաց» կարգախօսը թէեւ յամառօրէն մերժուած է Ադրբեջանի իշխանութիւնների կողմից, այնուամենայնիւ, ձեռնտու չէ, անգամ անհանդուրժելի է հէնց մեզ համար:

Ի հարկէ, հողը, տարածքը իւրացուած է, հայրենիք է դառնում առաջին հերթին մարդու ներկայութեամբ՝ նրա շնչով, ձեռքի աշխատանքով, քրտինքով ու հողի հետ կապուածութեամբ: Բայց կարեւոր է ոչ միայն վերոնշեալը:

Մեզ համար չափազանց կարեւոր է նաեւ հոգեբանական իւրացումը: Իսկ այդ գործընթացն իրականացուած է, այսինքն՝ հողը հարազատանում է մշակութային սրբագործմամբ: Ասացինք արդէն, որ Ֆիզիկական իւրացման, այսինքն՝ վերաբնակեցման ընթացքն ու աշխարհագրութիւնը գոհացուցիչ չեն կարող լինել, եւ անչափ թանկագին ժամանակ ենք կորցնում: Բայց նոյնիսկ այս դանդաղ ընթացքից չափազանց յետ է մնում ազատագրուած հայրենի հողի հոգեբանական հարազատացման եւ մշակութային իւրացման գործը: Այսինքն՝ մեր մշակոյթը չափազանց մեծ պարտք ունի, իսկ ժամանակը այնպիսի մեծ տոկոսներ է աւելացնում մայր պարտքի վրայ, որ սպառնում է սնանկացնել առհասարակ մեր

մշակութային ներկան: Մշակութաբանօրէն իմաստաւորուեցին անգամ պատերազմն ու յաղթանակը:

Մեր արուեստի ու գրականութեան մէջ չկան ո՛չ մարդու տառապանքը պատերազմի արհաւիրքներից, ճակատագրի շունչն ու անձի ողբերգութիւնը, ո՛չ էլ յաղթանակած անհատի ու ազգի նկարագիրը: Եթէ ժամանակին մեր մշակոյթը կարողանար կամաւորի զոհաբերման իմաստը, նուիրումը վերածել հասարակական գիտակցութեան, դժուար թէ հասարակութեան մէջ առաջանար «ասֆալտի ֆիդայի» եզրը, որը մեծ չափով օտարացրեց ժողովրդին ազատագրական պատերազմում տարած իր յաղթանակից:

Կար անցած դարի ազատագրական պատերազմի հերոս հայդուկապետերին նուիրուած հարիւրաւոր երգերի աւանդոյթը, եւ այս ասպարէզը մեր օրերում առաջ ընկաւ արուեստի այլ ճիւղերից: Սակայն բոլոր նոր ստեղծուած երգերը թէ՛ իրենց ռիթմերով եւ թէ բովանդակութիւնից բխող հնչականութեամբ կրկնում էին հներին, ինչը հեշտ էր, ուստի եւ հիմնականում ոչ շարժարժէք: 19րդ դարի վերջին եւ 20րդի սկզբներին ստեղծուած բոլոր հայդուկային երգերն աւարտուում են հերոսի մահով, այսինքն՝ սգերգ են: Առաւել եւս սգերգ են այն երգերը, որոնք կրում են ջարդերի հետքը՝ «Ագանայի ողբը» եւ այլն: Անցած դարի եւ մեր օրերի հայ ժողովրդի մղած պատերազմները բնոյթով ազատագրական են, սակայն մնացած բոլոր առումներով դրանք շատ տարբեր են: Հայդուկային փոքր խմբերը, Արեւմտեան Հայաստանի լեռներում մարտնչելով անմնացորդ, չհասան վերջնական նպատակին՝ չստեղծուեց ազգային բանակ, եւ չկանխուեց Եղեռնը: Իսկ երբ ստեղծուեց բանակը եւ կարողացաւ պաշտպանել իր նորաստեղծ պետութիւնը՝ Առաջին Հանրապետութիւնը, վրայ հասաւ կոմունիզմի կարմիր իշխանութիւնը եւ թոյլ չտուեց, որ ծնուի նաեւ յաղթական երգը:

Արցախեան պատերազմը նոյնպէս հայդուկային սկիզբ ունեցաւ, եւ պատերազմի առաջին տարիներին ամբողջ ծանրութիւնն իրենց ուսերին կրեցին կամաւորները՝ կը կոչենք նրանց ազատամարտիկներ, ֆիդայիներ, թէ հայդուկներ, միեւնոյն է: Սակայն ի տարբերութիւն նախորդ դարի ֆիդայական շարժման, նորագոյն ազատագրական պայքարը ծաւալուեց անկախ պետութեան վերածնման ու ձեւաւորման պայմաններում, ինչը երկրի բանակի ա-

րազ ձեւաւորման գրաւականն էր: Միաժամանակ, անկախ պետութիւն նշանակում է միջազգային իրաւունքի ենթակայ լինելու կարգավիճակ, միջազգային յարաբերութիւններ եւ շահեր, այլ խօսքով՝ նաեւ դիւանագիտական ոլորտ ու բանակցութիւնների հնարաւորութիւն: Սա էական առաւելութիւն է. նստել բանակցային սեղանին՝ ունենալով յաղթանակ եւ ազատագրուած հայրենի հող, ինչը չէր եղել դարեր շարունակ: Բայց, ինչպէս ասացինք, երգարուեստը, որը կարելի է բնորոշել որպէս գուսանական երգի վերագրութօնք, առաջ ընկաւ եւ, անկախ իր այլ որակներից, կարողացաւ սերունդներին պահ տալ անունները մի շարք հերոսների՝ Թաթուլ, Վարդան, Շահէն եւ այլք:

Արուեստի մէկ այլ ճիւղ՝ վաւերագրութիւնը, մասնաւորապէս՝ լուսանկարչութիւնը եւ կինօ-արուեստը նոյնպէս բաւական մեծ գործ են արել: Այսօր ազատամարտին մասնակցած լուսանկարիչներն ու կինօ-օպերատորները անձնական հարուստ արխիւներ են ստեղծել, բայց ամբողջի համակարգը նոյնպէս ուշանում է:

Այնուամենայիլ, վաղուայ արուեստի այլ ներկայացուցիչները երախտապարտ են լինելու նրանց, որովհետեւ ձեռքի տակ հարուստ նիւթ են ունենալու: Այսինքն, թեմային վերաբերող ուրիշ բան առայժմ մեր մշակոյթի մէջ չկայ, եթէ հաշուի չառնենք տարբեր բանաստեղծական ժողովածուներում տեղ գտած մի քանի չափածոյ ստեղծագործութիւնները կամ մի քանի հեղինակների մի շարք պատմուածքներն ու վիպակները: Թւում էր, թէ գրականութիւնը պիտի առաջամարտիկի դեր ստանձնէր, բայց անհասկանալի ներհի մէջ է: Դարձեալ համեմատական եզր անցկացնելով անցած դարի պատմական իրադարձութիւնների եւ արուեստի ու գրականութեան միջեւ, յիշենք Յակոբ Օշականի այն արտայայտութիւնը, ըստ որի՝ անհնար է Յեղասպանութեան մասին գեղարուեստական խիստ արժէքաւոր ու հետաքրքիր վէպ գրել, որովհետեւ գրեթէ ամէն տեղ հայերս մորթուել ենք միեւնոյն խոնարհ հնարագանդութեամբ, եւ չի եղել դիմադրութիւն:

Կրկնենք, որ Արցախեան Ազատամարտը պատմական միանգամայն այլ դրսեւորումներ առաջացրեց եւ ազգային նոր որակներ բացայայտեց: Ինչո՞ւ այն չի արժանանում հայ գրողի գրչով իմաստաւորման: Թւում է, թէ 10 տարին բաւական է, որպէսզի սպիանար ցաւը եւ հնարաւորութիւն տար իրադարձութիւններ

րին նայել անկաշկանդ, անաչառ հայեացքով, ինչը ճշմարիտ գրական ստեղծագործութեան գլխաւոր նախապայմանն է: Բայց այստեղ մի հանգամանք կայ, որ ստիպում է հայ վիպասանին դեռ սպասել: Պատերազմը աւարտուած չէ ո՛չ ժողովրդի, ո՛չ էլ յատկապէս հայ գրողի ենթագիտակցական խորքում: Զկայ աւարտը, եւ չի կարող էպիկական ստեղծագործութիւնը լիարժէք լինել, առանց իմաստուն վերջաբանի:

Լեւ Տոլստոյն իր «Պատերազմ եւ խաղաղութիւն»ը գրեց Նապոլէոնի արշաւանքից մօտ կէս դար անց: Էլ չենք ասում հայ վէպի մասին, որը մշտապէս միայն դարերի խորքն է գնացել եւ երբեք չի փորձել մի քանի տասնամեակի վաղեմութեան պատմական խոշոր իրադարձութիւններին անդրադառնալ: Վերջերս մամուլում յայտարարուեց, որ հրապարակախօս եւ գրող Զօրի Բալայեանը սկսել է Ղարաբաղեան շարժման եւ պատերազմի ամբողջ վաւերագրութիւնը հանրագիտարանային մանրամասնութեամբ գրելու շնորհակալ գործը: Այն կը դառնայ առաջին կոթողային աշխատութիւնը Արցախեան պատերազմի թեմայով, բայց նաեւ թռչողի կը դառնայ արուեստի հետագայ սլացքների համար: Երբ չկայ գրական հիմքը, աւելորդ է խօսել կինոյի, թատրոնի եւ այլ արուեստների եւ արժէքների մասին: Թէեւ հայ կինօն ծանրագոյն ժամանակներ է ապրում, այնուամենայնիւ նկարահանում են ֆիլմեր, որոնցում եւ ոչ մի անդրադարձ Արցախեան հերոսամարտին: Յանուն արդարութեան ասենք, որ մի քանի մասնաւոր փորձեր արուել են, սակայն ձախողումն այն աստիճան մեծ է եղել, որ սկսուած գործերը չեն էլ աւարտուել կամ աւարտուելուց յետոյ չպրտուել են մի կողմ: Այստեղ նոյնպէս աւելի առաջ է ընկել վաւերագրութիւնը, եւ փառք ու պատիւ նրանց, ովքեր մոռացութեան փոշու վտանգը մեղմում են իրենց վաւերական տեսաժապաւէսներով: Յատկապէս յիշարժան է Սամուէլ Թադեւոսեանի «Նոնարհ հերոսներ» շարքը, որը պարբերաբար եթեր է հեռարձակւում Հայաստանի Հանրային Հեռուստատեսութեամբ:

Թատրոնը, որն ամենագործունն է հասարակական գիտակցութեան վրայ ազդեցութեան ուժով, նոյնպէս որեւէ կերպ մինչ օրս չի անդրադարձել ազատագրական պայքարին, անհաղորդ է մնացել քաղաքական խոշոր ցնցումներին: Նոյնն է պատկերը այլ արուեստներում նոյնպէս:

Այսպիսով, շուտով կը լրանայ 9 տարին, ինչ կնքուել է գինադադար, եւ հայը հազուադէպ անգամ կարողացել է կորցրած հողերը յետ վերադարձնել: Հայաստանցի քանի՛ մտաւորական է եղել այդ հողերում, քանի՛ պատգամաւոր, դերասան, բանաստեղծ, նկարիչ եւ ուսուցիչ գիտի, թէ ո՛րն է, ասե՛նք, Ֆիզուլու շրջանի պատմական անուանումը, քանի՛ սս գիտենք, որ Զանգելանը վաղուց վերստացել է իր Կովսական հրաշալի անունը:

Հայ ճարտարապետութեան ուսումնասիրութեան կենտրոնի աշխատակից Սամուէլ Կարապետեանը, որը մինչեւ շարժումն արդէն, գիւղից գիւղ անցնելով, մէկ առ մէկ չափազրել է դաշտային ու լեռնային Ղարաբաղի եկեղեցիները, խաչքարերը, ամրոցները, որոնցով հարուստ է Արցախ աշխարհը: Նրա շնորհիւ է, որ այսօր վերականգնում է Դադիվանքը: Նրա արածը մինչ օրս ամենամեծ գործն է ազատագրուած տարածքի մշակոյթի իւրացման ճանապարհին: Հսկայական է Սամուէլ Կարապետեանի կատարած ուսումնասիրութիւնների նշանակութիւնը, բայց քիչ է առհասարակ, քիչ է ազգի համար: Վաղուց հնամենի հայկական հողի վրայ պիտի մաճկալի երգը լսուէր, ձորէձոր ընկած հայկական մեղեդու մաքրամաքուր արձագանքներով սրբացնէր ամէն մի իր, վաղուց հայ եկեղեցու պատարագը պիտի Տիրոջ բարեհաճ հայեացքի տակ դնէր մեր հողը, պիտի ուսուցիչ ու աշակերտ առաւօտ ծէգին դպրոցի ճանապարհը բռնէին հայերէն ոտանաւոր հեգելով, պիտի...

Այսպէս միայն վերջնականապէս ազատագրուած կը լինէր հայրենի հողի մի մասնիկը, որն ազգի գիտակցութեան մէջ իր ներկայութիւնը կ'ամրապնդէր ու երկմտանքի տեղ չէր թողնի, թէ որեւէ իշխանութիւն կարող է առեւտրական խաղեր անել արեամբ ձեռք բերուած սրբութեան՝ հողի հետ:

32.

Լ.Ղ.Հ. եւ ազատագրուած տարածքներում վերաբնակեցման գործընթացների մասին*

Ա. ԴԱԲԱՂԵԱՆ

Մ. ԳԱԲՐԻԵԼԵԱՆ

Արցախեան շարժումը հայոց նորագոյն պատմութեան կարեւորագոյն էջերից է: Սկիզբ առնելով որպէս Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան շահերի պաշտպանութեանն ուղղուած շարժում Խ.Ս.Հ.Մ. տարածքում, վերջինս հետագայում ունեցաւ որակապէս տարբեր ենթափուլեր. հանրահաւաքներ ու ցոյցեր, ռազմական գործողութիւններ ու բացայայտ պատերազմ եւ դէ-ֆակտո՝ Լեռնային Ղարաբաղի ինքնիշխան հանրապետութեան ձեւաւորում: Նշուած իրադարձութիւնները կարեւոր են ոչ միայն քաղաքական ու ռազմական, այլեւ հասարակական-գիտական-մշակութաբանական տեսանկիւնից: Ազգագրագէտների համար ուշագրաւ են յատկապէս այն աշխատակարգերն ու սկզբունքները, որոնք կիրառուած է արտակարգ իրավիճակում յայտնուած հասարակութիւնը՝ սեփական ինքնապաշտպանութեան կազմակերպման, հասարակական, համայնքային յարաբերութիւնների բնականոն կենսագործունէութեան ապահովման նպատակով:

Կարեւոր է նաեւ այն, թէ ինչպէ՞ս է հասարակութիւնը կազմակերպուած ու ինքնակազմակերպուած պատերազմին յաջորդող ժամանակում, ինչպէ՞ս է պատերազմի դաշտում ձեռք բերուած յաջողութիւնները կիրառուած որակապէս նոր իրավիճակում:

Այս յօդուածում մենք կը դիտարկենք նշուած իրողութիւնների մի մասը միայն, այն է՝ վերաբնակեցման գործընթացների առանձնայատկութիւնները Լ.Ղ.Հ. եւ ազատագրուած տարածքներում:

* ԴԻՕՇԱԿ, Հոկտեմբեր 2002, թիվ 4:

Արցախեան պատերազմի ընթացքում աստիճանաբար հայկական կողմի վերահսկողութեան տակ անցան հարիւրաւոր բնակավայրեր: Դրանց զգալի մասը հայաբնակ էր կամ խառը բնակչութիւն ունէր 1988 թ. դրութեամբ եւ հակամարտութեան առաջին տարիների ընթացքում Ադրբեջանի վարած բռնագաղթի պետական քաղաքականութեան հետեւանքով ժամանակավորապէս զրկուել էր հայկական բնակչութիւնից: Այդպիսիք էին Մարտակերտի շրջանի հիւսիսային, Բերդաձորի ենթաշրջանի եւ Հազրուլի շրջանի «Զորակի» գիւղերը: Բնակավայրերի մէկ այլ ստուար խումբ 1992 թ. դրութեամբ դեռեւս ադրբեջանաբնակ էր, ինչը հետեւանք էր նախորդ հարիւրամեակների ընթացքում Արցախի ժողովրդագրական իրադրութեան աստիճանական փոփոխութեան: Այդ բնակավայրերի որոշ մասը մինչ այժմ բնակեցուած է: Սակայն ողջ Լ.Ղ.Հ.-ում եւ նրան յարակից տարածքներում հարիւրից աւելի գիւղեր եւ մի քանի քաղաքներ այժմ ունեն փոքրաթիւ հայ բնակչութիւն:

Արդէն շուրջ տասը տարուայ պատմութիւն ունեցող այս երեւոյթն արժանի է գիտական լուրջ ուսումնասիրութեան: Սա իսկապէս եզակի պատմական իրադրութիւն է, որում հայկական կողմը հանդէս է գալիս որպէս տարածքներ իւրացնող, այլ ոչ թէ հակառակը: Այս երեւոյթի նկատմամբ գիտական վերաբերմունքը հեռանկարային է մի քանի առումներով, ինչը եւ պատճառ է դարձել հեղինակների կողմից 1995 թուականից իրականացուող «Արցախեան պատերազմի ազգագրական հետազոտութիւն» ծրագրում համապատասխան թեմայի ընդգրկման:*

Ազգագրական հետազոտութիւնը թոյլ է տալիս ընդգծել երեւոյթի բազմակողմանիութիւնը, չսահմանափակել այն միայն քաղաքական, տնտեսական կամ ժողովրդագրական առումներով: Տարածքի վերաբնակեցումը, գործնական իւրացումը հայերի կողմից ենթադրում է ազգային մշակոյթի համալիր վերակառուցում, որի բովանդակութիւնը մի կողմից կապուած է հակամարտութեան հետ, որի արդիւնքում այդ տարածքը փոխել է իր տիրոջը, միւս կողմից՝ ենթադրում է վերաբնակեցնող ժողովրդի մշակոյթի տեղափոխութիւն եւ վերարտադրութիւն այլ վայրում:

1996, 2000 եւ 2002 թթ. Լ.Ղ.Հ. Մարտունու եւ Հազրուլի շրջաններում, Շուշի քաղաքում, ինչպէս նաեւ Քաշաթաղում հեղի-

նակները գրառած ազգագրական նիւթը թոյլ է տալիս առանձնացնել ազատագրուած բնակավայրերի վերաբնակեցման մի քանի փուլեր ու ենթափուլեր, որոնք ուղղակի կապ ունեն ինչպէս պատերազմական գործողութիւնների, այնպէս էլ Հ.Հ.ում եւ Լ.Ղ.Հ.ում ընթացող ընկերային-տնտեսական գործընթացների հետ:

Վերաբնակեցման գործընթացներն ընդգրկել են քաղաքային ու գիւղական բազմաթիւ բնակավայրեր: Քաղաքներից այսօր համեմատաբար մեծաթիւ բնակչութիւն ունեն Շուշի ու Բերձորը, գիւղերից՝ շուրջ մէկուկէս տասնեակ գիւղեր Մարտունու, Մարտակերտի, Քաշաթաղի ու Քարվաճառի շրջաններում: Ազգագրական տեսանկիւնից ուշագրաւ են յատկապէս Շուշիում առկայ գործընթացները, որոնց արդիւնքում քաղաքն աստիճանաբար վերականգնում է իր երբեմնի համբաւն ու հայեցի նկարագիրը:

Հայերի վերադարձը Շուշի սկսուեց 1992 թ. Մայիսին: Վերաբնակիչների ամրապնդման պայմանները հասկանալու համար հարկ ենք համարում համառօտ ներկայացնել «քաղաքաշինական» եւ «ուղղակի» երկու հիմնական գործօններ, որոնք ելակէտային նշանակութիւն ունեն: Դրանցից իւրաքանչիւրը տարբեր եղանակներով կարեւոր ազդեցութիւն գործեց քաղաքում վերաբնակների կենսապահովման համալիրի եւ մշակոյթի վերարտադրութեան վրայ եւ մինչ այժմ էլ ազդեցիկ է: Քաղաքաշինական գործօնը կարեւոր է այնքանով, որ պայմանաւորում է ժամանակակից Շուշիի տարածքի եւ շինութիւնների օգտագործման հնարաւորութիւններն ու սահմանափակումները վերաբնակների կենսապահովման համալիրում: Շուշիի ներկայիս դրութեան, յատկապէս կենսապահովման համալիրի ձեւաւորման ելակէտային վիճակի վրայ իր կնիքն է թողել նաեւ հայ-ադրբեջանական հակամարտութիւնը, որի հետքերը ցայժմ խիստ զգալի են: «Ռազմական գործօնների» տարրերը դրսեւորուել են հետեւեալ երեք հանգամանքներով. ա) քաղաքի շինութիւնների մեծաքանակ աւերումներ Շուշիի ազատագրմանը նախորդող եւ յաջորդող ռազմական գործողութիւնների ընթացքում, բ) քաղաքի ազատագրումից եւ վերաբնակութեան սկզբից յետոյ քաղաքի ռազմական գրաւման վտանգի առկայութիւնը, գ) ռազմական խոշոր կայազօրի տեւական առկայութիւնը Շուշիում: Նշուած եւ բազմաթիւ այլ հանգամանքներ պայմանաւոր-

րեցին Շուշի քաղաքի վերաբնակեցման գործընթացը:

Մինչև 1992 թ. Օգոստոսը Շուշին վերաբնակեցման երկու ալիք ապրեց, որոնք կարճ ժամանակում «լցրեցին» քաղաքը: Դրանցից առաջինը կազմում էին. ա) նախկին շուշեցիները, որոնք Ստեփանակերտում կամ Արցախի այլ վայրերում անց էին կացրել քաղաքից վտարման տարիները, բ) 1988-1990 թթ. Ազրբեջանից Արցախում, հիմնականում Ստեփանակերտում ապաստանած փախստականների մի մասը, գ) կամաւորական ջոկատներ, հիմնականում Հայաստանից, որոնք Շուշին յարմար էին գտել որպէս հիմնական զօրակայան: Կամաւորականների մեծ մասի համար Շուշին ժամանակաւոր կայանատեղ էր, եւ քաղաքի գրաւումից կարճ ժամանակ անց նրանք տեղափոխուեցին, իսկ մնացածները միաւորուեցին կանոնաւոր զօրամասերի մէջ: Նախկին շուշեցիներից գրեթէ բոլորը մնացին քաղաքում: Աւելին՝ Ստեփանակերտում աւելի երկար մնացած նրանց համաքաղաքացիների վերադարձից յետոյ շուշեցիների թիւը 1993 թ. գրեթէ կրկնապատկուեց: Ազրբեջանից հայ փախստականները նոյնպէս աստիճանաբար աւելացան քաղաքում եւ կազմեցին վերաբնակիչների հիմնական խմբերից մէկը:

Երկրորդ ալիքը կազմեցին 1992 թ. Յունիսին սկսուած ազրբեջանական բանակի յարձակման հետեւանքով տեղահանուած Շահումեանի եւ Մարտակերտի շրջանների գիւղերի բնակիչները: Վերջինների հիմնական մասը տեղաւորուել էր առանց այդ էլ գերբնակեցուած Ստեփանակերտում, իսկ մի քանի հազար մարդ կայանել էր Շուշիում: Տեղահանուածների մեծամասնութիւնը Յուլիս եւ Օգոստոս ամիսներին սպասողական վիճակում էր, քանի որ նրանց ծննդավայրերն այդ ժամանակ գրաւուած էին ազրբեջանցիների կողմից՝ դեռեւս փոփոխական յաջողութեամբ մարտեր էին ընթանում: Նրանց քանակը Արցախի տարածքում, ներառեալ Շուշին, պակասում էր օրէցօր՝ փախստականները շտապում էին փոխադրուել աւելի ապահով վայր, քանի որ ամէն օր վաճառում եւ ծախսում էին իրենց վերջին ունեցուածքը: Նրանց միայն մի փոքր մասը ամրապնդուեց Շուշիում եւ քաղաքի բնակչութեան հիմնական զանգուածներից մէկն էր մինչև 1997-1998 թթ.: Այս երկու ալիքներով Շուշի եկած մարդկանց դժուար է վերաբնակիչ անուանել, թէեւ նրանց հիմքի վրայ սկսեց ձեւաւորուել

քաղաքի բնակչութիւնը:

1992 թ. երկրորդ կիսամեակը ողջ Արցախի, ներառեալ Շուշիի Համար ամենաօրհասական ժամանակաշրջանն էր: Այստեղ այլեւս չկար «բնակչութիւն» սովորական իմաստով: Արցախի ամբողջ տարածքը ռազմական ճամբար էր յիշեցնում: Շուշիի Համեմատաբար «ապահով» դրութիւնը նոյնպէս տեւեց ընդամէնը երեք ամիս:

1992 թ. Օգոստոսի 10ին ադրբեջանցիները քաղաքին հրթիռային հարուած հասցրեցին «Գրադ» կայանքից, ինչը յաջորդ մէկ ամսուայ ընթացքում կրկնուեց եւս մի քանի անգամ: 1992 թ. Օգոստոսից յետոյ Շուշիում ապրողների իրական քանակութիւնը որոշելու որեւէ փորձ մենք չենք ձեռնարկել¹: Քաղաքը գրեթէ դատարկ էր թւում: Հոկտեմբերի սկզբին, երբ սկսուեցին դասերը Շուշիում բացուած Խ. Աբովեանի անուան միջնակարգ դպրոցում եւ Ա. Մանուկեանի անվան վարժարանում, երկու դպրոցներում միասին հաւաքուել էին 68 աշակերտ: Նոյնիսկ քաղաքի վարչակազմում, նորաստեղծ դպրոցներում եւ արտադրական փոքր ձեռնարկութիւններում աշխատելու համար բաւարար մարդիկ չկային²: Այս տուեալների հիման վրայ կարելի է եզրակացնել, որ քաղաքում ապրում էր համեմատաբար ամբողջական կազմով ընդամէնը մօտ 150 ընտանիք: Միւս բնակողները կամ «տնպահ»³ էին, կամ ընդգրկուած էին գինուորական կազմաւորումներում եւ կայազօրից դուրս, քաղաքում բնակարան էին զբաղեցնում:⁴

Կարելի է ասել, որ քաղաքի վերաբնակեցման այս առաջին ատիւքները կազմող մարդիկ յայտնուեցին չկանխատեսուած դժուարութիւնների առջեւ: Հիմնական պատճառը պատերազմն էր, որն այդ ամիսներին Արցախի քաղաքացիական բնակչութեանը կենսագործունէութեան նուազագոյն հնարաւորութիւններ էր թողել:

Առաջին վերաբնակիչներ կարելի է անուանել քաղաքը գրաւող գինուորներին, թէեւ դէպի Շուշի նրանց առաջնորդում էր ոչ այնքան բնակչութիւն հաստատելու ցանկութիւնը, որքան այդ պահին աւելի իրատեսական խնդիր՝ հակառակորդի կրակակէտերի գրաւումը⁵: Զինուորներն առաջինն էին, որ սկսեցին Շուշին զբաղեցնել «գրաւոր»: Քաղաքի տների եւ բնակարանների ընտրութեան աւելի մեծ հնարաւորութիւն եւ, ամենակարեւորը՝ բարոյական իրաւունք ունեցող գինուորները դռներին եւ դարպասնե-

ըին, գրագէտ կամ անգրագէտ, մեծ մասամբ՝ ռուսերէն գրութիւն էին թողնում: Յաճախ այդ գրութիւնների հեղինակներն այդպէս էլ չէին վերադառնում: Ահա այդ գրութիւններից մի քանի օրինակ. «տունը զբաղուած է (անուն ազգանուն)», կամ՝ ազաւաղուած ռուսերէնով «Զանիտո» (սրա մասին կատակում էին, թէ Շուշիում իտալացիներ կան ապրող), «Հայի տուն է. խնդրում եմ չմտնել (ձեռ չտալ)», «Այստեղ ապրում են (ապրող կայ)»:

Յաճախ սոյն գրութիւնները «վաւերացուած» էին կամ հեղինակի անուամբ (Տիգրանի խումբ, Սասունի խումբ) եւ կամ հրագէնի համարանիշների վկայակոչմամբ որպէս իւրայատուկ ստորագրութիւն:

Քանի որ ամբողջ քաղաքը տարիներ շարունակ խայտում էր նման իւրացման բանաձեւերով, կատակասէրները դա հասցրել էին զաւեշտի. անպէտք մի աւտօ-տնակի վրայ գրել էին. «Զբաղուած է. Գորբաչով»: Հասկանալի է, որ այս «պահպանիչ» գրութիւնները, որ սկսեցին թողնել զինուորները, իսկ յետոյ շարունակեցին առաջին ալիքի վերաբնակները, մի քանի ամիս անց այլեւս հաշուի չէին առնուում: Բայց սկզբում վերաբնակիչներից ոմանց այդ գրութիւնները հեռու էին պահում «զբաղեցուած» տներից, եւ նոյնիսկ դժուարութիւններ էին յարուցում տուն փնտռելիս, «վաւերագիր» էին դառնում տներին երկու յաւակնողների միջեւ վէճերում: Առաջին վերաբնակիչների մի մասն, այնուամենայնիւ, կարողացաւ հիմք դառնալ Շուշիի բնակչութեան հետագայ արագ կազմաւորման համար:

1993 թ. երկրորդ կէսից սկսած եւ 1994 թ. ընթացքում Շուշիի բնակչութիւնն աստիճանաբար սկսեց կայունանալ: Կազմաւորուեց քաղաքում մշտական բնակութիւն հաստատածների միջուկը, միաժամանակ շարունակուեց մինչ այդ դրսեւորուած հոսունութիւնը: Ընդհանուր առմամբ, 1993-1996 թթ. ընթացքում Շուշիի բնակչութիւնն աստիճանաբար աճում էր՝ հիմնականում ներգաղթի հաշուին:

1993 թ. գարնանը բնակչութեան ձեւաւորումը նոր փուլ մտաւ, որին բնորոշ մնացին առաջին տարուայ ներհոսքի եւ արտահոսքի միտումները: Յաջորդ չորս տարիներին ներհոսքը զգալիօրէն գերազանցում էր բնակչութեան արտահոսքին:

Բնակչութեան քանակի ամենամեծ ցատկն, ըստ երեւոյթին

կատարուեց 1993 թ. միջնամասում, աւելի ճիշտ՝ գարնան սկզբից մինչեւ աշնան սկիզբը: Այս ժամանակահատուածում դեռեւս նոր էր սկսուում ազատագրուած գիւղերի բնակիչների, հիմնականում մարտակերտցիների արտահոսքը Շուշիից: Ընդ որում, մարտակերտցիները դուրս էին գալիս դանդաղօրէն, նախապատրաստուելով վերջնական վերադարձի, եւ արտահոսքը ձգուեց մի քանի տարի:

Քաղաքի բնակչութեան աւելացումը վկայող ամենահաւաստի տուեալը կրկին դպրոցներում աշակերտների քանակութիւնն է: 1992-1993 թթ. ուսումնական տարուայ վերջում քաղաքի դպրոցներում կար արդէն 220 աշակերտ, իսկ յաջորդ ուսումնական տարուայ Սեպտեմբերին՝ 378: Այս ցուցանիշը ներկայացնում է ոչ միայն նոր ընտանիքների հոսքը քաղաք, այլեւ ընտանիքների վերամիաւորումը՝ ձմրանը Հայաստանում ապաստանած անդամների հետ: Այսինքն՝ դպրոցների աշակերտների թուի աճը եղել է աւելին, քան բնակչութեան ընդհանուր թուի աճը: Այսուհանդերձ, բնակչութեան աւելացումը բաւական մեծ էր, եւ կարելի է ասել, որ 1993 թ. գարնանը Շուշիի բնակչութիւնը վերջապէս կայունացաւ:

Հետագայ տարիներին նոյնպէս Շուշի քաղաքի բնակչութեան ձեւաւորման գործընթացները փոփոխուում էին բաւականին արագ: Չնայած դրան, կարելի է փաստել, որ այսօր Շուշին ունի համեմատաբար կայուն բնակչութիւն, որը կազմում են հետեւեալ հիմնական ենթակէթնիկ խմբերը՝ ա) նախկին շուշեցիներ, բ) Ստեփանակերտից տեղափոխուած ընտանիքներ, որոնց մէջ բաւական մեծ է քաղաքում բնակութիւն հաստատած փախստականների տեսակարար կշիռը, գ) Լ.Ղ.Հ. գիւղական բնակավայրերից տեղափոխուածներ, դ) Հայաստանից տեղափոխուածներ:

Բնական է, որ բնակչութեան այս հիմնական ենթակէթնիկ խմբերն ունեն քաղաքում յարմարուելու հետ կապուած տարբեր խնդիրներ: Կարելի է ասել, որ առաւել շահեկան վիճակում են յայտնուել նախկին շուշեցիները, որոնք հանդէս են գալիս որպէս «քաղաքի տէրեր» եւ աւելի արագ են յարմարուում ստեղծուած իրավիճակին ու կենսապայմաններին: Քաղաքին աւելի արագ են յարմարուում նաեւ Լ.Ղ.Հ. այլ վայրերից տեղափոխուածները, որոնց համար կարելոր է բնակութեան նախկին վայրերի հետ համեմա-

տաբար աշխոյժ շփումների առկայութիւնը, ինչպէս նաեւ ազգականների կողմից ուղարկուող օգնութիւնը: Հաղորդակցութեան հնարաւորութիւնների տեսանկիւնից առաւել անբարենպաստ է Հայաստանից տեղափոխուած ընտանիքների վիճակը, որոնք ունեն Հայաստանում մնացած ազգականների հետ շփումների բարդութիւններ:

Չնայած առկայ բարդութիւններին, Շուշին այսօր կայացել է որպէս բնակավայր եւ նրա բնակչութիւնը յաղթահարում է հիմնականում ողջ հանրապետութեանը բնորոշ դժուարութիւններ՝ ընկերային-տնտեսական ծանր կացութիւն, աշխատատեղերի պակաս եւ այլն: Միաժամանակ, հարկաւոր է նկատի ունենալ այն, որ քաղաքում առկայ ենթակէթնիկ խմբերում դրսեւորուող առանձնայատկութիւնները կը պահպանուեն նաեւ առաջիկայում՝ պայմանաւորելով քաղաքի բնակչութեան կենսապահովման համալիրի կայացման գործընթացները:

Յաջորդ քաղաքը, որտեղ հաստատուել է համեմատաբար մեծաթիւ բնակչութիւն, Բերձորն է: Այստեղ, ի տարբերութիւն Շուշիի, արդէն մեծամասնութիւն են կազմում Հայաստանից տեղափոխուած ընտանիքները: Տեղափոխուած են նախկինում քաղաքաբնակ եւ գիւղաբնակ ընտանիքներ: Քաղաքաբնակների մէջ բարձր է Երեւանից ու արդիւնաբերական խոշոր կենտրոններից՝ Հրազդան, Աբովյան, Չարենցաւան, տեղափոխուած ընտանիքների տեսակարար կշիռը: Պատճառն այս դէպքում հիմնականում ընկերային-տնտեսական ծանր պայմաններն են, արդիւնաբերական ձեռնարկութիւնների անգործութիւնն ու զանգուածային գործազրկութիւնը: Աղէտի գօտուց, մասնաւորապէս Գիւմրի քաղաքից տեղափոխուելու պարագայում էական է բնակարանի բացակայութիւնը:

Գիւղերից տեղափոխուելու դէպքում նոյնպէս առկայ է պատճառների մի ամբողջ շարք: Դրանցից ամենակարեւորը սակաւահողութիւնն է: Ոչ երկրորդական դեր են խաղում նաեւ յատկացուող օգնութիւնների, արտօնութիւնների մասին խօսակցութիւնները, որոնք տեղափոխութեան լրացուցիչ ազդակներ են: Որպէս գիւղական բնակավայրերից Բերձոր ու Քաշաթաղի գիւղեր տեղափոխուելու եւս մէկ պատճառ հանդէս է գալիս բնակարանի բացակայութիւնը. տեղափոխուած են երիտասարդ ընտանիքները,

որոնք չունեն բնակարան կառուցելու հնարաւորութիւն:

Գրառուած նիւթերը բերում են այն եզրայանգմանը, որ այս դէպքում սովորաբար գործում է «տունը մնում է կրտսեր որդուն» սկզբունքը, ըստ այդմ տեղափոխում են աւագ որդիների ընտանիքները:

Ուշագրաւ առանձնայատկութիւններ են դրսեւորում նաեւ բնակավայրի ընտրութեան հետ կապուած: Գործում են մի քանի սկզբունքներ: Դրանցից առաջինը պատահական ընտրութեան սկզբունքն է: Այն աւելի շատ կիրառւում է միայնակ տեղափոխուող ընտանիքների դէպքում: Ընտանիքի գլխաւորը սովորաբար մինչեւ տեղափոխուելը լինում է շրջանում, վարչակազմի ներկայացուցիչներից մէկի օգնութեամբ ծանօթանում բնակավայրերին եւ ընտրում այն գիւղը կամ քաղաքը, որտեղ կը ցանկանար տեղափոխուել: Բնակավայրի եւ բնակարանի ընտրութիւնից յետոյ տեղափոխում է ընտանիքը, ընդ որում, ընտրութեան եւ տեղափոխուելու միջեւ ընկած ժամանակը կարող է բաւական երկար լինել՝ կապուած բնակարանի վերանորոգման խնդիրների հետ: Գործում է տեղափոխուելու եւս մէկ սկզբունք, որը կապուած է արդէն մեծ թուով ընտանիքների հետ: Այս դէպքում սովորաբար գործուողում են «հետախոյզներ», որոնք նախօրօք լինում են շրջանում եւ ընտրութիւն կատարում:

Ըստ վերը նշուած սկզբունքների, կարելի է առանձնացնել բնակութեան երկու տարբերակ կամ եղանակ՝ համահաւաք եւ խառը: Առաջին դէպքում նոյն գիւղում տեղաւորում են մէկ վայրից տեղափոխուած ընտանիքները կամ դրանք մեծամասնութիւն են կազմում, երկրորդ դէպքում նոյն բնակավայրում տեղաւորում են տարբեր վայրերից տեղափոխուած ընտանիքներ: Գիւղերի ներսում աստիճանաբար ձեւաւորում են հարեւանային սերտ շփումների օջախներ՝ հիմնականում ազգակցական կամ տարածքային սկզբունքով, ինչը բնականաբար նպաստում է նորաստեղծ համայնքների կայացմանը:

Ինչպէս երեւում է շարադրանքից, վերաբնակեցման գործընթացը բաւական բարդ ու բազմամակարդակ իրողութիւն է, ուստի դրա հետազօտութիւնը պահանջում է հաշուի նստել ե՛ւ քաղաքական ու տնտեսական, ե՛ւ հասարակական ու մշակութային գործօնների հետ: Մի դէպքում առաջնային կարող են լինել հայրենա-

ՅՈՒԹԱԿ
ազատագրված տարածքում հաշվառված հայկական հուշարձանների ընտրանու
ՔԱՐՎԱՃԱՌԻ ԵՐՁԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՆԱՐՉԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

N	Հուշարձան	Ցուրարտաբերում	Եվկոդը	Վիճակ	Ծանոթություն
ՂԱՆԻՎԱՃԻ ԳՅՈՒՐ					
1	Դառնի վանք	Գ-ի նա ծածկն	1-19 րդ.	կանգուն	
2	Կաթողիկոսների, հայկազգայի	Վանքի առ կողմն	1214 թ.	վերջ. 2008 թ.	Կատարող՝ Արզումանյան
3	Իսապետ	Կթոլի, եկեղ-ա բնակատեղին	1182 թ.	երկրաշարժ	ԿՏԳԳ. Դատան վանքում
4	Իսապետի բնիկը	Կթոլի, եկեղ-ա մեջ	1180 թ.	ստորին կնան է	
5	Իսապետի բնիկը	Կաթողիկոսների, մեջ	1280 թ.	2 կտորն է	
6	Սյունապետ	Կրկ կաթողիկոսների-ում ամ-ից ԾԳ. դ.	1180 թ.	կանգուն	Երուշաղի կիցառածկն
7	Իսապետ	Կրկապետի մեջ	1180 թ.	ամբողջական	կանգուն
8	Սյունապետի կողմ	Կաթողիկոսների, հո-սմ կողմն	ԾԳ. դ.	ԾԳ. դ.	
9	Վանք	Կրկ ժամանակ ծածկն	ԾԳ. դ.	կանգուն	
10	Սյունապետի կողմ	Վանքի նա կողմն	հ. 4 դ.	կիսավեր	
11	Կաթողիկոսների-ում	Ար. Դառնի եկեղ-ա խորանում	Դ. դ.	ամբողջական	
12	Ծամատան	Կրկ Ար. Դառնի կողմ	1224 թ.	կանգուն	Կատարող՝ անդ Գրիգորյան
13	Իսապետ	Ծամատան մեջ	1189 թ.	ամբողջական	ԿՏԳԳ. Դառնումն Երուշաղում
14	Իսապետ	Ծամատան մեջ	1225 թ.	ամբողջական	ԿՏԳԳ. ԾԳ. Գրիգորյան
15	Իսապետ	Ծածկում մեջ	1281 թ.	ամբողջական	
16	Ցախմախի կողմ	Ծամատան մեջ	1306 թ.	ամբողջական	այլ եղև վերջ. Յեր Դավիթյանի կողմ.
17	Ցախմախի կողմ	Ծամատան մեջ	1308 թ.	ամբողջական	Մանգանի հիշ.
18	Ցախմախի կողմ	Ծամատան մեջ	1308 թ.	կիսավեր	Կրկառնի կողմ.
19	Ծամատանի կողմ	Կրկ Ծամատանի ամ-ից	ԾԳ. դ.	կանգուն	

20	20 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	ԹԳ Ռ.	ապրիլ 2008 թ.
21	21 Գլխավոր դպրոցի և 21-րդ դարի դպրոցի պահպանում	ԹԳ Ռ.	կամօրոն
22	22 2-րդ դարի դպրոցի պահպանում	ԹԳ Ռ.	կամօրոն
23	23 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	ԹԳ Ռ.	վերջ. ընթացք. 2008 թ.
24	24 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	1205 թ.	կմոց.՝ անդր Այստանս
25	25 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	1205 թ.	անթողարկում
26	26 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	ԹԳ Ռ.	կմոց.՝ անդր Այստանս
27	27 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	ԹԳ Ռ.	վերջ. ընթացք. 2005 թ.)
28	28 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	1172 թ.	անթողարկում
29	29 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	1179 թ.	անթողարկում
30	30 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	1181 թ.	անթողարկում
31	31 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	1181 թ.	անթողարկում
32	32 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	1182 թ.	անթողարկում
33	33 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	1180 թ.	անթողարկում
34	34 Երկրաբանական հիմքերի պահպանում	ԹԳ-ԹԳ Ռ.Ռ.	կյանակիր
35	35 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	1181 թ.	անթողարկում
36	36 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	1200 թ.	կտրված
37	37 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	ԹԳ-ԹԳ Ռ.Ռ.	անթողարկում
38	38 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	1207 թ.	քայքայված
39	39 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	ԹԳ-ԹԳ Ռ.Ռ.	քայքայված
40	40 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	1211 թ.	կամօրոն
41	41 Այստանս և ստորակառուցվածքի պահպանում	ԹԳ Ռ.	1-ը կամօրոն, 3-ը կյանակիր
42	42 Երկրաբանական հիմքերի պահպանում	ԹԳ Ռ.	կյանակիր
43	43 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	ԹԳ Ռ.	կյանակիր
44	44 Թատրոնի ստորակառուցվածքի և ստորակառուցվածքի հիմքերի պահպանում	ԹԳ Ռ.	կամօրոն
45	45 Երկրաբանական հիմքերի պահպանում	ԹԳ Ռ.	կամօրոն
46	46 Երկրաբանական հիմքերի պահպանում	ԹԳ Ռ.	կամօրոն

Գրեթե ողորդի արժանաբան էր. Եստիպի և Գերթոս էր. Կատուցող՝ Գրեթեյիս

47	47 Այստի	Կից շտեմարանում ամից	ԾԳ ռ.	կամպոս.Ո
48	48 Դազմառան	վանցի ամ ժայռում	ԾԸ ռ.	կամպոս.Ե
49	49 Ապսխանցի ժամուրու	ախան վերևում	ԾԹ-ԾԳ ռ.Գ	կիսասպիտ
50	50 Սառուռ	վանցից 30 մ հե	ԾԳ ռ.	կիսասպիտ
51	51 Սառուռ	վանցի հե-սալ կողմում	ԾԳ ռ.	կամպոս.Ե
52	52 Սառուռ	վանցի հե-սալ կողմում	ԾԳ ռ.	կամպոս.Ե
53	53 Խաչքար	ձառառի ամ ժամուրում	ԾԳ ռ.	ամբողջական
54	54 Սառուռ	Գարի վանցից 0,7 կմ ամ	ԾԳ ռ.	կիսասպիտ
55	55 Սառուռ	Վանք Գ-ի հե-սալ եզրին	ԾԳ ռ.	ապկոսակ
56	56 Այ. Աձձ. վանց	Դաղվանց Գ-ից 3 կմ հե-ամ	ԾԹ-ԾԸ ռ.Գ	կիսասպիտ
57	57 Այ. Աձձ. ելք	Խառնվելի կենտրոնում	1174 թ.	կամպոս.Ե
58	58 Այստի Ելք.	Խառնվելի հր-սալ ամպուրում	1178 թ.	կամպոս.Ե
59	59 Այստի արան	Խառնվելի հր-սալ ամպուրում	ԾԹ ռ. Գ.	կամպոս.Ե
60	60 Չառվի	Կից պրոմադառնի՞՞՞ ամից	ԾԹ ռ.	կիսասպիտ
61	61 Սառուռ	Խառնվելի հր-ամ կողմում	ԾԹ-ԾԳ ռ.Գ	կամպոս.Ե
62	62 Եռանգակ ելք.	Խառնվելի հր կողմում	ԾԸ ռ.	կամպոս.Ե
63	63 Չառվի	Եռանգակ ելք-ից ամ-ից	ԾԸ ռ.	կիսասպիտ
64	64 Այստի	Կից Չառվին հր-ից	ԾԸ ռ.	կիսասպիտ
65	65 Վանահր անգակ	Խառնվելի հր կողմում	ԾԹ-ԾԸ ռ.Գ	կիսասպիտ
66	66 Այստի անգակ	վանահր անգակից սալ	ԾԹ-ԾԸ ռ.Գ	ապկոսակ
